ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ

ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ – 2007

ԵՍ ԵՎ ԵՐԵՑԿԻՆԸ

«ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ»
ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գրաքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Չոբանյանի

Copyright @ 2007

By Archpriest Fr. Hovsep Hagopian

All right are reserved.
First edition – 2007
Printed in Armenia-Yerevan
For information and address
Archpriest Fr. Hovsep Hagopian
1620 N. San Fernando Blvd. apt. 15
Burbank, CA 91504, USA
e-mail: frhovsepfaith@yahoo.com

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն. Ս. Օ. Տ. Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ
Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի
Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան Թեմի



ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻՍ ԿԱՋՄԸ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

ԱՐԺ. Տ.ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔՀՆՅ. ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

«Եղերուք նմանողք Աստուծոյ իբրեւ որդիք սիրելիք. եւ գնացէք սիրով, որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ եւ զեւնումն Աստուծոյ ի հոտ անուշից» (Եփես. 5:1-2):

«Նմանեցէք Աստուծոյ, իբրեւ սիրելի զաւակներ, եւ ընթացէք սիրով, ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ եւ իր անձը մատնեց մեզի համար որպես պատարագ եւ զոհ Աստուծոյ՝ անոյշ հոտով»:

Սիրելի Տէր Հայր, հոգեկան անսահման մխիթարութիւն կ՛ապրինք մեր ձեռքերուն մէջ ունենալով Ձեր հոգիին ճշմարիտ պատկերը ներկայացնող Աստուածադրոշմ քարոզները, որոնք խորագրած էք «Հաւատքի Ոյժը» տիտղոսով: Արդարեւ, իւրաքանչիւր պատգամ ու քարոզ Պօղոս Առաքեալի Եփեսեցիներուն ուղղած նամակի ոգով կը թելադրէ բոլորիս դառնալու նմանողներ Աստուծոյ՝ որպէս սիրելի որդիներ: Ինչքան Աստուծոյ խօսքին կը թթխմորենք մեր հոգեւոր կեանքը, միտքն ու հոգին ու ամբողջ էութիւնը, այնքան աւելի կը զգանք Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ:

«Հաւատքի Ոյժը» խորագիրը կրող Քարոզգրքի Ձեր Բ. հատորը կը միտի մշակել քրիստոնեայ հաւատացեալին հաւատքի կեանքը. «Եւ գնացէք սիրով, որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ եւ զեւնումն Աստուծոյ ի հոտ անուշից»:

ՍԻրելի Տէր Յովսէփ, ջերմօրէն կը գնահատենք Ձեր Քարոզգրքի Բ. հատորի գեղեցիկ ընծայումը: Արդարեւ Դուք բանիւ եւ գործով կը բացատրէք այն ճշմարտութիւնը, որն այնքան յստակօրէն պատգամած է բոլորիս Պետրոս Առաքեալ.

«Քանզի ամենայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ եւ ծաղիկն թօթափեցաւ. Եւ բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է բանն որ ի ձեզ աւետարանեցաւ» (Ա. Պետրոս 1:24-25):

Որովհետեւ «Ամէն մարմին նման է խոտի, եւ մարդուս ամբողջ փառքը նման է խոտածաղիկի. խոտը կը չորնայ, ծաղիկն ալ կը թառամի, բայց Տիրոջ խօսքը կը մնայ յաւիտեան»: Եւ այս խօսքն է որ աւետարանուեցաւ ձեզի»:

Սիրոյ ջերմ Ողջունիւ,

Աղօթարար՝

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Առաջնորդ

Պըրպէնք, Նոյեմբեր 20, 2006

Իրենց վաղամեռիկ հորեղբոր և հարազատի ԽԱՉԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆԻ հիշատակին

Յիշատակն արդարոյն օրհնութամբ եղիցի։ Ամէն։

ՔԱՐՈԶԳՐՔԻՍ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ՝

Խաչատուր Հակոբյանը և Հովսեփիկ Հակոբյանը

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի սիրելի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում Լոս Անջելոսում հրատարակած առաջին Քարոզգրքիս *(«Տիրոջ Խորանը»)* քարոզները։

Նախ աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար։

Գրքի պատրաստության համար քաջալերանք ստացա Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանից, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Առաջնորդ Սրբազան Հորը և միշտ աղոթող եմ իր քաջառողջության ու եկեղեցանվեր գործոց հաջողության համար։ Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման գործում իր կարևոր լուման ունի Առաջնորդարանիս աշատակից, ինձ շատ սիրելի Հայկ Մաղոյանը. որին նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը։

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը։ Եթե մի կաթիլ իսկ հաջողեմ իմ այս առաքելության մեջ դա կլինի իմ վարձը։ Աղոթեցեք ինձ համար։

Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյան

Հոկտեմբեր 2007

Բրբենկ. Կալիֆորնիա, ԱՄՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց։
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային։
Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ.
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի։ (Շարական)

«Ի՞նչ է նշանակում եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը։ Կառուցել նշանակում է քարը քարի վրա դնել, աղյուս աղյուսի վրա շարել, մի գործ, որ կատարում են ճարտարապետները, որմնադիրներն ու աշխատավորները։ Սակայն բուն եկեղեցին, ճշմարիտ եկեղեցին մեր հոգիներում կառուցվեց 4–րդ դարում Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռքերով, հավատքի եկեղեցին, որը ծնունդ է տալիս նյութեղեն եկեղեցուն։ Այն եկեղեցին, որը գաղտնի մի ճանապարհ ունի դեպի երկինք։ Պատկերացրեք, թե մեր պատմության մեջ քանի հազարավոր եկեղեցիներ կառուցվեցին, և քանիսները խոնարհվեցին։ Բոլոր տեսակի թշնամիները քարը, աղյուսը, փայտը կարողացան քանդել և գտնել եկեղեցու նյութեղեն ճանապարհը; Եվ ինչպես մեր մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանն է ասել· «Եկեղեցին հայկական գաղտնի ճամբա մը ունի, որ կանցնի հոգիներեն և կերթա առ Աստված»։ «Ահա մեր անմահության գաղտնիքը, այդ գաղտնի ճանապարհը մեր թշնամիները չկարողացան գտնել։ Այդ եկեղեցին ձեր հոգիների և սրտերի

մեջն է, որը Աստծու կողմից է կառուցված» (Գարեգին Ա):

«Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի քարոզչության և կյանքի օրինակին հետևելով՝ յուրաքանչյուր հոգվիվ, եթե ուզում է սիրվել ու հասկացվել պիտի լինի իր ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և աշխատի նրա համար: Հովվությունը ժողովրդի մեջ լինելու և նրա հետ աշխատելու առաքելությունն է: «Էջմիածինը քար չէ, Էջմիածինը հիշատակ չէ, Էջմիածինը միայն սրբություն չէ, Էջմիածինը առաքելություն է»,- ասել է Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ցավ է ինձ համար այս մասին խոսել, սակայն այսօր, դժբախտաբար թե' Հայրենիքում և թե' Սփյուռքում, մեր ժողովրդի զավակներից շատերի սրտերում և հոգիներում տեղ են գտել տարբեր տեսակի մոլորեցուցիչ հոգևոր *«ուսմունք»-ներ,* որոնք խորթ են մեր պապերի սրբազան հավատքին: Մեր Տերը Հիսուս իր ժամանակին խարազանով վռնդեց ամեն անսուրբ գործ և բոլոր անմաքուր մարդկանց՝ ասելով, «*Գրված է՝ իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ· 21:13):* Նրանք, որոնք շեղվել են ճշմարիտ ճանապարհից և կամ փորձում են շեղվել, թող սթափվեն ու միշտ հիշեն, որ իրենց նախահայրերը նահատակվեցին, զոհվեցին և հայրենիքի ու հավատքի համար իրենց արյունը թափեցին, իսկ այսօր մենք ի՞նչ ենք անում, մի կտոր հացի ու մի քանի դոլարի համար նրանց թափած արյո՞ւն ենք մոռանում: Ի՞նչ պատասխան պիտի տանք մեր միլիոնավոր նահատակների սուրբ հոգիներին, երբ հատուցման ու հաշվետվության ժամանակը գա:

Մարդիկ երբեմն մտածում են, թե սուրբ լինել, նշանակում է՝ կատարյալ և մաքուր լինել: Մեր խոսքի ու կեցվածքի մեջ չպետք է թերություն լինի: Իրոք, այսպե՞ս պետք է հասկանալ սրբությունը; Բայց կատարյալ ի՞նչ կա աշխարհում: Կատարյալ մարդ կարելի՞ է գտնել: Ուրեմն սրբություն չկա՞:

Աշխարհի արժեքներով, չափանիշներով, հաճույքներով չտարվելը, նրանցից զրկվելը, կարծում ենք, որ մեզ պիտի առաջնորդեն սրբության: Ճգնավորները մեկ-մեկ այդ տպավորությունն են թողնում մեզ վրա: Բայց չէ՞ որ աշխարհն էլ Աստծու աշխարհն է, պիտի անտեսվի՞ այն, բայց չէ՞ որ մենք մի Աստված, մի Հայր ունենք, Ով առավոտից մինչև երեկո այս աշխարհի հոգատարությանն է լծված և նախախնամական Իր արարքներով պահպանում է Իր արարչագործությունը: Ի՞նչ եք կարծում Աստված այսպես վարվելով սխալվո՞ւմ է:

Իսկ հիմա կարող ենք նաև այս հարցը տալ, թե ինչո՞վ և ինչո՞ւ է Էջմիածինը սուրբ, որովհետև քարե՞րն են որոշ ձևով դասավորվել, թե պարզապես որովհետև մենք սուրբ ենք ասում; Մայր Աթոռը անկրկնելի մեկ հատիկ Սրբություն Սրբոց է: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է, որովհետև Աստված իջել է հայրենի հողի վրա, Ինքն է հայտնվել: Այնտեղ ենք մենք հանդիպել նրան: Աստված այդ տեղը ընտրել է հայ ժողովրդի հետ Իր ուխտի համար; Կարող ենք ուրիշ եկեղեցի կառուցել, ուր բնականաբար ևս Աստված կլինի, մեր հավատքով կհայտնվի, բայց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միակ այն տեղն է, ուր Աստված Ինքն է ընտրել՝ Ինքնիրեն մեզ հայտնելու, մեր կյանքը և մեզ սրբացնելու համար:

Աստվածային գործերը անքննելի են, նրանք բարձր են երկնքի պես, խոր ու անմեկնելի։ Այդպիսին էր Միածնի էջքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վաղարշապատ քաղաք։ Այդ ժամանակ բազմաթիվ ազգեր և ժողովուրդներ կային, որոնք ավելի մեծ ու հզոր էին, ինչպես Հռոմը, բայց Միածինը իջավ հայոց փոքր ժողովրդի մոտ։ Նշանակում է, որ մենք ընտրյալ ժողովուրդ ենք ու Աստված միշտ էլ մեզ օգնական և պահապան է եղել ու վստահ եմ պիտի լինի։

Մենք ունենք Սուրբ Էջմիածին, որի գլխավերևում շողում է Լուսավորչի կանթեղը, իսկ նրա ետևում փայլփլում են հայ հերոսների սրերը։ Դարեր կգան ու դարեր կանցնեն, բայց Սուրբ Էջմիածինը հավերժ կմնա, իր քարեղեն գոյությամբ ու մանավանդ՝ իր ոգեղեն զորությամբ։

Մեր եկեղեցական պատմության ընթացքում հայոց կաթողիկոսները շատ անգամներ հարկադրված թողել են Սուրբ Էջմիածինն ու գնացել ուրիշ երկրներ։ Բայց Սուրբ Էջմիածինը մնացել է հայության սրբավայրը՝ անկրկնելի և միակ ուխտավայրը, ուր ամեն հայ պիտի գնա՝ ինքն իրեն հայ քրիստոնյա զգալու։

Հաճախ մենք նայում ենք աշխարհին, հուսահատվում ենք և ասում, թե հնարավոր չէ աշխարհում հայ քրիստոնյա մնալ։ Ի վերջո որոշում ենք բոլորի պես լինել, հոսանքին հակառակ չգնալ, որպեսզի կարողանանք ապրել։ Բայց եթե մարդիկ իրենց շրջապատին նայեն, անպայման կհուսահատվեն։ Սակայն շատ կարևոր է, որ մենք նայենք դեպի ներս, դեպի մեր հոգու խորքը, մեր էությունն ու հավատը,

որտեղ Աստված անպայման ներկա է, եթե սրտով մաքուր ու արդար ենք։

Գարեգին Արք. Հովսեփյանցը 1918 թվականին իր խոսքն է ուղղում Սարդարապատի հերոսամարտին թրքական բանակների դեմ կռվի գնացող հայ քաջարի ու անձնվեր զինվորներին.

«Հայրենակիցներ, եղբայրներ և որդիներ, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր գնալ թշնամու դեմ, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ Կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունը ստանալու։ Բայց այս անգամ վտանգն այնքան մեծ է և ահավոր, որ ես ահա Ս. Էջմիածնից եկել եմ ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկեք հայրենիքը. . . փրկեք ձեր պատիվը, հայի պատիվը. . . »։

Սրբազան Հայրը այս խոսքերը ուղղել է հայ քաջարի զինվորներին, որպեսզի փրկեին հայրենիքը, հայի պատիվը։ Մեր պատիվը մեր հավատքն է։

Եկեղեցին մենք ենք և այդ պատճառով կարիք չկա փոխելու մեր ինքնությունը կամ հրաժարվելու մեր արմատներից։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայ ազգի ինքնության խարիսխն ու հենարանն է։ Հայ Եկեղեցին խորհրդանշող գերագույն խորհրդանիշը արարատանման Սուրբ Էջմիածինն է, որը հայրենի հողի ծնունդն է։ Նոր Վարդանանք՝ Սարդարապատի հերոսները իրենց համբույրը դրոշմեցին Սուրբ Էջմիածնի քարերին ու այնտեղից իրենց հետ տարան հաղթանակը դեպի Սարդարապատ։ Այսօր մեզ համար ամեն մեկ օր մահու կենաց պայքար է։ Ուզում ենք հայեցի ապրել, ամուր պահել մեր հավատքը և

տեր կանգնել մեր ազգային ավանդություններին: Եթե այս է մեր պահանջը, ապա չբաժանվենք մեր ինքնությունը խորհրդանշող հավերժական լույսի ու հավատքի, հայոց քաջերի ներշնչումի անսպառ օրրան՝ Սուրբ Էջմիածնից, որտեղից լսում ենք մեր սուրբ ու քաջ հերոսների ձայնը ներդաշնակված Աստծու ձայնի հետ:

Ապրում ենք մի աշխարհում, որտեղ մարդիկ հոշոտում են իրար, գիտությունը սրընթաց առաջ է ընթանում, մարդիկ ծուռ հայացքով են նայում իրար: Ստեղծվում են նոր տեսություններ, նոր նշանաբաններ, նոր պայմաններ, մեռնում են թագավորություններ, ծնվում նոր պետություններ, և այս արևի տակ ամեն օր, ամեն ժամ և ամեն րոպե մի բան փոխվում է, նույնիսկ մարդն է փոխվում:

Ժողովրդական առածն ասում է. «*Եթե ուզում ես ապրել երկու կամ երեք տարիներ, ցորեն ցանիր, եթե ուզում ես քսան և երեսուն տարիներ ապրել, ծառ տնկիր, իսկ եթե ուզում ես հարյուր և ավելի տարիներ ապրել, դպրոց կառուցիր, իսկ եթե ուզում ես հազար և յոթ հարյուր տարիներ ապրել, եկեղեցի կառուցիր»:* Ուրեմն այս 1700-ամյա Եկեղեցու խարիսխը, որին հենվեց հայ ժողովուրդը, դիմացավ բոլոր աղետներին ու փորձություններին, նույնիսկ ցեղասպանության, Սուրբ Էջմիածինն էր:

Երջանկահիշատակ և մեր բոլորի սիրելի Վազգեն Վեհափառն իրեն հատուկ ներքին պոռթկումով բացականչում է.

«Սուրբ Էջմիածինը այն մայր հնոցը եղավ, ուր դարբնվեցին հայոց հանճարի անճառ ձևերը և այն

գանձարանը, ուր մեկտեղվեցին այդ հանճարի լույս գոհարները:

Ս. Էջմիածինը մեր Սինա լեռն է, մեր Ակրոպոլը, մեր Ս. Պետրոսը:

Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն, նա նաև ներկա է և մեր ապագան:: Նա կենդանի է ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ բաշխվում է ու չի նվազում, ինչքան բաշխում է, այնքան շատանում է, ինչքան լույս է սփռում, այնքան շողում է: Դարեր կգան, դարերը կանցնեն, նա միշտ կբարձրանա, կլուսավորի ու կներշնչի, կյանք տալով՝ կապրի:

Ծովերը, օվկիանոսները կամ օտար ձեռքերը մեզ կարող են բաժանել, բայց Էջմիածինը միշտ մոտ է մեզ: Եվ ինչքան հեռու, այնքան մերն է նա, այնքան դառնում է խորհուրդ ու հրաշք, երազ և իսկություն, հույս ու ստուգություն» (Մտորումներ, Մոնրեալ, Կանադա, 2004, էջ 30, արտասանված 23 հունիս, 1957, Ս. Էջմիածնի Կաթողիկեի տոնին):

Սխալվում ենք նրանք, որոնք կարծում են, թե հայ ժողովուրդը պաշտում է Սուրբ Էջմիածնի քարերը: Այդ շփոթությունն էլ ունեցավ Պարսից Շահ Աբբասը: Մայր Տաճարից քարեր տարավ Սպահան՝ զարգացնելու, շենացնելու և ճոխացնելու իր երկիրը, սակայն, ինչպես ասում է հայրենի գրող Ավետիք Իսահակյանը *«Էջմիածինը կառուցված է ոչ թե հաստաբետ սյուների վրա, այլ հայ ժողովրդի հոգու և սրտի մեջ և դրա համար էլ խորտակելի չէ և անսասանելի է«:* Ուրիշ մի բանաստեղծ՝ Վահան Թեքեյանն ասել է, թե՝ *«Եկեղեցին հայկական անառիկ բերդն է հայ հոգիին«:* Եվ Էջմիածնեցի մի բանաստեղծ էլ՝ Հովհաննես Հովհաննիսյանը ավելացրել է·

Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Երկրներ ավերող, ժողովուրդներ կոտորող և ոչնչացնող, աշխարհը հրի ու սրի սարսափների մեջ դողացնող լենկթեմուրները, չինգիզխանները, շահաբասները հարգեցին և նույնիսկ խնայեցին Սուրբ Էջմիածինը՝ գլուխ խոնարհելով նրա սրբության առջև:

Պատմական դեպքեր շատ կան, դրանցից մեկն է այս.

17-րդ դարում, երբ պարսիկները օսմանցիներից գրավում են Արարատյան գավառը, շատ ավերածությունների շարքին, քանդում են նաև բոլոր եկեղեցիների զանգակատները:

Երբ քանդող բանակը մոտենում է Վաղարշապատին *(Էջմիածին քաղաքի նախկին անունը, որը ներկայումս պաշտոնապես վերականգնված է),* հրամանատարը լուր է ուղարկում զորքերի սպարապետին. *«Աշխարհի բոլոր հայերի ամենամեծ սրբարանի՝ Էջմիածնի Մայր Տաճարի առջև ենք, արդյոք պե՞տք է կործանենք նրա զանգակատներն էլ»:*

«Ոչ,- լինում է սպարապետի պատասխանը,- թողեք, որ մայրը հաճախ խոսի իր զավակների հետ, մի կտրեք նրա լեզուն»:

Պատասխանն ավելի քան անսպասելի ու զարմանալի է այդպիսի դաժան ու սարսափ ազդող դահիճների կողմից, բայց իրողություն է:

Սուրբ Էջմիածինը եղել է մայրը, իր թևերի տակ առել է իր վիրավոր զավակներին, իր վերջին շուրջառն ու վեղարը պատռել՝ սպեղանի և բալասան

դարձնելու համար իր վիրավոր ձագերին։ Նա մեր փառքն է, խիղճը, որովհետև ինչ որ ունենք քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու, մենք այս բոլորն ստացել ենք Սուրբ Էջմիածնի միջոցով;

Թուլացնել Սուրբ Էջմիածինը, նշանակում է սառեցնել Հայ Ժողովրդի ոգին։ Սուրբ Էջմիածինը կա, կմնա մեր հավատքի Սրբություն Սրբոցը։ Հայ Եկեղեցին այն միակ վայրն է, ուր մեր հոգիները թարմանում են։ Օտարները կարիք չունեն եկեղեցու շաղախին իրենց դիմագիծը պահելու համար, բայց վայ այն հայ քրիստոնյային, որը կհեռանա և կմոռանա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի ճանապարհը։

Սուրբ Մաշտոցն իր լուսաբաց աչքերով Սուրբ Էջմիածնի օրհնության լույսի ներքո տեսավ հայոց ոսկեղենիկ լեզվի աստվածատուր շնորհները և իր սուրբ աջով, որպես նոր կտակ իր ժողովրդին, գծագրեց հայատառ առաջին խոսքերը. *«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։* Նույն ինքը՝ Սուրբ Մեսրոպ վարդապետը, Սուրբ Սահակ հայրապետն ու նրանց աշակերտները, թարգանիչ մեծ սուրբերը անխոնջ տքնությամբ Սուրբ Էջմիածնի կամարների ներքո թարգմանեցին Սուրբ Գիրքը և անմար ջահը վառեցին հայ դպրության ու գրականության, հիմքը դրեցին հայ դպրոցի, որը դարձավ վահան ամրության։

Ազգիս ամենաօրհասական պահերից մեկին, երբ հայի լինելիությունն էր որոշվում, նույն ինքը՝ Վաղարշապատի Կաթողիկեն, օրհնեց սուրը Վարդանի *«Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց։* Ավարայրի դաշտում Սուրբ Էջմիածնի աղոթքով, Լուսա-

վորչի խաչվառով ու լուսաճաճանչ խաչով Սուրբ Ղևոնդ Երեցն ու նրա հոգևոր եղբայրները դուրս եկան անհաղթելի թվացող թշնամու դեմ։

Մեր պատմության հնարավորություններով լի այս օրերին դարձյալ Սուրբ Էջմիածինն է, որ հակառակ ժամանակի բազում դժվարությունների ու պատահարների, շարունակում է իր պատմական աստվածատուր առաքելությունը՝ կենտրոնաձիգ իր ներուժով հրապուրելով և խթան հանդիսանալով հայրենիքի վերաշինության ու ծաղկման աշխատանքներին։

Հայ ժողովրդի պատմության ամենահուսահատական օրերին Սուրբ Էջմիածինը հավատքի ամրոց, սխրանքի բարձունք, ոգեշնչման փարոս, հույսի աղբյուր, քաջալերության օրրան և սիրո ներշնչում դարձավ մեր ժողովրդի զավակների համար՝ ամրության կապ լինելով աշխարհացրիվ մեր ժողովորդի հատվածներ միջև։

Փառք Սուրբ Էջմիածնին, թող անսասան մնա մեր հավատքի Տունը Արարատի անմիջական շուքի ներքև, որպեսզի Լուսավորչի անմար կանթեղից ճառագայթող հավատքի ու անմահության լույսը պայծառ շողա մեր ամբողջ ժողովրդի վրա, ամենուր, ուր որ նրանք ապրում են՝ հավատարիմ Ամենայն Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին, որի հարազատ ու հավատարիմ զավակներից մեկն էլ ես եմ՝ իբրև Գևորգյան հոգևոր Ճեմարանի շրջանավարտ, և հպարտ եմ դրանով և հավատարիմ մեր նախնիների սուրբ հավատքին, Սուրբ Մեսրոպի Այբ, Բեն, Գիմ-ին և իրենց արյունը թափած մեր քաջարի հերոսների անընկճելի մարտնչումներին։ Ամեն։

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՑԸ

«Ես եմ կենաց հացը. ով դեպի ինձ գա, քաղց չի զգա, և ով ինձ հավատա, երբեք չի ծարավի»
(Հովհ. 6:35)

Մարդկային մտածողությունը հաճախ սահմանափակվում է միայն աշխարհիկ բաներով։ Հովհաննես Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Մարդը կառչել է երկրային կյանքի նյութերին»։*

Բնական է, որ առանց հացի չենք կարող ապրել։ Հացի խնդիրը արտաքնապես կարևոր է, սակայն այնտեղ, որտեղ չկա մի կտոր հաց, և աղքատության երեսից մարդիկ կեղտոտ, խոնավ ու մութ սենյակներում են ապրում, անմտություն պիտի լիներ այնտեղ բարձր քաղաքակրթության, արվեստի և գիտության զարգացման մասին խոսել. . .

«Օրինակի համար հավաքեցեք մարդկանց ցուրտ, օդից զուրկ նկուղներում և նվագեցեք Բեթհովենի Իններորդ սիմֆոնիան կամ ցուց տվեք նրանց դասական հանճարեղ նկարիչների ու բանաստեղծների մեծագույն գործերը, գոհ պիտի լինեք, եթե նրանք ձեզ դուրս չնետեն այնտեղից։ Եթե մեկը մի կտոր հաց չունի, քաղցած է, հագուստ չունի և մրսում է, այնտեղ ինչպե՞ս կարող ես բարձր ստեղծագործությունների, քաղաքակրթության և հոգևոր կյանքի մասին խոսել» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց)։

Սակայն սա կյանքի մի երեսն է, քանի որ պարզ է, որ մեր ֆիզիկական գոյության համար նյութական հացի չափ անհրաժեշտ է նաև հոգևոր հացը։

Հիսուս հիշեցնում է մեզ, որ չպետք է աշխատենք միայն նյութական սննդի համար, այլ այն հոգևոր սնունդի, որը մնում է հավիտենական կյանքում։

Հիսուս սովորական հոգևոր մի առաջորդ, մարգարե կամ վարդապետ չէր։ Նա Երկնավոր Հացն էր, որ ծնվեց Բեթղեհեմում։

Որքան գեղեցկորեն է այս ճշմարտությունը ամփոփել բազում դարեր առաջ Ընդհանուր Եկեղեցու հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերանը. *«Տեր Աստված մեր... Քո երկնավոր Հացը, մեր Տեր Հիսուս Քրիստոսին ուղարկեցիր իբրև Փրկիչ, Կյանք և Բարիք բերող ուտելիք ամբողջ աշխարհի համար՝ սրբելու և օրհնելու մեզ... (Պատարագամատույց)։*

20-րդ դարի մեր շնորհալի Հայրապետներից Գարեգին Հովսեփյանցը հրաշալի կերպով է բնութագրում հացի խնդիրը.

«Բայց ճշմարիտ է նաև, որ մարդկության երջանկությունը միայն հացից, հարստությունից կախված չէ։ Քի՞չ են հարուստ և դժբախտ մարդիկ։ Կան և հարստության թշվառ զոհեր։... Հացի խնդիրը սուրբ է աղոթքի մաս կազմող մաքրությամբ, բայց ոչ ուրիշների արյան գնով։ Ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, արեք և դուք նրանց... Ապրիր, թող ուրիշներն էլ ապրեն։ Չե՞ս կամենում, որ սոված մնաս, դու, կինդ, զավակներդ. մի ստեղծիր ուրիշի համար այդպիսի վիճակ։ Չե՞ս կամենում կեղտի մեջ կորչել աղքատության երեսից, ցնցոտիներով տեսնել կնոջդ, երեխաներիդ, մի աշխատիր այդպիսի դրություն ստեղծել ուրիշների համար։ Ոհ, ինչ կորստաբեր է լինում երբեմն հաց ձեռք բերելու սխալ ճա-

նապարհը, հազարավոր կյանքերի կորուստ, նյութական, մշակութային, բարձր ստեղծագործությունների ոչնչացում, ինչպես հացի անունով կեղեքումներն են կամ պատերազմները. . .» (Գարեգին Հովսեփյանց, Դեպի լույս և կյանք, 1994):

Կյանքում երկու տեսակ քաղց կա. ֆիզիկական և հոգեկան: Նյութական ուտելիքը կշտացնում է մեր ֆիզիկական քաղցը, բայց չի գոհացնում մեր հոգեկան ապրումները:

Հույն պատմիչներից Պլինոսը շատ ճիշտ կերպով է վերլուծում մարդկանց այս հոգեվիճակը: Նա վկայում է, թե Հռոմեական կայսրությունը, Ք. Հ. 60-ական թվականներին ապրում էր իր փառավորագույն շրջանը: Հռոմեացիները, ծանրացած ոսկով, հեշտորեն գոհացնում էին իրենց ֆիզիկական կարիքները, սակայն այդ ճոխության ու շռայլության մեջ կյանքի հանդեպ դժգոհությունը ուրվականի պես հետապնդում էր նրանց: Այդ նրանց ունեցած հոգեկան դատարկությունն էր, որը նրանք ի զուր փորձում էին լցնել աշխարհիկ վայելքներով:

Երբ մի հայացք նետենք մեր ապրած դարաշրջանի վրա, պիտի տեսնենք, որ դժբախտաբար ամենուր գտնվում են նույն այն հոգեվիճակում, ինչպիսին էր ժողովուրդը Հռոմեական կայսրության ժամանակ:

Քսանմեկերորդ դարը գերազանցել է բոլոր նախորդ դարերի ճոխությունն ու փարթամությունը: Մարդիկ դրամով լցրած իրենց գրպաններով վազում են երկրային վայելքների ու հաճույքների ետևից: Նրանք դրամը համարում են իրենց կյանքի

գլխավոր նպատակն ու դժբախտաբար դառնում իրենց վաստակած նյութի գերին:

Մեր Տերը Վերջին Ընթրիքի ժամանակ հաստատեց Հաղորդության Սուրբ Խորհուրդը, վերցրեց հացը, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին՝ ասելով. *«Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված. այս արեք իմ հիշատակի համար».* բաժակով գինին էլ օրհնեց և ասաց. *«Այս բաժակը նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված» (Ղուկաս 22:19-20):*

«Չենք ապրում ուտելու համար, այլ ուտում ենք ապրելու համար»: Երբ Հիսուս քառասուն օրեր անապատում ապաշխարությամբ անցկացրեց և չկերավ ու չխմեց, սատանան Նրան ուզեց փորձել. *«Եթե Աստծու որդի ես, այդ քարին ասա, որ հաց լինի»:* Հիսուս նրան պատասխանեց. *«Գրված է՝ «Միայն հացով չէ որ կապրի մարդ, այլ Աստծու ամեն խոսքով» Ղուկաս 4:3-4):*

Հիսուս մեզ հորդորում է, որ լսենք Իր ձայնը. *«Գնացեք աշխատեցեք ոչ թե կորստական ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար և որը մարդու որդին կտա ձեզ. . . » (Հովհ. 6:27):*

Եկեք լսենք մեր Տիրոջ ձայնը և մոտենանք Իր կենդանի հացին ու ճաշակենք նրանից, որպեսզի հավիտենական կյանք ունենանք: Ամեն:

ՀԻՍՈՒՍԻ «ԵՂԲԱՅՐՆԵՐ»-Ը

«Ո՞վ է իմ մայրը կամ ովքե՞ր են իմ եղբայրները»
(Մատթ. 12:48)

Մատթեոսի Ավետարանի 12-րդ գլխի 46-50 համարներից է վերցված այս խոսքը. *«Մինչ Հիսուս դեռ խոսքն ուղղում էր բազմությանը, ահա նրա մայրն ու եղբայրները կանգնած էին դրսում և ուզում էին խոսել նրա հետ»:* Եվ մեկն ասաց նրան. *«Ահա քո մայրն ու քո եղբայրները դրսում կանգնած են և ուզում են քեզ հետ խոսել» (Մատթ. 12:46-47):* Նա այդ ասողին պատասխանեց ու ասաց. *«Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները»:* Եվ Իր ձեռքը երկարելով դեպի իր աշակերտները՝ ասաց. *«Ահա՛ իմ մայրը և իմ եղբայրները, որովհետև, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է. նա՛ է ինձ եղբայր և քույր և մայր» (Մատթ. 12:48-50):*

Կան մարդիկ, որոնք առանց հասկանալու, փորձում են Ավետարանում գրվածները մեկնաբանել իրենց իմացածի պես: Շատ հաճախ չափազանցությունների մեջ մտնելով, նրանք կարող են լուրջ սխալներ թույլ տալ: Ինչպես օրինակ, Մատթեոսի Ավետարանի այս հատվածի մեկնաբանության հարցում: Շատերը պարզապես ընդօրինակելով, հանգում են այն եզրակացության, թե Հիսուս Սուրբ Կույսի միակ զավակը չի եղել, այլ ունեցել է նաև եղբայրներ՝ դրանով կասկածի տակ դնելով Աստվածամոր հավիտենական կուսությունը:

Տարօրինակ է, որ նման մարդիկ առանց հարցը ուսումնասիրելու, նկատի չեն առնում հենց Քրիս-

տոսի իսկ տված պատասխանը, թե՝ *«Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները»:* Իր շարունակության մեջ Հիսուս տալիս է գեղեցիկ և տրամաբանական պատասխան, թե՝ *«Նրանք են իմ մայրն ու եղբայրները, որոնք կատարում են իմ Հոր կամքը»:*

Այս խոսքերի մեջ ուշադրության արժանի է Հիսուսի պատասխանի այն բաժինը, ուր նա մատնացույց է անում Իր աշակերտներին, որոնք Իր առաջին հետևորդներն էին և որոնք տեսնողն ու լսողները պիտի լինեին Նրա կատարած բոլոր հրաշքների և ուսուցումների:

Եթե իսկապես մեր Տերը այս պարագայում մարմնավոր եղբայրներ ունենար, վստահաբար կամ պիտի թույլատրեր նրանց մուտքը կամ թելադրեր նրանց համբերել մինչև Իր խոսքի ավարտը և կամ Ինքը պիտի միանար նրանց: Սակայն տեղի չունեցաւ ո'չ մեկը և ո'չ էլ մյուսը, այլ Հիսուս պարզապես ասաց. *«Նրանք, ովքեր լսում են իմ խոսքերը, որոնք Աստծու կամքն են և գործադրում են դրանք, նրանք են իմ թե՛ մայրս և թե՛ եղբայրներս»:*

Արդյոք մի հավատացյալ կամ Սուրբ Գիրքը լավ իմացող մեկը կարո՞ղ է գտնել որևէ նշում մարգարեությունների մեջ, ուր հիշատակված լինեն սպասված Մեսիայի եղբայրներ և այլ հարազատներ ունենալու մասին;

Ենթադրենք, որ Ավետարանիչների գրածը պետք եղածի չափով հստակ չէ, հապա ի՞նչ կասեք մարգարեների մասին, որոնք ամենայն ճշգրտությամբ ու մանրամասնություններով նախագուշակել էին Քրիստոսի կյանքի բոլոր դրվագները, որտե՞ղ կա հիշատակություն Նրա… եղբայրների մասին:

Եկեք ժամանակագրական կարգով շարժվենք առաջ. Մարիամը և Հովսեփը դեպի Երուսաղեմ իրենց կատարած ամենամյա ուխտից վերադարձի ճանապարհին զգացին, թե տասներկու տարեկան մանուկ Հիսուսը իրենց հետ չէր: Ո՛չ մի Ավետարան, ո՛չ մի պատմիչ, ո՛չ մի ավանդություն չեն հիշում, թե Հովսեփի և Մարիամի զույգի զավակներից Հիսուսն էր, որ բացակայում էր:

Հետաքրքրական է ստուգել, թե Հիսուսի ժամանակակիցները ի՞նչ են վկայում այս մասին;

Մի առիթով, Հիսուս քարոզում էր Կապառնաումի մեջ, ասելով, թե *«Ես եմ կյանքի հացը» (Հովհ. 6:35),* թե՝ Ինքը երկնքից իջել է Հայր Աստծու կամքը կատարելու: Ժողովուրդը շփոթված և վրդովված դժգոհում է. «*Սա Հիսուսը չէ՞՝ Հովսեփի որդին, որի հորն ու մորը մենք ճանաչում ենք» (Հովհ. 6:42):* Եթե Հիսուս եղբայրներ ունեցած լիներ, պարզ է, որ ժողովուրդը նրանց պիտի հիշեր… Մենք նրա հորը, մորը և եղբայրներին էլ ենք ճանաչում: *«…Սա հյուսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում. և սրա եղբայրները՝ Հակոբոս, Հովսես, Սիմոն և Հուդա: Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն…» (Մատթ. 13:55-56):* Այս մեջբերումը թող այն տպավորությունը չթողնի, թե Հիսուս իրապես քույրեր և եղբայրներ ուներ: Վերևում նշված նրա եղբայրները ոչ թե Սուրբ Կույսի զավակներն էին, այլ մի այլ Մարիամի. *«…որոնք (խոսքը Յուղաբեր կանանց մասին է) Գալիլիայից եկել էին Հիսուսի հետևից՝ նրան ծառայելու համար. նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, **Հակոբի և Հովսեի մայր Մարիամը** և Զեբեդեոսի որդիների մայրը» (Մատթ. 27:55-56):*

Հիսուս, երբ խաչի վրա մահվան դատապարտվեց, համաձայն ավետարանիչների, Նրա խաչելությանը ականատես վկաները եղան Նրա մայրը և այլ կանայք:

Ո՞ւր էին Նրա կարծեցյալ եղբայրներն ու քույրերը: Երբ Հիսուս խաչի վրա մեռնելուն էր դատապարտվում, եթե եղբայրներ ունեցած լիներ, հնարավոր չէր, որ նրանք այնտեղ ներկա չգտնվեին:

Խաչելությունից առաջ, նախքան Իր հոգին ավանդելը, Հիսուս ի տես Իր սգավոր մոր, կտակի նման Իր վերջին խոսքը ուղղեց Մարիամին ու Իր սիրած առաքյալ Հովհաննեսին, որը խաչի մոտ կանգնած էր. *«Ո՛վ կին, ահա՛ քո որդին»* իսկ Իր աշակերտին պատգամեց. *«Ահա՛ քո մայրը» (Հովհ. 19:27):*

Եթե Քրիստոս եղբայրներ ունենար, արդյոք Իր մոր հոգատարությունը նրանց չպիտի՞ վստահեր:

Եվ որովհետև չուներ, Իր մորը հանձնեց Հովհաննեսի խնամքին և խնդրեց մորը, որ նրան ընդունի իր որդու նման: Այստեղ հարկավոր է ուշադրությամբ կարդալ ավետարանիչի եզրափակիչ նախադասությունը,. *«Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (նույն տեղը):*

Իր Հարությունից հետո իսկ Քրիստոս, երբ երևաց Յուղաբեր կանանց և Մարիամին, հայտնեց իր ով լինելը, չթույլատրեց նրան Իրեն մոտենալ, քանի որ վերջինս Նրան տիրոջ պարտիզպանի հետ էր շփոթել, այլ հանձնարարեց. *«Ինձ մի մոտեցիր, քանի որ Հորս մոտ չեմ բարձրացել. ուրեմն գնա դու իմ եղբայրների մոտ ու նրանց ասա, որ ես բարձրանում*

եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի իմ Աստվածը և ձեր Աստվածը» (Հովհ. 20:17):

Այս բոլոր բացատրությունները լսելուց հետո ակամայից կարող է մի հարց ծագել. ինչպե՞ս բացատրել եղբայրների պարագան,. ովքե՞ր են Քրիստոսի հիշած *«եղբայրները»:*

Քրիստոնեության առաջին դարերում, Հիսուսի բացատրության համաձայն, բոլոր նրանք, որոնք քրիստոնեական հավատքի հետևորդներ էին, իրար *«եղբայր և քույր»* էին կանչում:

Այս ոգու արտացոլումն էր Գործք Առաքելոցի մեջ և այլուր զանազան առիթներով արձանագրված. *«Եղբայրներ, Աբրահամի տոհմի որդիներ» (Գործք 13:26)* կամ *«Սավուղ եղբայր» (Գործք 9:17)* կամ *«Եղբայրները, այս բանը իմանալով, նրան Կեսարիա իջեցրին» (Գործք 9:30): (Խոսքը Սողոսի մասին է, որ վերջում դարձավ Պողոս առաքյալ):*

Հիշենք, որ Հիսուս կոչվում էր նաև Միածին Որդի: Սա հետագայում ավելացված մի նոր անուն չէր, այլ նույնիսկ առաջին դարում գործածվել է Ս. Կույսից միակ ծնունդը լինելու համար: Հովհաննես ավետարանիչն ասում է. *«Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16):*

Այս հավատը հիմնավորվեց Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու կյանքում իբրև անհերքելի իրողություն 325 թվականին կայացած Նիկիո առաջին տիեզերական ժողովի ընթացքում, որտեղ բանաձևված Նիկիական Հանգանակում, որը որդեգրվել է

Հայց. Առաքելական Եկեղեցու կողմից, կարդում ենք. *«Հավատում ենք նաև մեկ Տեր Հիսուս Քրիստոսին, Աստծու Որդուն, որը ծնվել է Հայր Աստծուց՝ իբրև Միածին…»:*

Նրա Միածին լինելը մեկ անգամ ևս հաստատում է, որ Հովսեփը և Մարիամը միայն մեկ զավակ՝ Հիսուսին են ունեցել:

Այստեղ ուզում եմ ավելացնել, որ երկու հազար տարիներ անց, այսօր էլ կան Եղբայրակցություններ և հոգևոր հաստատություններ, որտեղ մեկը մյուսին *«եղբայր և քույր»* բառերով են կանչում՝ իբրև քրիստոնյաներ:

Գեղեցիկ է *«եղբայր»* լինելը, պարզ է, որ մենք պէտք է աղոթենք հավատքով, սիրով ու ջերմությամբ լցված՝ այն հարստացնելու համար՝ օրինակ վերցնելով մեր Տիրոջից, և շարունակենք իրար նկատմամբ ունենալ այդ եղբայրական սերը՝ հոգևոր իմաստով: Արևմտահայ Գրականության տաղանդավոր բանաստեղծներից Մկրտիչ Պեշիկթաշլյանը իր *«եղբայր եմք մեք»* բանաստեղծության յուրաքանչյուր տունը վերջացնում է այսպես՝

«Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն…»:

Սիրենք իրար՝ իբրև եղբայրներ Քրիստոսով, իբրև համայնք, Եկեղեցի, Հայրենիք, ու այս եղբայրական սիրով զարդարենք մեր հոգիներն ու սրտերը: Ամեն:

ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Մեր Եկեղեցին հիշատակում է Հրեշտակապետներ՝ Գաբրիելի և Միքայելի ու բոլոր հրեշտակների տոնը;

«Ի՞նչ է նշանակում հրեշտակ, ե՞րբ և որտե՞ղ են նրանք հիշատակվում, քանի՞ տեսակ հրեշտակների դասեր կան»:

«Հրեշտակ» հայոց լեզվում նշանակում է *«Պատգամաբեր, դեսպան»:* Եբրայեցերեն՝ *«Մալախ»,* Հունարեն՝ *«Անկելոս»:* Նա 500 անգամ գործածվել է Աստվածաշնչում, շատ փոքր մասն է միայն վերաբերում մարդ պատգամավորներին, մնացածը՝ հատուկ է երկնային էակներին, որոնք առհասարակ Հին Կտակարանում հիշվում են իբրև *«Աստծու Հրեշտակ»* կամ *«Տիրոջ Հրեշտակ»* անուններով:

Հրեշտակները մարդկանց պես բանավոր էակներ են, բայց անմարմին և հոգևոր են: Սրանց բնությունը կրակի պատկերով է ներկայացված· «Աստված քամիները հրեշտակներ դարձրեց իրեն և կիզիչ հուրը՝ սպասավորներ» (Սաղմոս 103:4):

Սուրբ Գիրքը հիշում է հրեշտակների մի քանի անուններ, ինչպես օրինակ՝ «*Գաբրիել, Միքայել, Ռափայել, Սուրիել, Պատաքիել, Զազիել, Սուլիել»:*

Նրանք բաժանվում են երեք դասերի.

Աթոռներ, Քերովբեներ, Սերովբեներ.

Տերություններ, Զորություններ, Իշխանություններ:

Պետություններ, Հրեշտակապետներ, Հրեշտակներ, որոնցից են՝

ա· *«Գաբրիել»,* որ թարգմանվում է *«Աստծու մարդը» կամ «Աստծու Զորությունը»,* բոլորին ծանոթ Հրեշտակապետն է Քրիստոնեական Եկեղեցում: Ոմանք ենթադրում են, թե Գաբրիելը Աստծու անձնական ու անմիջական պաշտոնյան է, որը գործադրում է Նրա հրամանները և կարևորագույն որոշումները: Գաբրիելը *«Ճշմարիտ բարեկամն է մարդկանց»* և մանավանդ *«Քրիստոնյաների մշտական բարեկամն ու պահապանը»:* Հավատքի մեջ թույլ մարդիկ, որոնց մեջ Քրիստոս ներկա չէ, չափից ավելի վախենում են Գաբրիել Հրեշտակապետից, միշտ ահուդողով, թե ուր որ է նա կգա ու կտանի իրենց, այսինքն՝ կմեռնեն: Ճշմարիտ քրիստոնյան միշտ պատրաստ է դրան ու չի վախենում, որովհետև հավատում է հավիտենական կյանքին:

բ· Լավ ճանաչված երկրորդ Հրեշտակապետն է *«Միքայելը»,* որ նշանակում է *«Որ նման է Աստծուն»:* Ըստ ավանդության, այս խոսքը մարտական կոչը եղավ այն բարի հրեշտակների, որոնք հավատարիմ մնացին Աստծուն և պատերազմ հայտարարեցին ապստամբող հրեշտակների դեմ, որոնց ղեկավարը, Սադայելը, ինքնիրեն Աստծու տեղ էր դրել և ուզում էր Նրան հավասարվել:

«Պատմում են, որ պատմական Հայաստանի հարևան Փոյուգիայի Կոլաս քաղաքում Միքայել հրեշտակապետի անունով մի վանք կար, ուր շատ հրաշքներ էին կատարվում: Հեթանոսները Հուլիանոս Ուրացողի դրդմամբ փորձում են մոտակա մի գետ դեպի վանքը դարձնել՝ այն ջրի մեջ թաղելու համար: Միքայել հրեշտակապետը, իր գեղարդը հողին խփելով, մեծ անդունդ է բացում, ուր հոսում

են դարձված գետի ջրերը՝ նախքան վանքին հասնելը, և ուրիշ տեղից դուրս գալով՝ շարունակում են իրենց ճանապարհը: Վանքը մնում է անվնաս»

գ. Սուրբ Գրքում հիշվում է մի երրորդ հրեշտակի՝ *«Ռափայելի»* մասին, որ նշանակում է *«Աստված բժշկում է»:* Նրան են վերագրվում բարի մարդկանց աղոթքները Աստծուն ներկայացնելու գործը:

Մեր Տերը Հիսուս Քրիստոս հաստատում է հրեշտակների գոյությունը, երբ մի առիթով մանուկների մասին խոսած ժամանակ ասում է· *«Զգույշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք· ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ· 18:10):*

Հայոց պատմությունից հրեշտակների մասին շատ հիշատակություններ կան, բայց սրանցից մեզ ծանոթ կարող ենք հիշել Սուրբ Գրիգոր Լուսավորչի դեպքը: Սուրբ Գրիգոր Խոր Վիրապի փոսում մնաց տարի: Ըստ ավանդության իր բանտարկության երկար միջոցին, նա ամեն օր ընդունում էր իր պահապան հրեշտակի այցելությունը, որը նրան ուտելիք էր բերում:

Ավետարանում հաստատումներ կան, թե ամեն մարդ, նույնիսկ մանուկները, ունեն իրենց պահապան հրեշտակները: Դանիել մարգարեի գրքում էլ հիշվում է, թե նույնիսկ ամեն ազգ իր հրեշտակն ունի:

Ես հավատում եմ, որ մեր ազգն էլ իր պահապան հրեշտակները ունի, քանի որ այսքան դարեր հազար ու մի փոթորիկների միջով անցնելով շարունակում ենք մեր գոյությունը իբրև ազատ ու

անկախ մի ժողովուրդ, մեր Սուրբ Հայրենիքով ու Միածնաէջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով; Մի՞թե սա հրաշքի համազոր չէ: Եթե մենք մեր պահապան հրեշտակները չունենայինք, վաղուց ի վեր փոշիացած կլինեինք պատմության էջերում:

Մեզ մնում է չհուսահատվել, այլ գործակից և կամակից լինել բարի հրեշտակներին, որոնք ցանկանում և օժանդակում են մեր փրկության ու նրանց օրինակով մենք էլ օժտվենք հավատքի, հույսի և սիրո նոր սպառազինությամբ:

Սակայն սխալ է նրանց երկրպագելը կամ պաշտելը: Հայտնության գրքում կարդում ենք, որ երբ Հովհաննես առաքյալը փորձում է երկրպագել իրեն երևացող հրեշտակին, նա սպառնագին զգուշացնում է նրան՝ ասելով· *«Զգույշ, մի՛ երկրպագիր ինձ, որովհետև ես էլ ծառայակից եմ քեզ ու եղբայրներիդ, որոնք Հիսուսի համար վկայություն են տալիս: Միայն Աստծուն երկրպագիր» (19:10, 22:9 հմմտ· Բ· Օրինաց 6:13, Մատթ· 4:10):*

12-րդ դարի մեր մեծ Հայրապետ սուրբ Ներսես Շնորհալու խոսքերով աղոթենք·

«Բարերար Տեր, ինձ բարի հրեշտակին հանձնիր՝ հոգիս քաղցրությամբ ավանդելու համար և անխռով անցկացնելու դևերի չարությունից, որոնք գտնվում են երկնքի ներքո, և ողորմիր քո արարածներին և ինձ՝ բազում մեղքեր ունեցողիս («Հավատով Խոստովանիմ»): Ամեն:

ՀԱՎԱՏՔԻ ՈՒԺԸ

Եթե մանանեխի չափ հավատ ունենաք, և այս թթենուն ասեք՝ «արմատախիլ եղիր և տնկվիր խովի մեջ», նա իսկ կհնազանդվի ձեզ» (Ղուկ.17:5-6):

Հավատալ նշանակում է վստահել աստվածային ճշմարտություններին: Պողոս Առաքյալը շատ հստակ կերպով բացատրում է նրա իմաստը. *«Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատում և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում» (Եբր. 11:1):* Աշխարհում շատ բաներ կան, որոնք մենք չենք տեսնում, բայց հավատում ենք, որ նրանք կան. գոյություն ունեն: Նախ՝ նյութական իրականություններ, օրինակ՝ չտեսած երկրներ, քաղաքներ, մարդիկ և այլն: Երկրորդ, *բարոյական բաներ, ինչպես՝ առաքինություններ, հույսեր:* Եվ վերջապես՝ *կրոնական ճշմարտություններ՝ Աստված, հոգի, հրեշտակներ:*

Պողոս Առաքյալի համար հավատքը միայն պարզ մի վարդապետություն չէ, այլ՝ անցյալից դեպի ապագան գնացող մի պատգամ: Շատերի համար, դժբախտաբար, իրենց հավատքը նման է թռչնի բույնի, ամեն եղանակի կառուցվելու և քանդվելու համար:

Իրականությունը այն է, որ առանց հավատքի չկա նպատակ կամ մեծագործություն: Բոլոր մեծ գործերի և իրագործումների հեղինակները եղել են հավատքի մարդիկ: Առանց այդ ներքին կայծի ու ներշնչման, մարդը ինչ ասպարեզին էլ պատկանելիս լինի, կնմանվի ջրի երեսին ծփացող տաշեղների, որոնք զուրկ են նպատակից:

Սուրբ Գիրքը լի է քրիստոնեական ճշմարտություններով: Նրա մեջ մասնավորապես շեշտվում է հավատքի զորությունը, ինչպես մի կնոջ հավատքը, որը պարզ, բայց ուսանելի օրինակ է: Այս դեպքը պատմվում է Մատթեոսի Ավետարանում: Տասներկու տարուց ի վեր արյունահոսություն ունեցող մի կին ետևից մոտենալով Հիսուսին հավատքով դիպչում է Նրա հագուստի քղանցքին: Հիսուս զգում է ու դառնալով ասում նրան, *«Քաջալերվիր, դուստր, քո հավատը փրկեց քեզ, գնա խաղաղությամբ» (Ղուկ. 8:48): Ավետարանն ասում է,* թե նույն ժամին կինը առողջացավ:

Իմ քահանայական գործունեության ընթացքում Հայաստանում շատ դեպքեր են եղել, երբ հավատացյալները իրենց հավատքի շնորհիվ կարողացել են փրկել իրենց հարազատներին: Պատմեմ միայն դրանցից մեկը: Երբ Էջմիածին քաղաքի *«Սուրբ Աստվածածնի»* անունը կրող եկեղեցու Հոգևոր Հովիվն էի, հակառակ տիրող անհավատության, շատ հավատացյալներ կային, որոնք անվախ եկեղեցի էին գալիս և նույնիսկ իրենց թե նյութական և թե բարոյական օգնությունն էին բերում եկեղեցու կյանքին: Մի օր այդ հավատացյալ մայրիկներից մեկը մոտեցավ ինձ ու ասաց. *«Տեր Հայր, նոր մի թոռնիկ ունեցա, բայց երեխան ծնված օրվանից հիվանդանոցից դուրս չի գալիս, բժիշկները անընդհատ սրսկումներ են անում, բայց ես նրանց չեմ հավատում: Մի օր փախցնեմ հիվանդանոցից, քեզ կանչեմ, արի տուն և մկրտի փոքրիկին»:* Եկավ այդ օրը, ես իմ աշակերտի հետ գնացի: Երեխան ահավոր հյուծված էր, կաշին ու ոսկորն էր մնացել: Մսի ոչ մի կտոր: Ես այդպիսի

ուժեղ հավատք չէի տեսել։ Տատիկը ավելի քան վստահ էր, որ իր թոռնիկը մկրտությամբ անպայման պիտի առողջանա։ Մկրտեցի փոքրիկին և մենք սրտանց մեր աղոթքը առաքեցինք առ Աստված, որ նա առողջանա։ Անցավ որոշ ժամանակ։ Երբ մի օր, ես նստած էի իմ գրասենյակում և զրուցում էի հյուրերիս հետ, հանկարծ այս մայրիկը իր թոռանը գրկած ներս մտավ։ Թոռնիկը մի քանի ամսվա մեջ լրիվ կերպարանափոխվել էր, գիրացել և թշիկները այնպես կարմիր էին, որ ուտելդ էր գալիս։ Մայրիկը ներս մտնելով ասաց. *«Մեռնեմ Աստծու զորությանը, Տեր հայր ջան, դու փրկեցիր թոռնիկիս»։* Եվ մոտենալով անակնկալ թոռնիկին տվեց գիրկս։ Ես նախ փառք տվեցի Աստծուն, ապա շնորհակալություն հայտնեցի մայրիկին. *«Մայրիկ, քո հավատքը փրկեց թոռնիկիդ, վարձքդ կատար»։* Մայրիկը պատմեց, թե մկրտությունից հետո, երբ երեխային տարել է հիվանդանոց, մի քանի օրվա մեջ երեխան լրիվ փոխվել է դեպի լավը, բժիշկները, որոնք հույսները կտրել էին, թե երեխան երբևէ կառողջանա, զարմացել էին այսպիսի արմատական փոփոխության վրա։

Առանց կատարյալ հավատքի, չկա ոչ մարմնի և ոչ էլ հոգու բժշկություն։ Առանց հավատքի, հույսի և սիրո կյանքը դատարկություն է, հուսահատություն և մահ։ Քրիստոնյան ամեն բանից առաջ պետք է հավատք ունենա ձգտելու համար կատարելության, որովհետև հավատքն է, որ անհատին առաջնորդում է դեպի հավիտենականություն և անմահություն;

Երբ Հիսուսի Առաքյալները Նրան խնդրեցին, թե՝ *«Ավելացրու մեր հավատը»։* Նա ասաց. «*Եթե մանանեխի չափ հավատ ունենաք, և այս թթենուն*

ասեք՝ «արմատախիլ եղիր և տնկվիր խովի մեջ», նա իսկ կինազանդվի ձեզ»:

Հայ ժողովուրդը քայլեց հավատքի ճանապարհներով, երբեմն չափից ավելի փշոտ, սակայն միշտ էլ վստահ եղավ, որ ի վերջո հաղթանակ իրենն է: Վարդանանց պատերազմը սքանչելի մի օրինակ է հավատքի զորության: *«Այս հավատքից մեզ չեն կարող խախտել ոչ հրեշտակ, ոչ մարդիկ, ոչ հուր, ոչ սուր: Այլևս դու այս մասին մեզ մի հարցրու, որովհետև մեր հավատքի ուխտը ոչ թե մարդու հետ է, որ խաբվենք իբրև փոքրիկներ, այլ անխզելի է Աստծու հետ, որ չի կարելի քանդել, և հեռու գցել ոչ այժմ, ոչ հավիտյանս և ոչ էլ; հավիտենից հավիտյանս» (Եղիշե Վարդապետ Պատմիչ):*

Հավատքի կարևոր արտահայտություններից մեկն է եկեղեցի հաճախելը: *«Ինչո՞ւ պետք է եկեղեցի գնանք»,* հարցնում են շատերը, *«քանի որ տանն էլ կարող ենք աղոթել խունկ ծխել և նման բաներ»:* Այդպիսիները պետք է լավ հասկանան, որ եկեղեցին սոսկ շենք չէ, այլ մի տեղ, ուր կարող ենք բոլորս միասին աղոթել, միասին պայքարել չարի ու խավարի դեմ: Եկեղեցին չպետք է նկատի ունենանք իբրև շենք, յուրաքանչյուրիս մեջ պետք է կառուցվի ճշմարիտ հավատքի եկեղեցին, որը հնարավորություն կտա մեզ պայքարելու ամեն չարիքի ու դժբախտության դեմ: Աստծու Տունը աղոթքի Տունն է և մենք պետք է այնտեղ գնանք միասին աղոթելու, որպեսզի մեր երեխաները ճիշտ դաստիարակություն և սնունդ ստանան: Հիսուս գլուխն է Եկեղեցու և մենք էլ նրա անդամները: Որով, Աստծու Տան մեջ հոգևոր մթնոլորտում մեր երեխաները միայն կզգան իրենց իբրև

հայ քրիստոնյա ու անդամ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու։

Եկեք Պողոս Առաքյալի պես բացականչենք. *«Հավատքս պահեցի»* և մեր բարի գործերով հանգիստ շարունակենք մեր առօրյա կյանքը ի փառս Աստծու և ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու։ Ամեն։

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

«Եղերուք կատարեալք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է» (Մատթ. 5:48):

«Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»

Ամեն մարդ ձգտում է կատարյալին:

Կյանքը լի է անկատարություններով: Մարդիկ դժվարությունների և նեղությունների են հանդիպում: Կատարյալ քրիստոնյա գոյություն չունի:

Մեր Տերը միայն կատարյալ անձանց չսիրեց. *«Ես եկա, որպեսզի մեղավորին փրկեմ«: «Երկինքը ցնծությամբ է լցվում, երբ մի մեղավոր ապաշխարում է, քան իննսուն ինը»:*

Կատարելության ձգտումը շարունակական է: Հավատացյալը չի կարող ասել, թե կատարյալ դարձա, այլևս փնտրելու կարիք չկա, կարող եմ հանգստանալ:

«…Աղոթեցե՛ք նրանց համար,- ասում է Հիսուս,- *որ չարչարում են ձեզ ու հալածում, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է, քանի որ նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա: Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ է, չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Եվ եթե միայն ձեր բարեկամներին ողջույն տաք, ի՞նչ ավել բան եք անում, չէ՞ որ մաքսավորներն ու մեղավորները նույնն են անում: Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5:44-48):*

Անկարելի է Աստծու նման կատարյալ լինել; Փրկության ճանապարհն Աստծուն նմանվելու և Նրա շնորհքով մեծանալու աննահանջ հոգևոր մի քայլարշավ է, մի թռիչք է մեղքից դեպի Քրիստոս, գերությունից՝ ազատություն, խավարից՝ լույս, կորստից՝ հույս և մահից դեպի կյանք գնալու համար:

Վանքում մի սուրբ ճգնավոր կար, բոլոր միաբանները փորձում էին նրա օրինակին հետևել և, երբ աշակերտներից մեկը նրան հարց է տալիս իր սրբբակյաց կյանքի մասին, նա համեստորեն պատասխանում է. «*Տղա՛ս, ես դեռ նոր սկսեցի, նոր սկսեցի»:*

Եթե ուզում ենք առողջ և եղբայրական հարաբերություններ հաստատել մեր միջև, պայման է, որ ամեն բանից առաջ մենք տեսնենք մեկս մյուսի լավ կողմերը, հատկություններն ու արժանիքները: Եթե լավի կողքին թերություններ էլ կան, դրանք թող մի քիչ սպասեն: Մենք նախ տեսնենք լավ կողմերը:

Բայց անշուշտ, այստեղ անմրջապես մեր դիմաց է դուրս գալիս անողոք ճշմարտությունը. *Յանկանալն այլ բան է, գործադրելը՝ ուրիշ:*

Մեր առօրյա կյանքում ճանաչում ենք մարդկանց, որոնք իրենց նմանների մեջ անպայման բացասական բան են փնտրում: Նրանք նման են այն ոստիկաններին կամ դատախազներին, որոնց բնական պարտականությունն է կասկածել մարդկանց՝ փնտրելով նրանց հանցանքը: Մենք պիտի ասենք, թե դժբախտ է այն մարդը, որը անհամբեր սպասում է, թե իր նմանը երբ պիտի սխալվի: Դժբախտ է նա, եթե հիվանդագին երջանկություն է զգում այդ թերությունները բացահայտելուց: Դժբախտ է, որովհետև մարդու հոգին միայն լավ ու գեղեցիկ բաներով է

լուսավորվում, իսկ բացասական տվյալները խավար են ստեղծում հոգու մեջ: Հիսուս ասում է. *«Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7:5):* Մարդն իսկապես չար է դառնում, եթե շարունակ սխալ, կեղտոտ, տգեղ բաներ է փնտրում ու դրանից հաճույք ստանում: Ո՞վ գիտե, թերևս մենք էլ շատ անգամներ ենք գործել նույն սխալը, նախընտրել ենք մոռանալ նրանց լավ կողմերը: Ի՞նչ է նրանք լավ կողմեր չունե՞ն: Անշուշտ ունեն: Զարմանալու բան չկա, եթե նրանց մեջ գտել ենք նաև ժխտական գծեր: Աշխարհի վրա միայն անմիտ ու միամիտ մարդիկ կարող են պնդել, թե մարդը հարյուր տոկոսով մաքուր ու կատարյալ է: Ամենասուրբ մարդն անգամ հավանաբար մի մեղք կամ մի թերություն ունի: Անթերի մարդ չկա: Աստված չէր կարող ստեղծել մեկին, որը նաև լավ կողմ չունենար: Ճիշտ է կույր չենք և, բնական է, որ պիտի տեսնենք սխալներն ու թերությունները, բայց դրանից առաջ շատ կարևոր է, որ մեր աչքերը լայն բացենք, որպեսզի տեսնենք լավ կողմերը: Կարծում ենք, որ լավ է հիշել հետևյալը.

Ճիշտ է, մարդիկ երբեմն չարիքներ են գործում, ունեն սխալներ ու թերություններ, բայց այս աշխարհի վրա ինչքան լավ բան, որ իրականացվել է կամ իրականություն է դառնում, կատարվել է ու հիմա էլ կատարվում է մարդկանց լավ կողմերի ու բարի հատկությունների շնորհիվ: Ամեն:

ՍՐՏԱՆՑ ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

«Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք. կտրվի ձեզ»
(Մարկոս 11:24):

Ղուկասի Ավետարանի 18–րդ գլխի 9-14 համարներում՝ Հիսուս խոսում է աղոթքի մասին՝ պատմելով փարիսեցու և մաքսավորի առակը.

«Տաճարում աղոթքի ժամանակ, ուրիշ աղոթողների հետ երկու աչքի ընկնող անձեր էին գըտնըվում, մեկն այս կողմում, մյուսն այն կողմում, իրարից ոչ շատ հեռու: Մեկը փարիսեցի էր՝ բոլորից օրինապահ և պատվավոր մի անձ, իսկ մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին ինքն իր մասին շատ բարձր կարծիք ուներ, իբրև Օրենքը հարգող և Տաճարի տասանորդը վճարող՝ Աստծուն աղոթում էր պահանջողի պես: Եվ մատնացույց էր անում մաքսավորին, որին համարում էր հափշտակող և կեղեքիչ» (հմմտ. Ղուկ. 18:9-14):

Բոլորովին հակառակ էր մաքսավորի աղոթքը: Նա հիշում էր, թե քանի անգամ է անիրավ գործեր արել, զգում էր, որ մեղանչել է Աստծու դեմ, չէր համարձակվում աչքերը բարձրացնել՝ վախենալով, որ կհանդիպի Աստծու բարկացած հայացքին, և գետնին ընկած, աչքերը դեպի ցած՝ ձեռքերով ուժգին խփում էր կրծքին և թողություն խնդրում իր մեղքերի համար. *«Աստվա՛ծ իմ, մեղավոր եմ, ների՛ր ինձ»:* Հիսուս ասում է, որ Աստծու մոտ մաքսավորն արդարացավ և դուրս եկավ տաճարից ներված ու սրբված, այնինչ արդար երևացողը նոր մեղքի տեր եղավ

և տաճարից դուրս եկավ ավելի մեղավոր: Աստված արտաքինը չի ընդունում, այլ սրտին է նայում:

Հիսուս ասում է. *«Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. 18:14):*

Հովհան ոսկեբերան հայրապետն ասում է. *«Ինչպես ծառը չի կարող ապել առանց ջրի, այնպես էլ մարդու հոգին՝ առանց աղոթքի միջոցով հաղորդակցվելու Աստծու հետ: Եթե դու ինքդ քեզ զրկես աղոթքից, քո վիճակը պիտի նմանվի ջրից դուրս հանված մի ձկան, որովհետև ինչպես որ ջուրը ձկան կյանքն է, այնպես էլ աղոթը քեզ համար»:*

Աղոթքի զորության մասին *«Մայրական աղոթք»* անվան տակ հունական այս գեղեցիկ պատմությունը կարծում եմ ուսանելի է.

«Սուրբ Ղուկասը, որ ծագումով հույն էր, պատանեկության տարիներից տարվում է վանական կյանքով: Մորից գաղտնի հեռանում է տնից և Աթենքի վանքերից մեկում ձեռնադրվում է կուսակրոն քահանա:

Մայրը՝ Եփրոսինյան, որ այրի կին էր, խիստ վշտանում է որդու արարքից: Չդիմանալով կարոտին՝ անդադար բաղոքում է Աստծուն և խնդրում նրանից, որ իր որդուն հետ վերադարձնի: «Տե՛ր, մի՛ արհամարհիր իմ արցունքները, վերադարձրո՛ւ ինձ որդուս և թող օրհնյալ լինի Քո սուրբ անունը»: Աստված լսում է նրա ձայնը:

Վանահայր Իգումենը, որի ձեռքի տակ իր վանական կյանքն էր անցկացնում Սուրբ Ղուկասը, երեք անգամ երազում տեսնում է դառը-դառը արտասվող մի կնոջ, որն արցունքն աչքերին դիմում է նրան խնդրանքով. «Վերադարձրո՛ւ ինձ որդուս, այլապես չեմ դադարի քեզնից բողոքել Աստծուն»: Վանահայրը,

աչքի անցկացնելով իր վանականներին, հասկանում է, որ միայն Սուրբ Ղուկասն է թաքցրել իր ծննդավայրի ու եղբայրների մասին: Անմիջապես նրան կանչում է, բարկանում, որ խաբել է իրեն ու հորդորում է, որ վերադառնա իր մոր մոտ: Սուրբ Ղուկասը լաց է լինում և չի ուզում հեռանալ վանքից: Վանահայրը, ազդված նրա լացից, ասում է. «Որդյա՛կս, ես տեսնում եմ, որ մորդ աղոթքը մեծ ուժ ունի Աստծու մոտ, և այն կարող է ոչնչացնել քոնը: Գնա՛ խաղաղությամբ և հիշի՛ր, որ առանց ծնողի օրհնության ոչինչ չի կարելի ձեռնարկել»: Եփրոսինյան, իր որդուն տանը տեսնելով, չի իմանում թե ինչպես իր ուրախությունը և գոհունակությունը հայտնի Աստծուն: Գրկում է իր որդուն և փառք տալիս Նրան: Սուրբ Ղուկասը բավական ժամանակ մնում է իր մոր մոտ, սակայն ուզում է վերադառնալ վանք և խնդրում է մորից թույլ տալ իրեն գնալ: Այս անգամ մայրը սիրով տալիս է իր օրհնությունը և բարի ճանապարհ մաղթում նրան»:

Ահա ձեզ աղոթքի զորության մի գեղեցիկ օրինակ: Այս պատմությունը մի դաս է՝ ուղղված այն երիտասարդներին, որոնք երբեմն իմանալով կամ չիմանալով, ժամանակի պահանջներից դրդված, դժբախտաբար չեն լսում ու շատ ցավ են պատճառում ծնողներին՝ մոռանալով, որ առանց նրանց աղոթքի ու օրհնության երբեք էլ չեն կարող հաջողությունների հասնել: Երիտասարդնե՛ր, սիրեցե՛ք ձեր ծնողներին, որոնք երկրի վրա թանկագին գանձեր են, գանձեր, որոնք անկրկնելի են, պատվե՛ք ու հարգե՛ք նրանց, երբ կենդանի են, ապրում են և ձեր սիրո ու քաղցր խոսքի կարիքն ունեն: *«Ծնողի օրհնությունը ստացող զավակի ոտքը երբեք քարին չի դիպչի»,*-ասում է մեր ժողովուրդը:

Աղոթքը նման է հոր և զավակի մտերմիկ հարաբերության։ Ինչպես մանուկը մի բանի անհրաժեշտությունը ունեցած պահին դիմում է իր հորը՝ հույս ունենալով ու հավատալով, որ նա պիտի գոհացնի իր ցանկությունը և ուրախացնի՝ իր խնդրանքը կամ ցանկությունը կատարելով, այնպես էլ նույն ձևով մենք կարող ենք հարաբերության մեջ լինել մեր Երկնավոր Հոր հետ, ամեն մեկս մի ակնկալությամբ, սպասումով լի, որ Նա մեր նեղության եւ դժվարության ժամանակ, երբ դիմենք Նրան հիշյալ մանուկի պես, պիտի օգնի ու ուրախացնի մեզ։ 12-րդ դարի մեր նշանավոր հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալին ասում է. *«Աղոթքը հոգու սնունդն է, ձեր զավակներին աղոթք սովորեցրեք, որ վատ խոսքերին ու հայհոյանքներին չվարժվեն, որովհետև մանկության ժամանակ ծնողների խրատը ավելի է դրոշմվում մանուկների մտքում անջնջելի կերպով, որի փոխարեն պիտի վարձատրվեք»;*

Հավատքով խնդրենք՝ չկասկածելով, որ Տերը կլսի մեր ձայնը։ Հիսուս ասում է. *«Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք. կտրվի ձեզ» (Մարկոս 11:24):*

Գիտակցենք, որ այն, ինչ մեզ համար դրժվար ու անիրականանալի է, Տիրոջ համար հեշտ է, և նրա համար անկարելի բան չկա։ Աղոթքը զորացնում է մարդու հոգին, ստեղծում ամուր կապ մեր և Աստծու միջև։ Վստահենք մեր անձը Ամենաբարձրյալին։ Ամեն։

ԻՐԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Մատթեոսի Ավետարանի 13–րդ գլխի 45-46 համարներում մեր Տերը ուրիշ առակների շարքում պատմում է նաև Իրական մարգարիտի առակը:

Երանության լեռան վրա Հիսուսի առաջին քարոզով իսկ աշխարհի թշվառությունը, սուգը, ծարավն ու որբությունը մոռացող մարդիկ մի այլ ճշմարտություն տեսան: Երկնքի թագավորությունը ժառանգություն էր տրվում երեկվա խեղճ ու աղքատ, երկրի վրա թագավորներից ու աշխարհի իշխաններից միմիայն զրկանք ու արհամարհանք տեսած մարդկանց:

Հովհաննես Մկրտիչն անապատում խոսում ու նախապատրաստում էր մարդկանց սրտերը, որպեսզի ապաշխարությամբ մաքրվեն, սրբվեն և արդար ու բարի գործեր կատարեն: Հիսուսի խոստացածը, սակայն, ավելի իրական ու շոշափելի էր, քանի որ Նրան հավատացողը պիտի ճաշակեր Աստծու թագավորությունը ժառանգելու քաղցրությունը;

Ամեն ժառանգություն կամ մեծ ու փոքր հարստություն ձեռք է բերվում միմիայն զոհողությամբ, այսինքն՝ ծանր և երկարատև աշխատանքով: Անշուշտ լինում են դեպքեր, երբ մարդու *«բախտը»* բերում է ու չսպասված տեղից անակնկալ կերպով ժառանգում է մեծ հարստություն, սակայն դրանք շատ հազվադեպ են լինում, գոնե ես իմ հոգևոր ծառայության ընթացքում հիշում եմ հազիվ մեկ-երկու դեպքեր: Իրապես չես կարող հարստանալ, եթե գիշեր-ցերեկ առանց հանգստի չաշխատես: Ես կար-

դացել եմ, որ մի մեծահարուստ մարդ իր ամբողջ կյանքն անցկացրել է մի երազով՝ դառնալ միլիոնատեր: Եվ առանց հանգստի աշխատելով՝ իր կյանքի հիսուներորդ տարուց հետո հասել է իր նպատակին, սակայն, դժբախտաբար կորցրել է իր ամենաթանկագին բանը՝ առողջությունը: Բժիշկը նրան արգելել է նույնիսկ մեկ կտոր միս ուտել և շատ այլ բաներ: Կարդացել եմ նրա խոսքն ուղղված մի առողջ մարդու. *«Ամբողջ հարստությունս կտամ՝ քեզ պես առողջ լինելու համար»:* Հիսուս, երբ հավատացյալին խոստանում է Երկնքի թագավորությունը, չի մոռանում նաև շեշտել զոհողությամբ դրան հասնելու դժվարություններն ու նեղությունները:

Նա ասում է, որ՝ Աստծու թագավորությունը նմանվում է մի վաճառականի, որի գործը ապրանք գտնելն ու ծախելն էր: Նաև՝ թանկարժեք մարգարիտներ: Եվ այս վաճառականը մի մարդու մոտ տեսնում է մի թանկարժեք մարգարիտ: Ուշադրությամբ նայելուց, քննելուց հետո համոզվում է, որ այն շատ արժեքավոր է, ուզում է անպայման գնել, այնուհետև վերավաճառել, որպեսզի շատ դրամ աշխատի: Սակայն ցանկությունը քիչ էր. Վաճառականն ստուգում է իր գրպանի դրամը, քիչ է գալիս, ապա տուն է գնում, վաճառում է կնոջ ամբողջ ոսկեղենը ու դրամի վերածում, այնուհետև վաճառում է այլ զարդեր և իրեր, մի խոսքով, կարողանում է հավաքել անհրաժեշտ գումարը ու մարգարիտը գնել: Ես պատկերացնում եմ, թե նա ինչպիսի՞ ուրախություն պիտի ապրեր՝ իր առջև դնելով այդ արժեքավոր մարգարիտը (հմմտ. Մատթ. 13:46):

Առակի պատմությունը այս է.

«Աստծու կամ Երկնքի արքայությունն ընդհանուր մտքով նշանակում է, որ Աստված կատարելապես իշխում է ու ամեն ինչ կատարվում է Նրա կամքի համաձայն»,- ասում է 20–րդ դարի Սուրբ Էջմիածնի միաբանության նշանավոր դեմքերից լուսահոգի Կարապետ Եպս. Տեր Մկրտչյանը և շարունակում է. *«Եթե ավետարանների մեջ շատ տեղերում արքայությունը ներկայացվել է իբրև մի բարիք, մի գանձ, որը պետք է աշխատենք ձեռք բերել, այդ նրա համար է, որ նույնիսկ Աստծու հովանավորության տակ գտնվելը, Նրա կամքի համաձայն շարժվելը նկատվում է իբրև բարձրագույն բարիք» (Կարապետ Եպս. Տեր Մկրտչյան, «Քրիստոնության իսկությունը»):*

Հիսուս սակայն բացատրում է, որ Երկնքի արքայությունը միանգամից չի կարող տեղի ունենալ, դրա համար ժամանակ է պետք: Ինչպես որ մանանեխի հատիկի *(մանանեխը ցորենի հատիկից էլ փոքր է)* ամբողջ բույսը պարունակում է իր սկզբնական վիճակում, այդպես էլ յուրաքանչյուր քրիստոնյա, որը մանանեխի հատիկի չափ հավատք ունի, Աստծու արքայությունը ժառանգելու ու ստանալու երազն ունի իր սրտում: Եվ նա կարող է դա ստանալ եթե արժանի է անշուշտ միայն այն ժամանակ, երբ մարմինը մեռնի և մնա Աստծու սիրով ստեղծված նրա անմահ հոգին:

Հասկանալի է, որ ապրելով այս երկրային կյանքում՝ բոլորս էլ մտածում ենք ինչ-որ ձևով ապահովել մեր ընտանիքների նյութականը, որպեսզի քիչ թե շատ լավ ապրելակերպ ունենանք:

Իբրև կյանքի վաճառականների՝ մեր բոլորիս առջև միշտ էլ դրվում են թանկարժեք ու արժեքավոր մարգարիտներ և մենք մտածում ենք դրանք վաճառելով ավելի օգուտ ունենալու մասին, որպեսզի մեր ընտանիքների ապագա երջանկությունը ապահովենք, այսինքն՝ ավելի պարզ ասած, հանգիստ քնենք ու դրամական մտահոգություն չունենանք:

Բայց հարց է ծագում, արդեօք ա՞յդ է Իրական մարգարիտը, որը երկար ժամանակ փնտրում ենք: Քրիստոնյա մարդու պատասխանը պիտի լիներ. *«Անշուշտ, ո՛չ»:* Ինչո՞ւ: Ինչպես վաճառականի պարագային ասացինք, նա ամեն ինչ արեց, որպեսզի այդ թանկագին մարգարիտը գնի, այսինքն՝ կարողացավ հավաքել անհրաժեշտ դրամը, նույնը համոզված ենք, պիտի աներ մեզանից ամեն մեկը, եթե դրա անհրաժեշտությունը զգացվեր: Պատկերացրեք, եթե մենք նույնպիսի հավատքով, եռանդով ու աշխատասիրությամբ մեր ունեցած հարստությունը տրամադրենք՝ գտնելու Իրական մարգարիտը՝ Ճշմարտության Բանալին, որ է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, ապա վստահ եղեք, որ անպայման պիտի ժառանգենք Երկնային թագավորությունը: Ո՛չ մի գանձ, հարստություն և ժամանակավոր երջանկություն չեն կարող փոխարինել հավիտենական այն ուրախությանը, որը Փրկիչը Ինքն է մեզ տալիս Իր թագավորական իշխանությամբ, Իր հույսով ու, մանավանդ, մեր նկատմամբ ունեցած Իր անհուն սիրով:

Ուրեմն, իբրև հայ քրիստոնյաներ, լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, որ այս երկրային կյանքի թանկարժեք մարգարիտներն աղոթքի և հավատքի միջոցով մեր կատարած բարի ու արդար գործերն են, որոնցով միայն պիտի կարողանանք Քրիստոսին ունենալ մեր մեջ: Քրիստոսին ունենալ մեր մեջ նշանակում է, ինչպես Ինքն է ասում. *«Խաչն առնել ու գնալ Նրա հետևից»,* այսինքն՝ օգնել կարիքավորին, խնամել հիվանդին, մխիթարել սգավորին, արգելել բանտարկյալներին, բարձրացնել ընկածին, մի խոսքով՝ նմանվել Աշխարհի Լույսին, մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն:

ՀԱՎԱՏՔՈ'Վ ԲՈՒԺՎԻՐ

«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛»: Եվ մարդը առողջացավ, վեր կացավ, վերցրեց մահիճը և ման էր գալիս» (Հովհ. 5:9):

Հիսուս եկել էր ծառայելու, հրաշագործություններին և բժշկություններին ճանապարհով ցույց տալու Իր աստվածային զորությունն ու մարդկանց առաջնորդելու դեպի Լույս, դեպի Ճշմարտություն, դեպի առավել Կյանք և վերջապես, դեպի Աստված:

Երբ Նա շրջում էր գյուղից-գյուղ, ավանից ավան, հրեաների մի տոնի ընթացքում Գալիլիայից Երուսաղեմ է անցնում և այցելում Պրոբատիկե կոչվող ավազանը: Հրեաների լեզվով այն Բեթհեզդա էր կոչվում, որ նշանակում էր *«Ողորմության դուռ»,* այսինքն՝ հայտնվում էր աստվածային ողորմությունը և այդ ավազանի ջրով հիվանդները բուժվում էին: Հիվանդների, կույրերի ու կաղերի հսկա մի բազմություն, գետնին պառկած, հույսով սպասում էր ավազանի ջրերի խառնվելուն: Տիրոջ հրեշտակը երբեմն-երբեմն իջնում էր այդ ավազանի ջրերի մեջ և այն խառնում էր: Հիվանդներից նա, ով առաջինը կարողանում էր ինքն իրեն գցել խառնված ջրերի մեջ, իր բոլոր հիվանդություններն անմիջապես բուժվում էին: Պարզ ժողովրդի հավատքն էր այս:

Ահա այդ սրահներից մեկում մի անդամալույծ կար, որ երեսունութ տարի այնտեղ հիվանդ պառկած սպասում էր: Հիսուս երբ նայում է նրան, անմիջապես հասկանում է նրա վիճակը: Զգում է, որ նրա վշտահար ու մելամաղձոտ աչքերը օգնու-

թյուն էին աղերսում: Նա, Իր աստվածային խորաթափանց հայացքը շեշտակի ուղղելով հիվանդին, քաղցր ժպիտով հարցնում է նրան. *«Ուզո՞ւմ ես առողջանալ»:* Նրա անսպասելի հարցից անակնկալի եկած հիվանդը հուզված պատասխանում է. *«Տե՛ր, ոչ ոք չունեմ, որ երբ ջրերը խառնվեն, ինձ ավազանի մեջ իջեցնի և մինչ ես դանդաղում եմ, մեկ ուրիշն ինձնից ավելի առաջ է իջնում» (Հովհ. 5:7):* Հիսուս նայում է անդամալույծի աչքերի մեջ և հրամայում, *«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛»:*

Անդամալույծն առողջանում է, վերցնում իր մահիճը ու սկսում քայլել:

Մեր այս օրերի դժվարությունների ու նեղությունների մեջ, երբ մի կողմից կան տնտեսական և քաղաքական տագնապներ, ընկերային-բարոյական լուրջ հարցեր, իսկ մյուս կողմից վաղվա անորոշություններն ու հոգեկան խռովալի կացություններ, ապրուստի և այլ մտահոգություններն անդամալույծ են դարձրել մեր առօրյա կյանքը, ի՞նչը կարող է մեզ ու աշխարհին տալ կյանք, հույս և մխիթարություն, եթե ոչ Հիսուսի վերոհիշյալ խոսքը ուղղված մեզ և բոլոր դարերի անդամալույծներին. *«Վեր կացե՛ք, վերցե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»:* Բարիք գործելու համար չկա ո՛չ օր, ո՛չ ժամանակ և ո՛չ էլ սահման: Աստված ինչ որ ստեղծեց բարի էր և մարդու համար կատարեց: Ժամանակը կամ օրը միմիայն միջոցներ են բարի գործեր կատարելու համար: Հետևելով Աստծու օրինակին՝ պարտավոր ենք ամեն օր բարի գործեր կատարել: Ճշմարիտ քրիստոնյայի պարտականությունը ճիշտ

նույնը պետք է լինի, ինչպես Քրիստոսի սերը եղավ մեր հանդեպ:

Այստեղ հարց է ծագում, թե արդյոք մենք՝ իբրև հայ քրիստոնյաներ, այսօր աշխարհի աղմուկի ու բազմանվագ եղանակների միջից պիտի կարողանա՞նք տարբերել և լսել Հիսուսի մեղմ, անուշ ու կյանք պարգևող ձայնը: Լքելով մեր մեղավոր անցյալը՝ կամքի ուժը պիտի ունենա՞նք ոտքի կանգնելու, այնպես, ինչպես Պրոբատիկե ավազանի անդամալույծը խնդրեց ու հավատաց Քրիստոսին և բժշկվեց ու քաջաբար ոտքի կանգնելով առանց վախենալու բոլորի առաջ վկայեց, որ իրեն բուժողը Հիսուս Քրիստոսն է:

Այսօր՝ 21 դարեր հետո, Հիսուսի ձայնը կրկին մաքուր, հատիկ առ հատիկ իբրև մարտահրավեր սփռվում է աշխարհով մեկ ու բոլորիս կոչ է անում. *«Վե՛ր կացե՛ք, վերցրե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»:* Ամեն:

ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐԸ

«Աչքեր ունեք և չե՞ք տեսնում,
ականջներ ունեք և չե՞ք լսում» (Մարկոս 8:18):

Այս խոսքը ես վերցրել եմ Մարկոսի Ավետարանի 8-րդ գլխի 18-րդ համարից:

«Եվ աշակերտները մոռացան հաց վերցնել. Սակայն միայն մեկ նկանակ ունեին իրենց նավակի մեջ... Հիսուս իմացավ նրանց խորհուրդը և նրանց ասաց. «Թերահավատնե՛ր, ինչո՞ւ եք ձեր սրտերում խորհում, թե հաց չունեք. դեռ չե՞ք հասկանում և չե՞ք հիշում. ապշությո՞ւնն է ձեր մտքերը պատել: Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում» (Մարկոս 8:17-18):

Մի՞թե կույր են մարդկանց աչքերը, որ չեն տեսնում, մի՞թե խուլ են նրանք, որ չեն լսում: Եթե այդպես չլիներ, նրանք երբեք չպիտի բողոքեին՝ խնդրանքներ ներկայացնելով Աստծուն, որպեսզի Նա լայն բացի Իր ողորմության դռները:

Հետաքրքիր է այս պատմությունը.

«Հուլիանոս Մորիս եպիսկոպոսն ի ծնե կույր էր: Հուլիանոս անհավատ կայսրը, որը նոր հավատքի, այսինքն՝ քրիստոնության կատաղի հակառակորդ էր, ուզում էր կայսրության մեջ վերահաստատել կռապաշտությունը և հրամայում է, որ ծերունի կույրը ձերբակալվի ու պալատ բերվի:

- Մորի՛ս, ի ծնե կույր ես,- ասում է կայսրը,- երբեք հույս չունենաս, որ Աստված պիտի լուսավորի քո աչքերը և այս գեղեցիկ աշխարհը պիտի տեսնես:

- Աստված լավ կանի որ աչքերիս լույսը չբացի,- ասում է եպիսկոպոսը համարձակ կերպով,-

որովհետև այդ ձևով ինձ պիտի ազատի ձեզ նման մի անաստված ապստամբ տեսնելու մեծ ցավից»:

Երբ առաքյալները Երուսաղեմում հանդիպեցին ի ծնե կույրին, Հիսուսին հարցրեցին. *«Ռաբբի՛, մեղքը ո՞ւմն է, որ կույր է ծնվել, սրա՞նն է, թե՞ հորն ու մորը» (Հովհ. 9:2):* Հիսուս պատասխանեց. *«Ո՛չ դրա մեղքն է և ոչ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն: Եվ քանի դեռ ցերեկ է, ես պետք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց, կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել» Քանի դեռ աշխարհում եմ, աշխարհի լույսն եմ» (Հովհ. 9:2-6):*

Այս խոսքերից հետո Նա թքում է գետնին և թքից կավ պատրաստելով՝ քսում այն կույրի աչքերի վրա ու ասում նրան. *«Գնա՛ լվացվիր Սիլոամի ավազանի մեջ»:* Եվ կույրը լվացվելով սկսում է տեսնել: Քրիստոս այս հրաշքով միայն կույրի աչքերը չբացեց, այլ նրան տվեց նաև հավատքի լույսը, որը հոգու և մտքի մեծագույն զարդարանքն է:

Մի՛ եղեք թերահավատ, քանի որ առանց հավատքի մեր կյանքն աննպատակ պիտի դառնա: Հավատքն է, որ մեզ անմիջականորեն և ուղղակիորեն կապում է Աստծու հետ, ուժ տալիս, զորացնում, որպեսզի շարունակենք մեր կյանքը:

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները: Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատքի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը բարուց: 5-րդ դարի մեր թարգմանիչ վարդապետներից Եզնիկ Կողբացին ասել է. *«Լավ է կույր աչք, քան կույր մտք»*, այսինքն՝

ավելի լավ է, որ մարդ ֆիզիկապես կույր լինի, քան մտքով:

Մեր Տերը ասում է. *«Դատաստանի համար եկա այս աշխարհը, որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն և ովքեր տեսնում են, կուրանան» (Հովհ. 9:39):*

Փարիսեցիները այս լսելով նրան հարցնում են. *«Մի՞թե մենք էլ կույր ենք» (Հովհ. 9:40):*

Հիսուս պատասխանում է. *«Եթե կույր լինեիք, դուք մեղք չէիք ունենա, բայց հիմա ասում եք, թե՝ տեսնում ենք. և ձեր մեղքը ձեր մեջ հաստատ է մնում» (Հովհ. 9:41):*

Այսպիսիների մեղքն այն է, որ հակառակ նրան, որ իրենց ֆիզիկական աչքերով տեսնում են սխալը, բայց խղճով ուրանում են: Նրանք այս վիճակին են հասել, որովհետև ապրել են՝ անտեսելով Աստծու բարիքները և միշտ մեղքի մեջ են եղել:

Ամեն օր տեսնում ու լսում ենք թե' հեռուստացույցով և թե' այլ հաղորդումներից զարմանահրաշ ու նույնիսկ անհավատալի դեպքեր, ուրախ թե տխուր, գիտակցաբար կամ անգիտակից կերպով գործված, «կամա թե ակամա», ինչպես ասվում է *«մեղա»-ի* մեջ, որոնք գալիս են ապացուցելու Հիսուսի այս խոսքերը: Հարց է ծագում, թե արդյո՞ք մարդիկ դիտմամբ չեն տեսնում ու լսում Աստծու ճշմարտությունները, մաքրությունն ու արդարությունը, թե՞ իրապես հոգով կուրացել են:

Բնական է, որ մեր Տիրոջ այս արտահայտությունը մարմնական աչքերի ու ականջների մասին չէ, այլ հոգու կուրության մասին է, որն ավելի վատ ազդեցություն կարող է թողնել որևէ անհատ մարդու կյանքի վրա: *«Հոգի առավել է, քան*

զմարմին«,- ասում է Հիսուս, այսինքն՝ հոգին ավելի կարևոր է, քան ֆիզիկական մարմինը, որը, Աստծու կամքի ու հրամանի համաձայն, ենթակա է ոչնչացման: Չենք կարող միայն ապրել պարզապես ապրելու համար, պիտի ապրենք ապրեցնելու համար: Առանց ժողովրդի մասնակցության և համագործակցության չկա պայծառ եկեղեցի: Ուրեմն, Քրիստոսի խոսքը. թե՝ *«Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում»,* ուզում է մեզ հասկացնել, որ ամենօրյա մեր աղոթքով կարողանանք տեսնել Հարուցյալ Հիսուսին և զգանք Նրա ներկայությունը մեր կյանքում: Ամեն:

ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

«Մի վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում, և ոչ ցեցը՝ փչացնում, որովհետև ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մարկոս 12:32-34):

Այս աշխարհի հարստությանը սպառնում են գողերը, իսկ ցեցերը՝ վնասում են շտեմարանները, սակայն երկնքում Աստծու գանձին ոչ գող է մոտենում, ոչ ցեցն է ապականում, սիրտդ էլ հանգիստ է ու ապահով: Մարդը միշտ սրտով կապված է իր հարստությանը, նրա մասին մտածում է և վախենում սպառնացող վտանգներից:

Հոգեբանները ասում են, թե մանուկը ագահ է ծնվում: Ինչ որ տալիս ես քաշում է դեպի իրեն: Կրակն անգամ եթե տաս, առանց հասկանալու և գիտակցելու իր կողմն է քաշում:

Հիսուս ասում է. *«Ինչ որ մարդուց դուրս է գալիս, այն է, որ պղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնություն, գողություն, սպանություն, ագահություն. . . » (Մարկոս 7:20-22):*

Ագահը ոչ միայն Աստծուն և մարդկանց օգտակար չի հանդիսանում, այլ դժբախտությունն այն է, որ ինքնիրեն զրկելով ամեն բանից, անձնապես իրեն էլ օգուտ չի տալիս: Մարդիկ կարծում են, թե աշխարհը կապված է միայն նյութին և ինչքան հա-

վաքեն, կյանքը այնքան ավելի լավ կապրեն, առանց անդրադառնալու, թե մի ստամոքսից ավել հնարավոր չի լցնել:

Սողոմոն իմաստունը աշխարհի այս հարստությունը ունայնություն է կոչել, որովհետև այդ հարստությունը անցողիկ է, միակ իրավականը երկնքի գանձերն են: Աշխարհի վրա պատերազմներն ու տնտեսական տագնապները կարող են գլխիվայր շրջել նյութական վիճակը, բայց պարկեշտ ու առաքինի ապրած մի կյանք և անշահախնդիր կերպով կատարված բարեգործությունները, կարող են հոգեկան երջանկություն պարգևել:

Շատ անգամ ագահությունը մարդուն դնում է դժվար վիճակի մեջ և շատ հաճախ էլ մահվան առաջնորդում:

Պատմեմ ձեզ մի դեպք Հնդկաստանի կյանքից.

«Հնդկաստանի հարուստներից մեկը երկրից դուրս գալուց առաջ կանչում է իր սպասավորներից մեկին ու պատվիրում, որպեսզի հսկի քարայրին, որ այն չբացեն: Նրա մեկնելուց հետո, սպասավորը մտածում է, թե իր տիրոջ հարստությունը այնտեղ պահված պիտի լինի: Որով, սկսում է երևակայությամբ գեղեցիկ դղյակներ կառուցել: Պարզ է, որ այդ նպատակին հասնելու և իր երազները իրականություն դարձնելու համար, նախ պետք էր Տիրոջ հարստությունը կողոպտել: Այս մտածումով, մի մութ ու լուռ գիշեր մոտենում է քարայրին և դռան խոշոր քարը մի կողմ գլորում: Դեռևս մի քայլ չարած, մի մեծ վագր քարայրի միջից ցատկում ու բզկտում է նրան»:

Ագահությունը ընտանիքներ է քանդում։ Ոչ մի կին չի ցանկանա ագահ ամուսին ունենալ և ընտանեկան կյանքում դժբախտանալ։

Ագահ մարդը միշտ էլ դժբախտ է, հիվանդ է և երբեք էլ երջանիկ չի իր հարստությամբ, որովհետև նա մինչև իր կյանքի վերջը գերի է նրան։

Աստծու համար դրամը սակայն ամեն ինչ չէ։ Երբ փարսեցիները Քրիստոսին մոտեցան և դրամի գործածության համար հարցեր տվեցին, Նա պատասխանեց. *«Տվեք կայսրինը՝ կայսեր, իսկ Աստծունը՝ Աստծուն»։* Քրիստոսի համար, սակայն դրամը ըստ ինքյան ատելի և անպիտան մի նյութ չէր։ Նա այրի կնոջ լուման մեծագույն գանձերի համարժեք նկատեց։ Դրամը գտնող կնոջ երանությունը երկնքի արքայությանը նմանեցրեց։ Իրենց շնորհները օգտագործող ծառաների իմաստությունը գովեց և *«Ամեն մշակ արժանի է իր վարձքին»,*- ասաց։

Հայր Աստված հարուստների հարուստն է։ *«Քոնն են երկինքն ու քոնն է երկիրը, ամբողջ աշխարհը դու հաստատեցիր»,*- երգում է Դավիթ մարգարեն։ *«Երկնքի արքայության համար աղոթեցեք և ամեն ինչ պիտի տրվի ձեզ»,*- ասում է Հիսուս։

Աստված բարի է և Իր բարությունն է բաշխում մարդկանց, որպեսզի բոլորս երջանիկ ապրենք։ Մեզ տրված է խելք, իմաստություն, որ ճանաչենք երկրավոր բարիքները, օգագործելու լավագույն միջոցները։

ա. Այնպես պետք է օգտագործել բարիքները, որ նրանք ծառայեն ամբողջ ժողովրդին և արդարության ու մարդկանց արժանապատվության հիմնական սկզբունքներին դեմ չլինեն։

բ. Բարիքները պետք է գործածել մեր նմաններին օգնելու, այսինքն պետք է քաջալերել բարեսիրական ձեռնարկներին և այն կազմակերպություններին, որոնք թշվառներին, ծերերին և անօգնականներին օգնության են հասնում։

Երկու տեսակ հարստություն կա, նյութական և հոգևոր։

Նյութական հարստությունը *(դրամ, ունեցվածք կամ շարժական իրեր և այլն)* մնայուն արժեքներ չեն, ենթակա են կորստյան և ոչնչացման։

Հոգևոր հարստություն ունենալ նշանակում է աղոթքով ու հավատքով մաքրված և սրբված արդար գործեր կատարել, գործածել Աստծու տված բարիքներն ու պարգևները, օգնել կարիքսվորներին, խնամել հիվանդներին, այցելել բանտարկյալներին և հոգատարություն ցույց տալ նրանց նկատմամբ, իսկ ամենակարևորը՝ անշահախնդիր սիրով սիրել մարդկանց։ Հոգևոր հարստությունը մնայուն արժեք է, ոչ կարող են գողանալ և ոչ էլ կփչանա։ Աշխատենք լինել հոգեպես հարուստ։ Ամեն։

ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ

«Ձեր խոսքը լինի «այո»-ն այո և «ոչ»-ը ոչ , որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթեոս 5: 33:37):

Հիսուսի այս խոսքերը ահա երկու հազար տարիներից ի վեր զանգերի դողանջների նման հընչում են յուրաքանչյուրը քրիստոնյայի ականջներում: Մեր Տերը, երբ խոսում էր ճշմարտության մասին, պատվիրում էր, որ մարդիկ իրենց խոստումների մեջ չափավոր լինեն, «*այո*» չասեն, եթե մի բան չեն կարող կատարել և կամ եթե պիտի ասեն, հետո թող չհրաժարվեն իրենց ասածից, որովհետև ճշմարտախոսությունը առաքինություն է, մինչդեռ՝ ստախոսությունը՝ մեծ մեղք է: «*Ես եմ ճշմարտությունը և կյանքը*»,- ասաց Հիսուս:

Նա ճշմարտախոսությունը շատ արժևորեց ու այն նույնիսկ իր Լեռան Քարոզի նյութ դարձրեց, ուր հստակորեն խոսեց նաև սուտ երդման մասին: Ուզում եմ ամբողջությամբ մեջբերել Մատթէոսի Ավետարանի այդ հատվածը. «*Լսել եք դարձեալ, թե ինչ ասվեց նախնիներին. «Սուտ մի երդվիր, բայց պիտի հատուցես Տիրոջը այն, որ երդվել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ «Ամենևին չերդվել. ոչ երկնքի վրա, որովհետև Աստուծո Աթոռն է, ոչ երկրի վրա, որովհետև նրա ոտքերի պատվանդանն է, և ոչ էլ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել«: Այլ ձեր խոսքը լինի «այո»-ն այո և «ոչ»-ը ոչ , որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթէոս 5: 33:37):*

Հին կտակարանում կարդում ենք, թե Հիսուսի ժամանակ երդումներ և զանազան խոստումներ կատարելը սովորություն ու նույնիսկ կարող եմ ասել պահանջ է եղել: Հետաքրքիր է, որ այսօր, երբ մարդկային ուղեղը զարգացման հզոր բարձունքների է հասել, երդվելու սովորությունը դեռևս գոյություն ունի, մանավանդ պետական դահլիճներում ու դատարաններում: Մեր Տերը, սակայն Մովսիսական մի շարք հնացած օրենքների հետ, ջնջեց նաև այս երրորդ պատվիրանը. *«Ես հիմա ասում եմ ձեզ, որ երբեք չերդվեք, ձեր «այո»-ն* այո և *«ոչ»-ը ոչ պետք է լինի»:*

Այո, ճշմարտախոս քրիստոնյան բոլորովին պետք չունի երդմամբ երաշխավորելու իր որևէ խոսքը կամ խոստումը: Նրա ապրած պարկեշտ կյանքը, անբիծ նկարագիրն ու աղոթանվեր հոգին շատ ավելի վավերական են, քան որևէ երդում:

Հիսուս դատապատրեց փարիսեցիներին, որովհետև նրանք կեղծավոր էին, գործի մեջ անպարկեշտ և չունեին բարի նպատակներ: Դրա համար նրանց նմանեցեց ճերմակ գերեզմանի, որն արտաքնապես գեղեցիկ է, իսկ ներսից՝ նեխած:

Ճշմարիտ քրիստոնյան գիտի ապրել ու ապրեցնել, քանի որ կյանքը, որ Աստծո կողմից տրվել է մարդուն՝ ապրելու համար է: Մեր սրբերը և մարտիրոսները իմացել են ապրել նույնիսկ տառապանքի ու ցավերի մեջ: Այսօր երբեմն լսում եմ այսպիսի մի արտահայտություն, երբ մարդիկ մի փոքր նեղության ու դժվարության են հանդիպում. *«Մեռնեմ, ազատվեմ ամեն ինչից»:* Մեռնելն այսօր շատ հեշտ է, մանավանդ այս զարգացած ժամանակա-

շրջանում: Սակայն դժվարն ապրելն է, բարի գործեր կատալերը ու Հիսուսին նմանվելով մարդկանց օգտակար լինելը:

Աստված, սրբություն, կյանք, մահ և սիրտ խաղալիք բաներ չեն ու թեթևությամբ չպետք է առնվեն յուրաքանչյուրիս կողմից: Իրապես աշխարհում շատ ողբերգություններ և ցեղասպանություններ կկանխվեին ու տեղի չէին ունենա, եթե մարդիկ և ինչո՞ւ չէ նաև պետություններ՝ ճշմարտախոսությունից չվախենային:

Երբ Հույն մեծանուն փիլիսոփա Արիստոտելին հարցնում են, թե՝ *«Ի՞նչ է շահում ստախոսը իր սուտ երդումով»*, նա պատասխանում է. *«Նրա շահը այն կլինի, որ մարդիկ այլևս չեն հավատա իրեն, երբ իրական ճշմարտությունը խոսի»:*

«Այո»-ի և «ոչ»-ի խնդիրը հոգեբանության մեջ ևս կարևոր է: Շատ մարդիկ անտեղի փափկանկատություն են ցույց տալիս և հաճախ էլ քաղաքավարության զոհ են գնում: Ուզում են մի խնդրանք մերժած լինել՝ *«ոչ»* ասելով, ցանկություն են ունենում *«այո»* չասել, բայց անկարող են: Սրանից շատ տարիներ առաջ Էջմիածին քաղաքում մի մարդ էի ճանաչում, որ կարևոր պաշտոն ուներ: Այս մարդը սիրում էր խոստանալ՝ երբեք որևէ մեկին *«ոչ»* չէր ասում. ուրախացնում էր ում որ խոստանում էր, բայց հետաքրքիրն այն էր. երբ չէր կատարում իր տված խոստումը՝ ինքն էր ուրախանում: Դժբախտաբար այս սովորությունը կարծես մի տեսակ նրա կյանքին մաս կազմող երևույթ էր դարձել: Իմ կարծիքով ավելի լավ է այսպիսի մոլությունից հեռու մնալ՝ «ստախոս» անունը չվաստակելու համար:

Աստծո կողմից ամեն մարդ օժտված է զանազան շնորհներով և կարողություններով: Սա անժխտելի է: Մեր Տերը Հիսուս, երբ խոսում էր այս մասին, խրատում էր և հույս էր տալիս մարդկանց, ասելով. *«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, կարող եք նույնիսկ լեռները շրջել»:* Աշխարհի ստեղծման օրից Աստված մարդուն տվել է ազատություն և անսահման իշխանություն բնության վրա: Եվ բացի սրանից ամեն մարդ իշխանություն ունի նաև ինքն իր մարմնի, հոգու, սրտի ու մտքի վրա: Ստուգված է և ճշտված, որ մարդը իր ներքին ու արտաքին կարողությունների մեկ տասանորդն իսկ անգամ չի գործածում և նույնիսկ հաճախ այն էլ սխալ է օգտագործում և կամ հակառակը՝ դեպի չարն է գործածում:

Մատթէոսի Ավետարանում Հիսուս պատմում է նաև երկու եղբայրների մասին: Որով ավագ որդին խոստանում է դաշտ գնալ և օգնել իր հորը, բայց չի գնում ու խաբում է նրան: Իսկ կրտսեր որդին իր հորը ասում է *«չեմ գնա»*, սակայն զգալով, որ հայրը ծեր է և պետք ունի իր օգնության, մոռանում է իր ասածը ու գնում է աշխատելու նրա հետ միասին *(Մատթ. 21: 28-31):*

Իրապես իր խոսքի տեր եղող մարդը քաջ է, անկեղծ ու վստահելի անձնաւորութիւն է:

Ես կարծում եմ առողջ և երջանիկ կյանքի համար մի մնայուն միջոց կա. մեր սրտերում ու հոգիներում աճեցնել դրական, բարի և գեղեցիկ խորհուրդներ ու ցանկություններ և մանավանդ հեռացնել մեզանից ամեն տեսակի ժխտական զգացմունքներն ու մտածմունքները: Մի խոսքով կյանքի նկատ-

մամբ լինենք միշտ լավատես: Հիշենք մեր սիրելի աշուղ Ջիվանու հայտնի երգի խոսքերը. *«Ձախորդ օրերը ձմռան նման կու գան ու կերթան, վհատելու չէ վերջ կունենան, կու գան ու կերթան»:*

Մեր երեխաները պետք է փոքր տարիքից ծանոթանան աստվածային ճշմարտություններին: Բոլորս միասնաբար պիտի ցանենք նրանց սրտերում և հոգիներում՝ բարության, գեղեցիկի, կյանքի նկատմամբ լավատեսության սերմերը և, որ ամենակարևորն է՝ զորացնեք նրանց մեջ հավատքն ու քրիստոնեաբար ապրելու ոգին: Միայն այս ձևով պիտի կարողանանք առողջ, գիտակից, հավատքով, սիրով, պարկեշտ նկարագրի տեր և մաքրությամբ լի մի սերունդ ունենալ: Ամեն:

ԵՍ ԵՄ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ

«Ես եմ աշխարհի լույսը, ով որ իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ.8:12):

Հովհաննեսի Ավետարանի 3-րդ գլխի 19-21 համարներում Հիսուս ասում է. *«Եվ դատաստանը այսպե՛ս իսկ է. որ լույսը աշխարհ եկավ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև իրենց գործերը չար էին. որովհետև, ով չարիք է գործում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան: Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստուծով կատարվեցին» (Հովհ.3:19-21):* Լույսի ու խավարի մասին Աստվածաշունչը Ծննդոց գրքի 1-ին գլխի 4-րդ համարում այսպես է ասում. *«Աստված տեսավ, որ լույսը լավ է, Աստված լույսը բաժանեց խավարից» (Ծննդոց 1:4):* Ինչպես տեսնում եք, հենց աշխարհի սկզբից Աստված լույսը խավարից բաժանեց, քանի որ լույսը բարի էր:

Առակաց գրքում ասվում է. *«Արդարների ճանապարհները նման են ծագող լույսի, որ առաջնորդում և լուսավորում է նրանց, մինչև որ օրը լրիվ լուսավորի: Ամբարիշտների ճանապարհները նման են խավարի, և նրանք չգիտեն, թե ինչպես պիտի սայթաքեն» (Առակ. 4:18-19):* Հիսուս ճշմարիտ լույսն էր; Նա աշխարհի մեջ էր և Նրան չճանաչեցին: Հովհաննեսի Ավետարանի 8-րդ գլխի 12 համարում Հիսուս ասում է. *«Ես եմ աշխարհի լույսը, ով որ իմ*

հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»: Իրապես էլ Հիսուսի *«լույս»* լինելը առաքյալներին հայտնվեց Թաբոր լեռան վրա, երբ Նա այլակերպվեց և արեգակից էլ *«լուսավոր»* եղավ: Նրա *«լույս»* լինելը մի անգամ ևս հռչակվեց Սուրբ Հարության օրը: Սուրբ Պողոս Առաքյալը Դամասկոսի ճանապարհին *«լուսավոր»* Քրիստոսին տեսավ ու դարձի եկավ: Նույնիսկ Եսայի մարգարեն հազարավոր տարիներ առաջ հայտարարեց, որ *«լույս»* պիտի ծագեր աշխարհի վրա: Հայ ժողովուրդը Հիսուսի *«լույս»* լինելը պաշտամունքի և սիրո առարկա է դարձրել: Մեր երկրի առաքյալներին ու ավետարանիչներին «լուսավորիչ» ենք կոչել: *«Իջավ Միածինը Հորից և փառքի լույսը Նրա հետ»* շարականն ենք երգել ու մինչև այսօր էլ երգում ենք: Մեր շարականագիրները գրել են. *«Լույս, Արարիչ Լույսի»:*

Մեզ ասում են, որ մենք կրակապաշտ ենք, եկեղեցիներում և նույնիսկ մեր տներում մոմ ենք վառում: Ավետարանում չի ասված, որ աղոթելիս մոմ վառենք: Կրակին պաշտելը հեթանոսների սովորությունն է: Մոմ վառելը բացարձակապես չի նշանակում կրակապաշտ լինել: Այդ գեղեցիկ սովորությունը գալիս է հին ժամանակներից, և նպատակն էլ տարբեր է: Առաջին շրջանում քրիստոնյաները անընդհատ հալածանքների էին ենթարկվում, ստիպված քարայրներում և գերեզմանախորշերում էին հավաքվում աղոթելու, որտեղ մշտապես մութ էր. լուսավորելու համար մոմեր էին վառում: Երկար ժամանակ նրանք օգտագործեցին այս միջոցը լույս ունենալու համար, որը կարծես սովորություն դար-

ձավ ու դարեր հետո մեզ հասավ: Այսօր մենք կարիք չունենք մոմերով մեր եկեղեցիները լուսավորելու, քանի որ ժամանակակից սարքավորումների միջոցով էլեքտրականություն ունենք, սակայն այդ բարեպաշտ սովորությունը պահում ենք՝ դրա մեջ ուրիշ ավելի կարևոր ու գեղեցիկ իմաստ տեսնելով: Վառվող մոմը առաջին հերթին մեզ համար խորհրդանշում է Քրիստոսին և Նրան հետևողներին: Հիսուս Ինքը չհանգչող մոմ էր. այդ մշտավառ մոմից միլիոնավոր ուրիշ մոմեր վառվեցին և այսօր էլ շարունակվում են վառվել: Մեր ժողովուրդն էլ դարեր առաջ վառեց իր մոմը Հիսուսով ու մինչև այսօր անշեղորեն վառված է պահում այդ լույսը իր հոգում և սրտում: *Փոքրիկ մոմը խորհրդանշում է մեր հավատի լույսը:*

Հաճախ սիրտս ցավում է ու ինքս ինձ հարցնում եմ, թե մենք այսօր ինչո՞վ ենք տարբերվում Հիսուսին խաչ բարձրացնողներից, երբ նախանձով ենք լցվում, քննադատում ենք մեզ շրջապատողներին, օգնության փոխարեն երես թեքում կարիքավորներից ու կարոտյալներից, ներողամտության փոխարեն վրեժ լուծում ու մեկս մյուսին հայհոյում ենք: Այս բոլորը կատարելով՝ արդյոք անուղղակիորեն մենք էլ Քրիստոսին խաչ չե՞նք բարձրացնում: Հիսուսին խաչել նշանակում է լույսը խավարեցնել և բարու փոխարեն չարն ընտրել:

Հավատքի կարևոր արտահայտություններից մեկն էլ եկեղեցի այցելելն է: Եկեղեցի գալը յուրաքանչյուր հայ հավատացյալի համար կարևոր և անհետաձգելի պարտականություն է, որովհետև Եկեղեցին բոլորիս հոգեպես սնում ու զինում է՝ պայքարելու համար չարի ու խավարի դեմ: Եկեղեցին

սիրել չի նշանակում շենքը սիրել, այլ այդ շենքում մատուցված Սուրբ Պատարագը, շարականները և երգողողությունը սիրել. *«Բավական չէ մտածել նյութական շենքի մասին, այլ պետք է մտածել նաև բարոյական ու հոգեկան շենքի վերանորոգության մասին»,- ասում է մեր հայրապետներից մեկը:*

Ոմանք կարող են այս հարցը տալ, թե՝ *«Ինչո՞ւ մեղքի խավարում բնակվող մարդիկ մերժեցին ու մինչև օրս դեռ մերժում են Հիսուսին՝ ճշմարտության Լույսին ու Արդարության Արեգակին: Ի՞նչն է պատճառը»:* Ավետարանում հստակ կարող ենք ստանալ սրա պատասխանը: Այն մարդիկ, որոնց գործերն ու ցանկությունները հակառակ են Աստծու կամքին, չեն կարող դիմանալ Հիսուսի խոսքերից ճառագայթող ճշմարիտ լույսին: Ամեն:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇՔԸ

«Գինի ոչ ունին»
«Գինի չունեն» (Հովհ.2:4):

Գալիլիայի Կանա քաղաքի համեստ տներից մեկում մի հարսանիք կար: Հիսուս նույնպես հրավիրված էր Իր մոր ու աշակերտների հետ; Հարսանեկան ուրախության կեսին գինին պակասում է: Հիսուսի մայրը մոտենում է Նրան ու ասում. *«Գինի չունեն»*: Հիսուս պատասխանում է. *«Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՞վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. 2:3-4):*

Հակառակ Հիսուսի այս պատասխանին՝ մայրը թելադրում է սպասավորներին կատարել Նրա ասածը: Հիսուս հրահանգում է ջրով լցնել քարե այն վեց ամանները, որոնք, ըստ հրեական ավանդույթի, դրված էին տան մի անկյունում: Սպասավորներն այդ ամանները բերնեբերան լցնում են ջրով և տանում են սեղանապետին (թամադային): Երբ սեղանապետը համտեսում է գինու փոխված ջուրը, զարմանում է ու փեսային ասում. *«Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, և երբ հարբած են, այն ժամանակ, վատը: Իսկ դու ընտիր գինին մինչև հիմա պահել ես» (Հովհ. 2:10):*

Պատմությունն այստեղ վերջանում է: Հովհաննես ավետարանիչը միայն ավելացնում է. *«Հիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպես սկիզբը նշանների և հայտնեց փառքը, ու նրա աշակերտները հավատացին նրան» (Հովհ. 2:11):*

Առաջին ընթերցումից թվում է, թե սա մի պարզ պատմություն է, բայց հիմա կհամոզվեք, թե ինչ հարուստ և խոր իմաստ ունի այն;

Կանա քաղաքում կատարված այս հարսանիքը մեր մեջ արթնացնում է որոշ մտածումներ և ճշմարտություններ:

Առաջին հերթին հրաշքը տեղի է ունենում Կանա քաղաքի համեստ մի ընտանիքում հարսանիքի ընթացքում: Այստեղ երկու կարևոր կետեր կան.

ա. Հիսուս առաջին հրաշքը կատարում է պարզ մի ընտանիքում՝ մի խումբ հարսնևորների ներկայությամբ: Նա Իր փառքն էր ցույց տալիս ընտանեկան հարկից ներս՝ փորձելով շեշտել Աստծու ներկայությունը և ընտանիքի սրբությունը:

բ. Հրաշքը կատարվում էր հարսանեկան մի ուրախության ընթացքում: Հիսուս աշխարհ չեկավ մարդկանց զրկելու աշխարհիկ ուրախություններից, ընդհակառակը, Ինքն էլ մասնակից եղավ նրանց, մի տարբերությամբ միայն թերևս, որ Նա այս երկրավոր ուրախությունը նկատում էր որպես նախապատրաստություն հավիտենական մի մեծ ճաշկերույթի:

Շատերը Հիսուսին համարում են խստակյաց ու ճգնավորական կյանքի քարոզիչ և այդ մատնանշելով՝ փորձում են Նրա վարդապետության մեջ տեսնել մարդկային կյանքի ուրախությունների ու վայելքների ժխտումը: Անշուշտ, Հիսուսի ուսուցումները հիմնված են աստվածային հավիտենական ճշմարտությունների և մեր բարոյականության վրա: Նա չափավորության կոչ էր անում Իր հետևորդներին ոչ միայն ուրախության, այլ նաև վշտի ու

տառապանքի մեջ: Իր երեք տարվա առաքելության շրջանում Հիսուս Իր կյանքի օրինակով ցույց տվեց, որ Իր աշակերտների հետ ընդառաջելով հրավերներին՝ Նա մասնակից է դառնում ուրախություններին և տխրություններին, որոնք հարմար առիթներ էին Իր հետևորդներին բացատրելու հավիտենական հրավերի կարևորությունը:

Դժվար է ենթադրել փեսայի ու հարսի ով լինելը, մանավանդ որ ավետարանիչը չի խոսում այդ մասին, սակայն Հիսուսի, Նրա մոր և աշակերտների ներկայությունից կարելի է ենթադրել հարսնատիրոջ ու Հիսուսի ընտանիքի միջև մոտավոր բարեկամական կապի մասին: Այս ենթադրությունը ավելի հատկանշական է դառնում հարսանեկան ուրախության նկատմամբ Հիսուսի մոր ցուցաբերած նախանձախնդրությունը, երբ հանկարծ հարսանիքի մի ուրախ պահին գինին վերջանում է: Նա խնդրում է Որդուն ցուց տալ Իր աստվածային զորությունը: Հակառակ մորը տված բացասական թվացող պատասխանին, թե՝ *«դեռևս ժամանակս չի հասել»* , Հիսուս կատարում է ջուրը գինու փոխակերպելու հրաշքը:

Մեր Տիրոջ *«դեռ ժամանակը չի հասել»* խոսքը չպետք է այնպես հասկանալ, թե Նա նոր էր սկսում Իր առաքելությունը: Նա արդեն իսկ սկսել էր Իր առաքելութունը, հավանաբար խոսքն այստեղ հավիտենական կյանքի և այդ ընթացքում Նրա տալիք գինու շնորհքի բաշխման մասին է: Վեց մեծ ամաններում դրված ջրի՝ գինու փոխակերպումը խորհրդանիշն է Իր առատ շնորհների բաշխման: Գինին մարդկային կյանքում ուրախության խորհրդանիշն է: Հիսուս աշխարհ եկավ մարդկանց հաճույք

և ուրախություն բերելու, դրա համար պակասած գինու փոխարեն նոր և ընտիր գինի տվեց հարսնևորներին, որպեսզի նրանց ուրախությունը չընդհատվեր:

Կանայի հարսանիքի ընթացքում կատարված հրաշքը խորքում մի կոչ է՝ ուղղված յուրաքանչյուր քրիստոնյայի, իր կյանքը ներդաշնակելու Քրիստոսի կտակ թողած կյանքի հետ: Մանավանդ այսօր, 21-րդ դարի կյանքի պայմաններում, ավելի հրամայական է դառնում, որ մեզանից ամեն մեկը մի պահ վեր բարձրացնի իր հայացքը՝ տեսնելու համար աստվածային ճշմարտությունները, որոնք հեշտությամբ կարող են մեր կյանքը Քրիստոսի հրաշագործ գինու նման կերպարանափոխել և վերածել շնորհքի տաճարի ու աստվածային մշտատև ներկայության մեր մեջ:

Հարսանիքի առաջին րոպեներին հյուրասիրված գինին, որ ըստ սեղանապետի *«հասարակ»* էր, կարծես խորհրդանիշն է աշխարհիկ, ժամանակավոր և երբեմն հրապուրիչ այն երևույթների, որոնցով մարդիկ ուզում են իրենց ժամանակը անցկացնել, իսկ *«ընտիր»* գինին՝ հյուրասիրված Հիսուսի կողմից, աստվածային ճշմարտությամբ արմատավորված կյանքն է, որ վեր է ամեն տեսակի խաբուսիկ երևույթներից ու վայելքներից: Միայն Քրիստոսով ու Իր հյուրասիրած շնորհք-գինով է, որ մարդն ունենում է իսկական կյանքի վայելք և աստվածային ճշմարտության կատարյալ գիտություն:

Ուրեմն, մոտենանք Հիսուսին և խմենք Նրա քաղցրահամ գինուց, որ մեզ պիտի առաջնորդի դեպի մաքրություն, ազնվություն և արդարություն: Եվ այդ գինով արբած՝ մեր Տիրոջ շնորհներով լցնենք մեր սրտերն ու հոգիները, սիրով ու աղոթքով առ Աստված ուղղենք մեր խնդրանքները, որպեսզի Նա օգնի մեզ հավատքով շարունակելու մեր կյանքը՝ միշտ փառք ու պատիվ ընծայելով Ամենաբարձրյալին: Ամեն:

ԾԱԾՈՒԿ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները…» (Մարկ. 12:43):

Մարկոսի Ավետարանի 12-րդ գլխի 41-44 համարներում Հիսուս խոսում է այրի կնոջ լումայի մասին:

Ավետարանն ասում է, թե Հիսուս մի փոքր հանգստանալու համար լուռ կանգնած էր տաճարի մոտ՝ գանձատան առջև և դիտում էր եկող-գնացող ուխտավորներին, որոնք ուխտավորության հատուկ պարտականությունը կատարելով, գալիս էին գանձանակի մեջ գցելու իրենց դրամական նվերները:

Գանձանակը հաստատվել էր Մովսես մարգարեի կողմից: Հիսուսի ժամանակ Հերովդեսյան տաճարի գանձանակը դրսի կողմից տասներեք տարբեր անցքեր ուներ: Ամեն մի անցքը հատկացված էր տաճարի կամ արարողությունների որոշակի կարիքների համար և ուխտավորը իր կարողության չափով յուրաքանչյուրի մեջ իր նվերը պիտի գցեր:

Բոլորի հետ միասին մոտենում է մի աղքատ, խեղճ ու տառապյալ այրի մի կին, ձեռքին ունենալով միայն երկու լումա, որը հրեական երկու գրոշն էր, շատ փոքր մանր դրամ, այստեղի դրամով կարող է համապատասխանել մոտավորապես քսանհինգ սենթի և այն նետում է գանձանակի մեջ:

Այս խեղճ ու համեստ օրինապահ այրի կնոջ արարքը մեծ տպավորություն է թողնում Հիսուսի վրա: Նա պարտավորված չէր նվեր տալու, բայց

հարգելով օրենքը իր պարտքը կատարելու գիտակցությամբ տալիս էիր վերջին գումարը: Առաքյալները նկատում են Հիսուսի դեմքի գոհունակ ժպիտը: Մեր Տերը նրանց Իր մոտ կանչելով ասում է. *«Դուք տեսնում եք այս նվիրատուներին, թերևս ձեր ուշադրությունը գրավեցին և ձեզ գոհունակություն պատճառեցին: Սակայն դրանք այնքան էլ մեծ արժեք չունեն, որովհետև նրանք ոչ թե զոհողություն արեցին, այլ իրենց ավելացածից Աստծուն նվիրեցին: Նրանց հետ մի խեղճ կին եկավ և երկու լումա գցեց: Այդ խեղճ կինը, թերևս իրեն զրկեց անհրաժեշտ սնունդից, իր կյանքից զոհողություն արեց, որպեսզի տաճարին նվիրաբերելով կատարի գանձանակի օրենքը: Ի՞նչ իմանաս, թերևս դա նրա մի օրվա ուտելիքի դրամն էր, որից նա իրեն զրկեց: Ահա ճշմարիտ նվիրատվության մի օրինակ, Աստծուն հաճելի մի գործ, չքնաղ ու զորավոր մի առաքինություն: Աստծուն մատուցած նվերի արժեքը ոչ թե գումարի նյութական չափն է, այլ զոհողության…»:*

Մեր Տերը չի կարողանում տանել կեղծավորությունը, *«քանի որ ասում են և չեն անում»* (Մատթ. 23:3) և հիանալի կերպով տեսնում էր հրեա ղեկավարների վարած հակասական կյանքը. դրսից՝ սուրբ, արդար, օրինապահ, իսկ ներսից՝ կեղծ, անօրեն և օրինազանց: Մեր ժողովուրդը հրաշալի կերպով է բնութագրել այսպիսի մարդկանց. «Դրսում՝ քահանա, ներսում՝ սատանա»:

Հիսուսի խրատն է. *«Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց… Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը,*

որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի...» (Մատթ. 6:1-4):

Բարի գործ կատարող մարդու մեջ Աստված է բնակվում:

Որպեսզի ավելի հասկանալի լինի, թե նվեր տալն ինչքան կարևոր է, բերենք կուժի օրինակը. երբ այն լիքն է ջրով, այլևս կարիք չկա լցնելու, իսկ երբ դատարկվում է, նորից ենք լցնում: Նույնն է նաև մարդու պարագային, երբ նա պահում է Աստվածային շնորքները ու չի վերադարձնում Աստծուն, հետ չի ստանում, եղածն էլ է կորցնում, իսկ երբ նվիրում է, Աստված նրան առատորեն վարձատրում է: Աստվածաշնչի Դ-րդ Թագավորության գրքում պատմված դեպքը դրա վառ ապացույցն է.

«Մի այրի կին, որի ամուսինը սովի ժամանակ շատ մարգարեների էր կերակրել, գալիս է Եղիսե մարգարեի մոտ ու ասում, թե իր ամուսինը մեռել է և պարտատերերը եկել են, որպեսզի իր երկու որդիներին պարտքի դիմաց իբրև ստրուկ տանեն իրենց մոտ: Մարգարեն նրան հարցնում է, թե տանը որևէ բան ունի՞ և իմանալով, որ միայն օծելիք յուղ ունի, հանձնարարում է, որ գնա հարևաններից ինչքան դատարկ աման ունեն վերցնի, ապա իր զավակների հետ մտնի տունը, դռները փակի ու լցնի բոլոր ամանները: Կինը այդպես էլ անում է: Բոլոր ամանները լցվում են յուղով, մինչև որ որդիները հայտնում են իրենց մորը, որ այլևս ամաններ չկան: Այդ ժամանակ յուղը դադարում է շատանալուց (հմմտ. Դ. Թագ. 4:1-6): Այրի կնոջ ամուսինը բարի գործ էր կատարել, իր ունեցվածքից բաժին էր հանել մարգարեներին, որպեսզի ապրեն: Պատմությունից երևում

է, որ Աստված հատուցեց նրա կնոջն ու զավակներին՝ իրենց այս բարի գործի համար։ Պիտի տաս, որ ստանաս, ինչպես շենք կառուցող վարպետը, քանի դեռ իր ձեռքում քար կամ շինանյութ ունի, բանվորը նորը չի տալիս նրան, իսկ երբ սկսում է շարել, պակասում և նորից է ստանում։

Սողոմոն իմաստունը խրատում է. *«Որդյակ, եթե ուզում ես այս կյանքի դժբախտություններից հեռու մնաս, արդար վաստակիցդ պատիվ արա Տիրոջը և Նրա պտղից բաժին հանիր քո արդարության արմատներից»։* Հոգևոր իմաստով այս խրատը պետք է հասկանալ հետևյալ ձևով. արդար վաստակը՝ բարի գործերն են՝ պահքը, աղոթքը, ողորմությունը, քաջությունը և այլն, պտուղների արմատները հոգևոր իմաստությունն են՝ հավատքը, հույսը և սերը։

Հիսուս առաջին հերթին Իր խոսքը ուղղում է Իր առաքյալներին, որոնք՝ իբրև կենաց խոսքը տարածողներ, պատգամ էին ստանում իրենց կյանքը ամբողջությամբ նվիրելու Հիսուսին և Նրա Ավետարանին։ Եվ պատմությունը վկայում է, որ առաքյալները և մեր Եկեղեցու հայրերն իրենց կյանքը լրիվ նվիրեցին Աստծուն ու Քրիստոսի ճշմարտությունը տարածելուն, ինչպես տառապյալ այրի կինը, որն իր ամբողջ ունեցածը, թեկուզ երկու լումա, նետեց Տաճարի գանձանակի մեջ

Հիսուս այսօր Իր խոսքն ուղղում է ամեն մեկիս, բայց Նրա խոսքը չպետք է հասկանանք բառացի կերպով։ Մեզ տրված գլխավոր պատգամը այն է, որ երբ նվիրում ենք, սրտանց ու հավատքով պետք է տանք, առանց կասկածելու, քանի որ մենք դատավոր

չենք, որպեսզի դատենք որևէ մեկի սխալ արարքը կամ մեղքը. կա Գերագույն Դատավոր, որ է Աստված, թողնենք ամեն ինչ Նրա հույսին։

Ավետարանի պատմությունը մեզ հրավիրում է մտածելու, որ այդ խեղճ, աղքատ, տառապյալ այրի կինը իր օրվա սնունդը զոհելով, իր խղճի պարտականությունը կատարեց՝ նրա մեջ խառնելվ սեր, համոզում ու գիտակցություն։ Երանության մեջ կլինենք բոլորս, եթե մենք էլ ճիշտ այս գիտակցությամբ և զոհողության ոգով շարժվենք։ Ամեն։

Ո՞Վ Է ՄԱՐԴԸ

Ինչպես միշտ, այսօր էլ յուրաքանչյուրիս հետաքրքրում են այս հարցերը. *ո՞վ է մարդը ինչպե՞ս ստեղծվեց, ո՞ւմ կողմից ստեղծվեց, ի՞նչ նպատակով և ի՞նչ վիճակի հասավ ստեղծվելուց հետո:*

Նախ դիմենք Աստվածաշնչին և երբ բացենք Ծննդոց գրքի առաջին գլխի, 27 համարը, այնտեղ կհանդիպենք այս արտահայտության. *«Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով... (Ծննդոց, 1: 27)* և շարունակելով կկարդանք. *«Աստուած ստեղծեց աշխարհը՝ երկինքն ու երկիրը, ցամաքն ու ծովը, կենդանիներին ու թռչուններին և տեսաւ, որ ամեն ինչ գեղեցիկ ու բարի է, ասաց՝ «թող լինեն»:* Բայց Աստծու ստեղծագործության գագաթնակետը հանդիսացավ Մարդը, որին Աստված ստեղծեց հողից և Իր շունչը տվեց նրան: Ծննդոց գլխի առաջին գլխի 26-28 համարներում նաև կարդում ենք. *«Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստուծո պատկերով ստեղծեց նրան...» (Ծննդոց 1:26-28):*

Ահա այսպես մարդը, *(որին Աստված Ադամ կոչեց, որ նշանակում է Հողածին, հողից ծնված)*, ստացավ Աստծո պատկերը և Նրա կերպարանքը: Երբ որևէ մեկը ընթերցի Սուրբ Գիրքը ու հանդիպի այս արտայայտության, ի՞նչ պիտի հասկանա. Կարծո՞ւմ եք, որ բացատրելի պիտի լինեն նրա համար այս խոսքերը: Բնական է, որ իբրեւ մարդ, նա այս-

պես պիտի մտածի. քանի որ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, ուրեմն՝ նա ուներ քիթ, բերան, ականջներ, ձեռքեր, ոտքեր և այլն, այն ինչ որ սովորական մարդը ունի։

Ուրեմն, ի՞նչ պիտի հասկանանք *«Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով»* արտահայտությունը կարդալով։ Ամենակարճ և հստակ պատասխանն այս է. *«Մարդն Աստծուն նմանվում է իր հոգով, որովհետև Նա Իր շունչը փչեց նրա մեջ, Իր հոգու շունչը, որպեսզի մարդը հավիտենապես ապրի»։* Սկզբնական շրջանում քանի մարդը դրախտում էր, Աստծու կամքով անմահ էր, սակայն երբ անհնազանդ գտնվեց ու արտաքսվեց դրախտից երկիր, անմահությունը փախակերպվեց մահվան, և մարդն ապրում է մի որոշ ժամանակ՝ առանց իմանալու, թե ինչքան, ապա մեռնում է, սակայն նրա հոգին, որ տրվել էր Աստծու կողմից, մնում է անմահ և վերադառնում է իր Տիրոջ մոտ։

Մարդն իր ազատ կամքով, ապրում է իր կյանքը, երբեմն հաջող կամ անհաջող, մեղավոր կամ անմեղ, բարի կամ չար, իմաստուն կամ անխելք, ուրախ կամ տխուր, հավատացյալ կամ անհավատ և կամ այլ նմանօրինակ ձևերով։ Կյանքի ճանապարհները շատ են։ Նա, ըստ իր կամքի, ընտրում է իր կյանքի ուղղությունը և պատասխան տալիս իր գործած արարքների համար։ Երբ լինի Քրիստոսի Երկրորդ Գալուստը և Ահեղ Դատաստանը, ոչ մեկը մյուսի փոխարեն պատասխան չի տալու Գերագույն Դատավորին, որ է Քրիստոս։ Աւետարանը ցույց է տալիս երկու ճանապարհներ, մեկը կորստյան, իսկ մյուսը՝ կյանքի ու փրկության՝ Քրիստոսով։ Մեր

Տերն ասում է. *«Մտէք նեղ դռնով, ինչքան լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. 7:13-14):*

Ձեզանից որևէ մեկը կարող է նաև այս հարցը տալ. *«Աստված հոգի է, հասկանալի է. Հետևաբար մարդը մարմնավոր էակ լինելով, կարո՞ղ էր աստվածային դեմք կամ պատկեր ունենալ»:*

Իհարկե: Բայց ավելի հստակեցնելու և հասկանալի դարձնելու համար իմ պատասխանը, տեսնենք թե ի՞նչ է ասում 5-րդ դարի մեր թարգմանիչ վարդապետներից Եզնիկ Կողբացին. *«Երբ Աստված ցանկություն էր ունենում երևալ իր սրբերին, ոչ թե ուրիշ կերպարանքով էր երևում, այլ միայն մարդկային դեմքով, «որին ստեղծեց իր պատկերով» և սա իզուր տեղը չարեց, այլ, որպէսզի սկզբից սովորեցնի, պատրաստի մարդկանց, իմանալու, թե երբ իր Որդուն ուղարկի աշխարհ իբրեւ մարդ, տարօրինակ բան չհամարեն սա, այլ մանավանդ իմանան, որ ինքը Աստված այդ կերպարանքով էր հայտնվել« (Ե. Կողբացի «Եղծ Աղանդոց» 1:23):* Ինչպես Աստված չի տեսնվում իբրև հոգի, մարդու հոգին էլ չի երևում, բայց հայտնվում է նրա խելքի ու ազատ կամքի մեջ: Նրա պարտականությունն է լինել մաքուր և պահել իր հաղորդակցությունը Աստծու հետ, որովհետև, ըստ Ավետարանի՝ *«սուրբ, մաքուր, անմեղ սիրտ ունեցողներն են, որ պիտի տեսնեն Աստծուն: «Երանի նրանց որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:8):*

Ինչ եք կարծում, մարդիկ պիտի գոհանա՞ն այս պատասխանով. ես գոնե կարծում եմ, որ ոչ, բայց հարկավոր է իմանալ, որ մեր սահմանափակ ուղեղը ամեն բանի չի հասնում. քանի որ հոգեկան աշխարհի իրողությունները ապացույցներով չեն հաստատվում են, այլ՝ հաւատքով: Այն ինչին, որ մեր խելքը չի հասնում, պիտի փորձենք հաւատքի ճանապարհով տեսնել: 12-րդ դարի մեր Կաթողիկոսներից Ներսէս Շնորհալի Հայրապետը, շատ գեղեցիկ ձևով է բացատրում այս. «*Անհասկանալին հասկանալու միակ միջոցն է հավատալ Սուրբ Գրքում ասվածներին»,* որովհետև աստվածային ծնունդին մեր խելքը չի հասնի և խոսքով էլ չի բացատրվի: Որով քրիստոնյաների պարտավորությունն է՝ խոնարհությամբ ընդունել Սուրբ Գրքում ավանդվածներն ու սուրբ հայրերի բացատրությունները և լավ սովորել Ավետարանի պատմությունները« (Քրիստոնէական, էջ 37):

«. . . Մարդու հավատքն ու կյանքը համաձայն պիտի լինեն իրար հետ», (Քրիստոնէական, էջ 141:142): Սրա համար մեր Մայր Եկեղեցու զավակները պետք է, որ փոքր հասակից լավ սովորեն Ավետարանը, կատարելապես հմտանան իրենց Եկեղեցու պատմության ու ավանդությունների մեջ, որպեսզի կողքից եկող քամիները նրանց չնետեն մեր պապերի ավանդած կրոնի ոգուն խորթ, տեսակ-տեսակ այլ կրոնների ու աղանդների մեջ:

Ինչպիսի՞ դասեր պիտի քաղեն քրիստոնյաները, սրբակենցաղ մի կեանք ունենալու համար:

Երեք գլխավոր կետեր կան, որոնց վրա կարող ենք ասել հիմնված են քրիստոնեական կրոնի բարոյական պատվիրանները.

ա. Ճանաչել Ճշմարիտ Աստծուն.

բ. Հարգանք ունենալ քո անձի նկատմամբ.

գ. Սիրել ընկերոջդ:

20-րդ դարի մեր հայրենասեր Հայրապետներից և 1918 թվականի Սարդարապատի հերոսամարտին իր եռանդուն մասնակցությունը բերած Երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը, *«Ո՞վ է մարդը»* հարցմանը, այսպես է պատասխանում. *«... Կառապա՞ն եք, կարող եք բարի, ազնիվ և արդար կառապան լինել: Կոշկակա՞ր եք, կարող եք երեսի քրտինքով վաստակած, մաքուր հաց ուտել և կերակրել ձեր զավակներին...: Ծնո՞ղ էք: Ի՞նչ թանկագին բան է զավակը, խելոք մանչուկը, սիրունիկ աղջիկը: Արտաքուստ ի՞նչ փոքրիկ բաներ են մայրական պարտավորությունները՝ սնունդ տալ, լողացնել երեխային, մաքրել ու լվանալ նրա շորերը, քնցնել ժամանակին և այլ բազմաթիվ այսպիսի մանր բաներ: Բայց այս մանր բաներից են կախված մտածող ու զգացող՝ բանական և բարոյական մի էակ ստեղծելը»:*

Դժբախտաբար այսօր մարդիկ չեն ուզում հետաքրքրվել Աստուծո գոյությամբ: Միակ բանը, որով զբաղված են ժամանակակից մարդկանց գրեթե մեծագույն մասը, իրենց առօրյա կյանքն է, որից դուրս նրանց գրեթե ոչինչ չի հետաքրքրում: Բարեպաշտ մի հայ կին հարցնում է կրոնից հեռու իր բարեկամին. *«Քեզ երբեք եկեղեցում չեմ տեսնում, ի՞նչ է պատահել«:* Մարդը պատասխանում է. *«Վերևինին չանհանգստացնենք եկեղեցով, աղոթքով*

կամ նման բաներով: Նա իր գործին, մենք էլ մեր գործին...»: Ինչպիսի անտարբերութիւն:

Չնայած այս մասին միշտ էլ խոսել ենք ու առանց ձանձրանալու պիտի շարունակենք խոսել, բայց մեկ է մարդիկ, դժբախտաբար, չեն լսել և երբէք էլ չպիտի լսեն, ու միշտ էլ պիտի արհամարհեն Ամենազոր Աստծու ձայնը:

Սակայն եկեք հոռետես չլինենք, հույսներս չկորցնենք, այլ լավատեսորեն, հավատքով ու սիրով մոտենանք կյանքի բոլոր դժվարություններին, նեղություններին ու նույնիսկ ամենատխուր երևույթներին: Եվ եթե ամեն օր աղոթենք, անձանձրույթ աղոթենք, կտեսնեք թե ինչքան հեշտ պիտի լինի ձեզ համար հաղթահարել ամեն ինչ, և կյանքը ձեզ համար շատ ավելի գեղեցիկ ու գրավիչ պիտի լինի: Քանի որ Աստուծո պատկերով ենք ստեղծված, փորձենք նմանվել Նրան, սիրենք իրար, բարի, ազնիվ, արդար ու մաքուր սիրով և ներողամիտ լինենք մեկս մյուսի նկատմամբ: Ամեն:

ԵՍ ՁԵԶ ՊԻՏԻ ՀԱՆԳՍՏԱՑՆԵՄ

«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11: 28-30):

Այսօր 2000 թվականի վերջին կիրակին է; Վաղվանից պիտի սկսվի մի նոր հազարամյակ՝ 2001 թվականով: Ամեն մեկս կարծես մեզ հաշիվ պիտի տանք, թե ի՞նչ կարողացանք կատարել կամ չկարողացանք իրագործել անցած տարում, իսկ ժողովուրդները՝ թե ի՞նչ սխալներ ու չկատարված իղձեր թողեցին հին հազարամյակում:

Անցած դարում Հայ ժողովուրդը շատ մեծ փորձությունների միջով անցավ, որ պիտի մնա մեր պատմության մեջ իբրև ամենասարսափելի, ողբերգական մի շրջան, երբ տեղի ունեցավ 1915-ի Ապրիլյան Եղեռնը, ուր Օսմանյան յաթաղանից զոհվեցին մոտ մեկ ու կես միլիոն հայեր ու ցրվեցին աշխարհով մեկ, 1941-1945-ի Համաշխարհային երկրորդ պատերազմը, 1988-ի Դեկտեմբեր 7-ի Հայաստանի ահավոր երկրաշարժը և 1988-1993-ի Արցախյան պատերազմը:

Հիսուս, ինչպես մեր ժողովրդին, այնպես էլ ողջ մարդկությանը եզակի կոչ է ուղղում Աստծուն փնտրելու: Հին Կտակարանում Հոբ Երանելու գրքում, Զոֆարը հարց է տալիս. *«Փնտրելով կարելի՞է Աստծուն գտնել»:*

Այո, կարելի է գտնել, եթե մեր ուշադրությունը կենտրոնացնենք մեր Տիրոջ վրա, քանի որ Նա ասում էր. *«Ով որ ինձ տեսավ, Հորը տեսավ»:*

Իրար սիրելով էլ կարող ենք Աստծուն գտնել: Աստվածորդին հոգնած ու բեռնավորված մարդկությանը Իր մոտ հրավիրելուց հետո խոստանում է հանգստացնել նաև նրանց խռոված հոգիներն ու տառապած սրտերը: Դրա համար սակայն պետք է մեր ուսերի վրա վերցնենք Հիսուսի լուծը. *«. . . որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև»:*

Հիսուսի լուծը սիրո և հավատքի նշանն է, որ խաղաղություն է տալիս մեր հոգիներին: Շատ տարիներ առաջ ես իբրև տասնամյա մի պատանի, Հայրենիքում, Վաղարշապատ քաղաքում *(նախկին Էջմիածին քաղաքը)*, հավատքով ու հույսով ներս մտա *«Սուրբ Աստվածածնի»* անունով մի փոքրիկ եկեղեցու կամարներից ներս, Աստծուն փնտրելու ու իմ նման մի քանի պատանիների հետ, այրվեցի հավատքի և սիրո կրակով: Այդ օրվանից անցել են ավելի քան քառասունվեց երկար տարիներ: Երեսուներկու տարիներ առաջ, իբրև ամուսնացյալ քահանա, Հիսուսի ծանր լուծը վերցրեցի իմ վրա, ուխտելով հավատարիմ ու հարազատ մնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցուն:

«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ. . . »:

Երկու հազար տարիներից ի վեր Նա մեզ պատգամում է, թե՝ *«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս*

այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս, ձեր սրտերը թող չխռովեն և չվախենաք» (Հովհ. 14:27-28):

Հեքիաթի համաձայն թռչունները սկզբում թևեր չունեին, երբ Աստված նրանց թևերով օժտեց, ըմբոստություն առաջ եկավ Աստծու դեմ, որովհետև նոր թևերը ծանր թվացին նրանց, բայց երբ թռչուն-ները վարժվեցին, ուրախությամբ երկինք բարձրա-ցան ու գոհունակություն հայտնեցին Աստծուն դրա համար:

Նույնը կարող ենք ասել նաև մարդկանց մասին:

Հետաքրքիրն այն է, որ մեզանից յուրաքանչ-յուրին թվում է, թե Աստծու կողմից մեր վրա դրված բեռը, պարտականությունը կամ խաչը բոլորից մեծն է ու ծանրը: Սակայն այդպես չէ: *«Նույն ձևով զանգատվող մի մարդու Հայր Աստված վերցնում ու տանում է մի մեծ սենյակ, ուր պատերի երկարու-թյամբ շարված էին զանազան չափերի հարյուրավոր խաչեր և թելադրում է ընտրել դրանցից մեկը: Մարդը չորս կողմը մի լավ նայելուց հետո, տեսնում է մի փոքր խաչ ու ասում, թե այդ խաչն է ուզում; Հայր Աստված ժպտալով նրան պատասխանում է. «Բայց զավակս, դա արդեն քո խաչն էր»:*

Հիսուս հրավիրում է մեզ Իրեն հետևելու, որպեսզի թեթևանցի մեր այդ ծանր թվացող խաչը: Ահա մի քանի օրից բոլորս իրար ավետիս պիտի տանք ասելով. *«Զեզ և մեզ մեծ ավետիս», «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»,* ավետիս, որը մանուկ Հիսուսի միջոցով մեզ պատգամում է մոռանալ ամեն տեսակի քեն ու խռովություն, ատելություն և հակառակու-թյուն: Մարդիկ, եթե անհամաձայնություններ ունեք

ձեր բարեկամներից, ընկերներից և ծանոթներից ոմանց հետ, գնացեք և անմիջապես հաշտվեցեք նրանց հետ: Ժամանակ մի կորցրեք: Թող հին դարում ու հին տարում մնան ձեր բոլոր անհաշտությունները: Հովհաննես Առաքյալն ասում է. *«Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում. ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող սիրել Աստծուն, որին չի տեսել: Եվ նրանից ունենք այս պատվիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի նաև իր եղբորը: (Հովհ. Ա. 4:20-21):*

Ուրեմն հիշեցեք Հիսուսի այս հրաշալի պատվիրանը. *«Սիրեցեք միմյանց»:*

Այո, մենք հպարտ ենք, որ երկու հազար տարի է քրիստոնյա ենք, իբրև Հայց. Առաքելական Եկեղեցի և իբրև հայ ժողովուրդ ու հպարտ ենք նաև, որ 2001 թվականի ընթացքին, ոչ միայն մեր ժողովուրդը, այլև ամբողջ աշխարհը պիտի տոնի Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700–ամեակը:

Շնորհավոր Նոր Տարի և գալիք Սուրբ Ծնունդը: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՏՎԱԾ ՇՆՈՐՀՔԸ

«Լի շնորհով և ճշմարտությամբ: (Հովհ.1:14)

Ակամա ամեն մեկ հավատացյալի մտքում կարող է այսպիսի հարց ծագել. *»Ի՞նչ է շնորհքը»* և թե՝ *«Ի՞նչ մեծ նպաստ կարող է բերել մի մարդ, որը լի է շնորհներով, իր ընտանիքի և իր ժողովրդի համար, եթե իր կյանքում ճիշտ կարողանա օգտագործել դրանք»:*

Շնորհքը մի քանի իմաստներ ունի, բայց այս պարագայում, իր կրոնական իմաստով նշանակում է այն կարողությունը կամ ընդունակությունը, որն Աստված տալիս է մարդկանց, գործադրելու և կատարելու համար Իր կամքը:

Եթե ասում ենք, թե այսինչ մարդը Աստվածային շնորհք ունի, հասկանում ենք, թե նա Աստծուց տրված շնորհքով է օժտված:

Անշուշտ երեխաները Աստվածային տնօրենությամբ ծնվելիս օժտվում են բազմաթիվ շնորհներով, որովհետև Աստված լինելով առաջին մարդու ստեղծիչը, բնականաբար Ինքն է, որ տալիս է բնածին շնորհները: Ես գոնե կարծում եմ, որ անշնորհք մարդիկ չկան: Երբ ծնվում ենք մեր մեջ կան և նկարիչներ և երաժիշտներ և քանդակագործներ և բանաստեղծներ և հոգևորականներ ու տարբեր ասպարեզներում զանազան շնորհներ ունեցող մարդիկ: Հարցը այն է, որ մենք մեր կյանքի ընթացքում հաճախ մոռանում ենք օգտագործել այդ շնորհները տարբեր առիթներով. պատճառը՝ կամ մեր ունեցած թերահավատությունն է մեր ուժերի կամ մեծերի կողմից անտարբեր վերաբեմունքը փոքրերի

ստեղծագործական շնորհների նկատմամբ և կամ լարված ու ծանր կենցաղային գործերը, որոնք մեզ դարձնում են չոր և անտարբեր։

Հովհաննես Ավետարանիչը ասում է. *«Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով ու ճշմարտությամբ։. . . Մենք բոլորս նրա լրիվությունից ստացանք շնորհ՝ շնորհի փոխարեն. որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, իսկ շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղան» (Հովհ. 1:14-17):*

Շնորհքը հազվագյուտ մի հարստություն է։ Տեսե՞լ եք մի վաճառական, որ շնորհք ծախի կամ մի մեծահարուստ, որը հսկա հարստության փոխարեն կարողանա շնորհներ գնել։ Եվ սակայն, Աստվածային շնորհքը առանց վարձատրության բաշխվում է այն հավատքով խնդրողներին։

Սուրբ Պատարագի ընթացքում հավատացյալները իրենց աղոթքով բազմապիսի խնդրանքներ են մատուցում Աստծուն։ Նրանցից ոմանք աղոթում են գործի հաջողության, ուրիշներ ամբողջ հոգով բժշկություն են խնդրում հարազատի կամ ծանոթ հիվանդի համար, ոմանք աղոթում են իրենց զավակների կրթական կյանքի կամ ընտանեկան երջանկության ու խաղաղության համար։ Եվ դեռևս նրանք ինչ-ինչ մանրամասնություններ են հիշում իրենց առօրյա կյանքի կամ իրենց ապագայի հետ կապված, խնդրելով, որ Աստված Ինքը այդ բոլորի լուծումը գտնի։

Այդ աղոթքների ճանապարհով ներկայացված խնդրանքներում սակայն, քիչ է տոկոսը ամենա-

կարևոր մի խնդրանքի։ Խնդրանք, որի պատասխանը երբ ստանանք, մեր կյանքը ամբողջությամբ պիտի կերպարանափոխվի։ Մի ուժ, որը մեր ներքին և արտաքին կյանքին պիտի տա նոր արտահայություն և բարձր որակ։

Եվ ո՞րն է այդ ուժը, եթե ոչ՝ շնորհքը։ Շնորհքը երկնային մի պարգև է։ Այն Եկեղեցու խորանի վրա դրված չի, որ գնաս վերցնես ու սեփականացնես։ Շնորհքը ուղղակի երկնքից Աստված կաթեցնում է մարդու հոգում և, որի համար ամեն ինչից ավելի պիտի խնդրենք Նրան։ Ավետարանի խոսքի համաձայն, այդ շնորհքի արժեքը իմացողը և իր կյանքով ու գործով այն գնահատողը՝ ավելիով պիտի ստանա. *«Ով որ ունի՝ նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի» (Ղուկաս 19:26):* Ահա մի խոսք, որի մեջ ամփոփված է ոչ միայն երկնավոր շնորհքը ունենալու, այլ մանավանդ այն պահելու և մեր մեջ շատացնելու գաղտնիքը։

Աստված առատորեն բաշխել է Իր շնորհները բոլորին։ Ոչ մեկը չի կարող բողոքել, ասելով, թե ինքը շնորհք չունի։ Նման մի արտահայտություն ամեն բանից առաջ անպատվաբեր է տվյալ անձի համար։ Բնական է, որ բոլորս էլ նույն շնորհները չունենք։ Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղված առաջին թղթում ասում է, որ մարդիկ իրարից տարբեր շնորհներ կարող են ունենալ. *«Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք, նույն Հոգուց, մյուսին՝ հավատ, նույն Հոգով, մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով. . . » (Ա. Կորնթ. 12:8-10)* և այլն։ Ղուկասի Ավետարանում Հիսուսի

կողմից պատմված մի ուսանելի առակ կա *(Ղուկաս 19:11-26),* ուր նա ասում է, թե՝ *«Մի ազնվական մարդ թագավորական իշխանություն ստանալու համար, նախքան մի ուրիշ երկիր գնալը, իր երեք ծառաներին որոշ գումար է տալիս, որպեսզի գործի մեջ դնեն՝ շահ բերելու համար: Վերադառնալով նա ուզում է իմանալ, թե ինչպե՞ս են օգտագործել իր տված դրամները: Առաջինը ասում է, թե ամեն մեկի տեղ տասն է շահել, երկրորդը՝ հինգը, իսկ երրորդը՝ դրամը եղածի պես վերադարձնում է տիրոջը: Եվ գիտե՞ք, թե ինչ գնահատանքի են արժանանում նրանք; Առաջինը նշանակվում է տասը քաղաքների, իսկ երկրորդը՝ հինգ քաղաքների կառավարիչ: Երրորդ ծառան, որ դրամը վերադարձնում է Տիրոջը, այսպես է արտահայտվում. «Տեր, ահա քո մնասը, որ թաշկինակի մեջ ծրարած պահում էի. վախենում էի քեզանից, որովհետև խիստ մարդ ես, վերցնում ես ինչ որ չես դրել, և հնձում ես ինչ որ չես սերմանել»:* Տերը խստորեն նրան հանդիմանելով, պատասխանում է. *«Հենց քո բերանով քեզ պիտի դատեմ, անհավատարիմ ծառա. գիտեիր, որ ես մի խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ չեմ դրել, հնձում եմ, ուր որ չեմ սերմանել: Հապա ինչո՞ւ իմ դրամը լումայափոխներին չտվիր, որպեսզի ես, գալով, տոկոսներով միասին պահանջեի այն: Վերցրեք դրանից մեկ մնասը և տվեք նրան, ով տասը մնաս ունի» (Ղուկ. 19:20-27)* Եվ բարկացած Տերը երրորդ ծառայի ունեցած նվազագույն գումարը նրա ձեռքից վերցնելով տալիս է ավելի շատ ունեցողին:

Այս պահին իբրև խեղճ ու հոգի ունեցող մարդիկ, մեր պարզ տրամաբանությամբ կամ մտածո-

ղությամբ, անմիջապես կարող ենք հակադրվել պատժի այս ձևին։ Թույլին և տկարին պաշտպան լինելու բնական մղումով, մենք պիտի ասեինք, թե ինչո՞ւ են այդ խեղճի ունեցածը վերցնում իր ձեռքից, թող, որ նա էլ իր քչով ուրախանար, երբ մյուսները բարձր դիրքերի արժանանային։ Այս տրամաբանությունը կամ մտածումը եթե նյութական հարստության, շարժուն թե անշարժ կալվածներին և կամ պաշտոններին ու հանգամանքներին վերաբերվեր՝ ճիշտ էր և մենք իրավունք կունենայինք այդպես մտածելու, սակայն Աստծուց ստացած և տրված շնորհների պարագային, նույնիսկ կարող ենք ասել, անարգանքի իմաստ է ստանում։ Ինչո՞ւ։

Որովհետև, երբ Աստծուց ստացած բարեսիրության, պարկեշտության, հավատարմության, գուրգուրանքի, կրոնասիրության, ողջախոհության, աշխատասիրության և այլ շնորհները պահենք մեր մեջ իբրև գանձ ու երբեք չօգտագործենք դրանք, մի օր կդառնանք անպարկեշտ, անհավատարիմ, հավատքի հանդեպ անտարբեր և ծուլությամբ մեր շրջապատը վարակող անձեր։

Ինչպես ասացինք, Աստված Ինքն է մեր շնորհների նվիրատուն և Ինքն էլ իրավունք ունի դրանք հետ վերցնելու մեզանից, երբ տեսնի, որ արժեքը չգիտենք ու արհամարհանքով ենք վերաբերվում դրանց հետ։

Իբրև Հայ հոգևորական առանձնացմանս պահին, երբեմն ես ինձ հարց եմ տալիս և այսօր ձեզ եմ ուղղում այս հարցը, թե՝ *«Մեր ունեցած բազմաթիվ շնորհները արդյոք պիտի բավականացնե՞ն մեզ, մեր հավատքի ուժով հաղթահարելու այս փոթորկահույզ*

կյանքի բազմաթիվ դժվարությունները, նեղություններն ու տառապանքները»: Ու այս հարցի պատասխանը գոնե ես զգում եմ իմ հոգու մեջ, երբ մի փոքրիկ բարի ծառայություն եմ անում, երբ աշխատում եմ արդարորեն ու մաքուր ձևով հոգուս և խղճիս պարտականությունը կատարել իմ Ընտանիքի, իմ Ազգի և իմ Եկեղեցու հանդեպ: Դուք էլ նույնը արեք. մի բողոքեք, կարող եք, եթե ուզեք, որովհետև ամուր է ձեր Հավատքը և ուժեղ Հայի Ոգին:

Ուրեմն պարտավոր ենք օգտագործել Աստծուց մեզ տրված շնորհները և դրանք արժևորել մեր կյանքում ու մեր բոլոր գործերում, ապրելով մաքուր, արդար և քրիստոնեավայել մի կյանք:

Եկեք լսենք մեր Եկեղեցու հայրենասեր Հայրապետներից, երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի խոսքը.

«. . . Խնդիրը այն է, որ յուրաքանչյուրս լավագույն ձևով կատարենք մեր պարտքը. որովհետև «որին շատ տվեց, շատ էլ պիտի պահանջվի, որին, որ քիչ տվեց՝ քիչ էլ պիտի պահանջի»: Բայց գնահատության արժանի է մեզանից ամեն մեկը, որը լավագույն կերպով կարողացել է օգտագործել իրեն շնորհված դրամագլուխը: Աստված գիտի լավագույնը գնահատել. . . : Կյանքը կազմված է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լավ կատարման, լավագույն մեծը չի ստեղծվի: Ամենահասարակ կարծված երևույթներն իսկ, իրենց արժեք ունեն: Ամենալավ սերմը նույնիսկ, ժայռի վրա ընկած, անպտուղ կմնա, իսկ բարեբեր հողում՝ արդյունավոր կլինի. . . »: Ամեն:

ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

«Զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր»
«Տեր, Քո Խաղաղությունը տուր մեզ»

Հին տարվա վերջին առիթն է, այս, որ միասնաբար պիտի աղոթենք: Մեզ պես միլիոնավոր հավատացյալներ նույնը պիտի անեն աշխարհի զանազան երկրներում:

Մի քանի օրից այս տարին էլ պիտի անցնի պատմության գիրկը: Վստահ եղեք, որ այսօրվա օրը ոչ մի բանով չի տարբերվում երեկվանից, ինչպես նաև վաղվանը՝ իր բոլոր անակնկալներով հանդերձ: Այս անվիճելի փաստը գիտակցելով՝ յուրաքանչյուրս անբացատրելի ներքին զգացումներ է ապրում: Ի՞նչ ենք զգում կամ ի՞նչ ենք երազում ու ակնկալում Նոր տարուց ու նրանից հետո եկող ժամանակներից: Ամեն մեկս էլ մի բան կարող ենք ասել. մեկը առողջություն է խնդրում իր կամ հարազատի համար, մի ուրիշը՝ հաջողություն կամ հարստություն, իսկ երրորդը՝ իր հանգուցյալ հարազատի համար հոգու հանգստություն է հայցում:

Սակայն այսօր ավելի հրամայական է դարձել, որ բոլորս՝ իբրև հայ քրիստոնյաներ, մի ցանկություն ունենանք ու միասնաբար Աստծուց մի բան խնդրենք: Այո, բոլորս մեր մտածումներով, վշտերով և թեկուզ ուրախությամբ ամփոփվելու փոխարեն միանանք ու Աստծուց խնդրենք այն ամենակարևորը, որը, վստահ եղեք բոլորիս պիտի մխիթարի և ուրախացնի. *«Տեր, Քո խաղաղությունը տուր մեզ»:*

Հավատում ենք, որ աշխարհը ու ամեն մեկս էլ մեր հերթին, մանավանդ այս օրերին մեր բազմա-

չարչար հայրենիքը, օդի ու ջրի պես խաղաղության կարիքն ունենք: Հիսուս ասում է. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. . . » (Հովհ. 14:27):

Ուրեմն, բացի այս աշխարհի խաղաղությունից, նաև մի ուրիշ խաղաղություն կա՝ ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ, որը Հիսուս պատգամում է Իրեն հետևողներին ու հավատացողներին:

Երբ խաղաղություն ենք ասում, հասկանում ենք մի հանգիստ շրջան՝ առանց իրարանցումների, աղմուկի և մանավանդ պատերազմի: Այս իսկ պատճառով ոստիկանության ու բանակի պարտականությունն է մարդկանց պահպանել ամեն տեսակի արտաքին ու ներքին թշնամներից: Մենք էլ մեր հերթին գիշեր ու ցերեկ մեր քունը փախցրած՝ աշխատում ենք հոգալ մեր ընտանիքների նյութական ապահովությունն ու բարեկեցությունը: Գիտնականներն ու բժիշկները ամեն օր նոր դեղամիջոցներ ու գործիքներ են հայտնաբերում մեր առողջությունը հնարավորին չափ պահպանելու համար:

Թվում է, թե ամեն բան ունենք, բայց ինչո՞ւ ուրախ չենք ու հաճախ, շատ հաճախ երջանկություն ասված բանը չենք զգում: Ինչի՞ համար ենք հուզվում, խռովում ու վախենում: Բնական հարց է առաջանում՝ *«Ինչի՞ց և ո՞ւմից»:*

Մարդկանց մեծամասնությունը հոգեկան խռովք են ապրում, վախ, անբավարարվածություն զգում իրենց մեջ, չունեն մտքի, խղճի ու հոգու խաղաղություն: Այս աշխարհն էլ իր ամբողջ բարիքներով ու գանձերով ի վիճակի չի այն մեզ տալու, որովհետև մենք մեր ու ուրիշների փորձառությունից ելնելով, չենք վստահում աշխարհի տված բարիքների հարատևությանը: Պատերազմները, մարդասպանություններն ու գողությունները, գործի անհաջողություններն ու հիվանդությունները, միշտ մարդ-

կանց շրջապատում են ու հանգիստ չեն տալիս: Հանգիստ չեն տվել երկու հազար տարիներ առաջ, հանգիստ չեն տալու հիմա ու երբեք էլ չպիտի տան: Քրիստոսի սերն է, որ մեզ պիտի տա այդ հանգիստն ու խաղաղությունը: Այդ սերը աշխարհը չի կարող մեզ տալ, այլ միայն մեր Տերը: *«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ… (Մատթ. 11:28):* Դրա համար էլ Աստծու տված խաղաղության հիմնական հատկություններն են՝ սերն ու արդարությունը: Նա ով սեր ունի, արդար մեկն է, իսկ նա, ով արդար մարդ է, պիտի սիրի նաև խաղաղությունը: Եթե Քրիստոսի խաղաղությունը ունենանք մեր մեջ, վստահ եղեք, որ ոչ մի փորձանք, ոչ մի զրկանք ու ոչ մի բռնություն չեն կարող թուլացնել մեզ, ընկճել ու հուսահատության մատնել:

Երջանիկ ու հանգիստ մի կյանք ապրելու համար, որը բոլորիս երազանքն է, հարկավոր է Աստծուն վստահել ու ապավինել Նրա զորությանը՝ ամեն պահ ու ամեն խնդրում, որովհետև Նա մեր բոլորի երկնավոր Հայրն է և Նրա մեջ է ճշմարիտ խաղաղությունը:

Ուրեմն կանգնած Նոր տարվա սեմին՝ ի՞նչ կարող ենք խնդրել Աստծուց, եթե ոչ միայն ու միայն Իր խաղաղությունը. *«Տեր, Քո խաղաղությունը տուր մեզ»:*

«Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»,- ասում է Հիսուս:

Բացեք ձեր հոգու աչքերը և այս Նոր տարում ավելիով լցվեցեք հավատքով ու սիրով մեկդ մյուսի նկատմամբ: Շնորհավոր Նոր տարի: Ամեն:

ՄԵՂՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ղուկասի Ավետարանի 17-րդ գլխի 4-րդ համարում Հիսուս ասում է.

«Եթե եղբայրդ մեղանչի, սաստի՛ր նրան և եթե զղջա, ների՛ր նրան; Եվ եթե յոթն անգամ մեղանչի քո դեմ և յոթն անգամ դառնա քեզ և ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան» (Ղուկ. 17:4):

Եղբայր ասելով այստեղ չպիտի հասկանանք միայն նույն մորից ծնված զավակներին, այլ բոլոր քրիստոնյաներին, որոնք եղբայր են իրար հետ Հիսուսի միջոցով:

Հիսուսի այս խոսքում կարող ենք գտնել երկու պարտականություններ, առաջինը, այն է, որ մեզանից յուրաքանչյուրին այս կյանքում տրված է հսկիչ դառնալու պաշտոնը՝ հանդիմանելու կամ ուղղելու մեր եղբորը կամ ընկերոջը՝ իր կատարած սխալի համար;

Երկրորդը՝ ներողամտությունն է: Երբ տեսնում ենք մեր եղբոր կամ ընկերոջ զղջումը կամ սխալը ընդունելու պատրաստակամությունը, պետք է ներենք նրան, որպեսզի նրա մեջ վերահաստատվի Քրիստոսի սերն ու խաղաղությունը:

Ներողամտության ամենապայծառ օրինակը տվեց մեր Տերը՝ Հիսուս, երբ խաչափայտի վրա Իր մահվան վերջին պահին խնդրեց Հորը, որ ների Իրեն չարչարողներին ու խաչողներին. *«Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում« (Ղուկ. 23:34):*

Հիսուս մեզանից պահանջում է կատարել Իր պատգամը և այն դարձնել մեր կյանքի ապրելու ձևը: Պատկերացրեք, եթե մեր հայրերն ու մայրերը իրենց զավակների հանդեպ ներողամիտ և համբերող չլինեին, ի՞նչ պիտի լիներ ընտանիքի վիճակը:

Զղջումն ու ապաշխարությունը ներելու պայմաններն են: Բայց զղջալուց հետո շատ հնարավոր է, որ նորից մեղանչենք: Կրկին մեղանչելուց հետո նոր զղջումը կարո՞ղ է արդյոք առաջին զղջումի պես ընդունելի լինել և ներման արժանանալ: Ահա մի հարց, որը հուզում էր նաև առաքյալներին: Այդ պատճառով Պետրոս առաքյալը, որը ամենահամարձակն էր, մոտենում է Հիսուսին և խնդրում պարզել այս հարցը. *«Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»:* Հիսուս պատասխանում է. *«Քեզ չեմ ասում, թե մինչև յոթն անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):*

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Մի մարդ խելակորույս արագությամբ մոտենում է ծովափին գտնվող ժայռի գագաթին՝ ինքն իր հետ խոսելով.

- Այլևս չեմ կարող… այլևս չեմ կարող ապրել մեղքերի բեռից և ծանրությունից ու այսքան անհաջողություններից…

Ժայռի գագաթին կանգնած նա տեսնում է Հիսուսին, որը փոքրիկ քարեր էր գցում ծովի մեջ:

Հետաքրքրությունից դրդված նա հարցնում է.

Տեր Հիսուս, նախքան ինձ այս ժայռից ցած գցելը, կուզենայի իմանալ, թե ինչո՞ւ ես քարեր նետում

ծովի մեջ:

Հիսուս պատասխանում է.

Ցանկանում եմ ծովը լցնել քարերով և ժայռին հավասարեցնել, որպեսզի չկարողանաս նետվել այդտեղից:

Բայց, Տեր, գիտենք, որ Դու ամենակարող ես և իմաստություն պարգևողն ես, Քեզ համար անկարելի ոչինչ չկա, մի քանի րոպեում Դու կարող ես ծովը ցամաքեցնել ու ժայռին հավասարեցնել, իսկ այսպես անելով, հազար տարի էլ անցնի, փոքրիկ քարերով ծովի երեսը նույնիսկ չի ծածկվի…»,-ասում է զարմացած մարդը:

Հիսուս պատասխանում է.

Ահա այսպես էլ Աստծու սերը, ներողամտությունը, ողորմությունն ու փրկությունն են, որոնք այնքան մեծ են ու անսահման, որ մեղքերդ չեն կարող ծածկել դրանք: Գնա', զղջա' և ապաշխարի'ր ու մեղքերիդ ծանրությունիդ կազատվես:

Մարդը անդրադառնալով իր սխալին, լսում է Հիսուսին ու գլուխը կախ հեռանում ժայռի գագաթից»: (Այս պատմությունը ինձ տրամադրել է Երևանից՝ Հովհաննես Մանուկյանը):

Կյանքը պայքար է, մի' հուսահատվեք և մի' ընկճվեք:

Աստված մոռանում է բոլոր հին մեղքերը, եթե մեղավոր մարդը ղզջում է իր արածների համար: Շատ հաճախ մարդիկ հարցը հետևյալ կերպ են ձևակերպում. *«Եթե Աստված ներող է, ինչո՞ւ է պատժում»:* Բնական մարդկային մտածում է, սակայն այդպիսիները պետք է հասկանան, որ ամեն մեղք հատուցում է պահանջում: Եթե երե-

խան բաժակը կոտրում է, ծնողը սկզբում բարկանում է, սակայն դա մի պահ, հետո գրկում, համբուրում է նրան ու ներում, սակայն ո՞վ է վճարում կոտրած բաժակի համար, անշուշտ, միայն ծնողը: Ներումը իր գինն ունի: Եվ Աստված այդ գինը վճարեց Իր Միածին Որդու՝ խաչի վրա տառապալից մահով:

Ցավոք, իբրև մարդիկ ներման այդ շնորհքը պակասում է մեր մեջ: Փոխանակ մտածենք այդ պակասը լրացնելու մասին, բոլորս մի-մի դատավոր դարձած, այնպիսի ատելությամբ ենք լցված իրար նկատմամբ և այնպիսի դատեր ենք տեսնում, որ նույնիսկ անհավատ մարդկանց նախանձը կշարժեր:

Եկեք ներե'նք միմյանց, իսկ այն մարդու պատիժը, որը մեղանչել է մեր դեմ, գոնե մեզ այդպես է թվում, թողնենք Աստծու դատաստանին և հիշենք Նրա խոսքը, թե՝ «Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ» (Հռովմ. 12:19):

Մի' սպասեք խաղաղություն այնտեղ, ուր բացակայում է ներելու ոգին:

Մեղքը մի սև ամպ է, որը ստվերի մեջ է դնում Աստծուն, Նրան պահում ու հեռացնում մեր տեսողությունից:

Աստված թողություն տալով մեզ, Իր Թագավորությունն է հաստատում մեր մեջ: Նա ներում է մեզ երկնքից, իսկ մենք, երկրի վրա ապրելով, պարտավոր ենք ներել մեր նմաններին: Ներման չափանիշը սերն է: Աստված սեր լինելով, անհունորեն ներում է:

Ինչո՞ւ չներենք մեր եղբորը, մի՞թե մենք Աստծուց ավելի մեծ ենք: Նա միշտ պատրաստ է մեր մեղքերը ներելու, երբ զղջանք ու ապաշխարենք, ապա ինչքան ավելիով մեղանչական մարդը պիտի կարողանա ներել իր եղբորը:

«Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. 6:14-15):

Ներենք միմյանց և ասենք. *«Խաղաղություն բոլորին»*: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գրվում» (Մատթ. 3:10):

Այս խոսքը Մատթէոսի Ավետարանի 3-րդ գլխի 10-րդ համարից է:

Կարդալով հասկանում ենք, թե մեր ամենօրյա փորձառությամբ նույնիսկ անկարելի է հաստատել այս դատավճռի ճշմարտությունը:

Ս. Հովհաննես Մկրտիչը, իբրև Մեսիայի գալստյան նախակարապետը արդեն իսկ հայտնել էր, թե սա Հիսուսի գործունեության առաջին պայմաններից մեկն է: 21-րդ դարում ենք ապրում, գարգացած մի ժամանակաշրջանում, ուր տեխնիկան իր վերջին խոսքն է ասում, սակայն երբեմն ցավով տեսնում ենք, թե ինչքան անպտուղ վնասակար ծառեր կան, որոնք աճում են մեր աչքի առաջ, իգուր տեղը զբաղեցնելով հողն ու արգելք լինելով ուրիշ պտղատու ծառերի ծաղկելուն, որոնք խեղդվում են և կորցնում իրենց կենսունակությունը: Այսպիսի պահերին մենք ներքին ընդվզումով մեր բողոքի ձայնն ենք բարձրացնում առ Աստված ասելով, թե՝ *«Ինչո՞ւ է այսպես, ինչո՞ւ են արդար մարդիկ տանջվում, իսկ մեղավորները հասնում հաջողությունների»:* Այս միտքը ոչ միայն սաղմոսերգուին է տանջել, այլ միշտ զբաղեցրել ու այսօր էլ ներկայիս մտահոգում է մեզանից շատերին և մենք փոխանակ այս լուծումը Ավետարանում փնտրելու՝ ընկնում ենք մտորումների մեջ: Այսպիսի մտատանջող մի հարց էր հետաքրքրում նաև այն հրեաներին, որոնք Հիսուսի մոտ գալով պատմում են, թե Հրեաստանի դա-

տավոր Պիղատոսը մի խումբ Գալիլիացիների սպանել էր տվել Երուսաղեմի տաճարում զոհաբանության միջոցին, այնպես որ նրանց արյունը խառնվել էր այլ զոհերի արյան հետ: Մեզ համար ուսանելի է այս դէպքում Հիսուսի վերաբերմունքը, որը ամենագեղեցիկ օրինակն է:

Պատմությունից հայտնի չէ, թե ե՞րբ և ինչ առիթով է Պիղատոսը այս արյունոտ գործը կատարել. միայն Հովսեփիոս պատմիչի նկարագրությունից գիտենք, որ նրա օրով հաճախ են տեղի ունեցել այսպիսի արյունահեղություններ, որովհետև հրեա ժողովուրդը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել հեթանոս հռոմայեցիների տիրապետության հետ և ամեն անգամ, երբ նրանց կողմից բռնանալու մի նոր կարգադրություն էր լինում կամ պղծվում էին հայրենի սրբությունները, գրգռում էր ժողովրդի զայրույթը և խռովությունը բռնկվում էր մի տեղից, որը հռոմայեցի զինվորները իսկույն խեղդում էին արյան մեջ: Այսպիսի խռովություններ պատահում էին ավելի հաճախ Երուսաղեմի մեծ տոներին, երբ տաճարի շուրջը ուխտավորների ահագին բազմություն էր հավաքվում և ամեն մի չնչին դեպք կարող էր մոլի ոգևորություն ներշնչել ամբոխին. գլխավոր դեր խաղացողները և ապստամբների առաջին շարքերում կռվողները սովորաբար Գալիլիացիներն էին լինում, որոնք իբրև լեռնային ավելի ազատ ժողովուրդ, Երուսաղեմից հեռու գտնվելով, վառ ջերմեռանդությամբ լցված դէպի մայր տաճարն ու հայրենիքի հին սովորությունները՝ միշտ կենդանի էին պահում նախանձախնդրության և անկախության ոգին:

Հովսեփիոսը հիշում է, որ Պիղատոսը մի ջրանցք էր կառուցել տվել, որը չընդունելով ժողովուրդը իր բողոքի ձայնն էր բարձրացրել. հնարավոր է, որ Ավետարանում պատմված դեպքը կապ ուներ սրա հետ: Բնական է, որ հրեաների կողմից տաճարում կատարված արյունահեղությունը պիտի նկատվեր իբրև սոսկալի մի ոճիր և ամեն հավատացող հրեա պիտի հարցներ. *«Ինչպե՞ս է Աստված թույլ տալիս դա. մի՞թե այն մարդիկ, որոնք դեպի Հայրը ունեցած իրենց սիրո համար զոհաբերվեցին Նրա սեղանի առաջ հանցավո՞ր էին, որ պատժվեցին»:* Այսպիսի հարցը բնական է, որ հրեաների կողմից պատրաստված հերթական մի ծուղակ էր Հիսուսին դատապարտելու և նրան մեղադրելու համար, եթե սխալ խոսքեր լսվեին Նրա բերանից:

Հիսուս իր տված բացատրությամբ նախ հասկացնում է, որ այս Գալիլիացիները իզուր էին անմեղ նահատակներ համարվում. քանի որ նրանց ունեցած ոգին ճշմարիտ Աստծու ոգին չէր: Հրեաները կարծում էին, թե նրանք Տիրոջ պատիվը պաշտպանելու և Նրա անունը փառավորելու համար էին զոհ գնացել: Մինչդեռ հակառակն էր տեղի ունեցել: Ըստ Աստվածային պատվերի «*սուր վերցնողը սրով պիտի ընկնի*» և այդպիսին իրավունք չունի պաշտպանության սպասելու այն Աստծու կողմից, որը դատապարտում է եսասիրությունն ու անտեղի համարձակությունը: Սպանված Գալիլիացիները իրապես իրենց հանցանքի պատիժն էին կրել. սակայն դա ուրիշների համար չպիտի փաստ լիներ այն մտածումով, թե իրենք հանցավոր չեն, որովհետև անպատիժ են մնում. ընդհակառակը ամեն մի այսպիսի դեպք կամ հանկարծակի պատահար, պիտի ստիպի, որ յուրաքանչյուրս մենք մեզ քննելով հարց տանք, թէ նույնպիսի մի պատահարի մենք եւս արժանի չե՞նք: Եթե դեպքը այնպես պատահեր, որ մենք անսպասելի կերպով ներկայանայինք Գերագույն Դատավորի առաջ, ի՞նչ պատասխան կարող էինք տալ մեր կյանքի ու կատարած գործերի համար: Ընկածին ոտքով խփելը հատուկ է թույլ և

վախկոտ մարդկանց: Դժբախտաբար որոշ մարդիկ կարծում են, թե իրենք բարոյապես բարձր խիղճ ունեցողներ են ու իրենց իրավունք են վերապահում խառնվելու Աստծու որոշումներին և դատաստանին, հարցնելով, թե *«Մեր Տերը ո՞ր մեղքերի համար է պատժում մարդկանց»:* Փոխանակ ժամանակ կորցնելու ու խառնվելու Աստծու գործերին, ավելի լավ է նախ տեսնեն իրենց աչքի գերանը, ապա ուրիշի շյուղը ու հարց տան իրենք իրենց, թե Աստված ինչո՞ւ իրենց չի պատժում, քանի որ բոլորի պես նրանք էլ մեղավոր են: Այսպիսի մտքեր առաջացնելու և հարցի պատասխանը տալու նպատակով է, որ Հիսուս Տաճարում զոհված Գալիլիացիների մասին բացված խոսակցությանը անմիջապես կցում է թզենու օրինակը:

Այգում տնկված մի թզենու ծառ կար: Ամեն անգամ, երբ Տերը գալիս էր, պտուղ չէր գտնում նրա վրա. երկար գնալ գալուց հետո հրահանգում է, որ այգեպանը այդ ծառը կտրի, որպեսզի իզուր տեղը հողը չզբաղեցնի:

Այգեպանը խելացի մարդ լինելով, խնդրում է Տիրոջից, որ մի տարի ևս համբերի, որպեսզի ամեն խնամք տանի և շուրջի հողը փորելով նոր միջոցներ մտածի՝ *«Եթե հաջորդ տարի էլ պտուղ չտա»,*- ասում է նա, *«կտրելը հեշտ է»:* Թզենու ծառը ամենալավ օրինակը պիտի լինի բոլորիս համար, երբ մենք այսօր տեսնում ենք անազնիվ ու անարդար մարդկանց, որոնք ապրում են և առանց քրտնելու դրամ կուտակում ու անկախ մեր կամքից մեր մեջ բողոքի ձայն՞ է բարձրանում առ՞ Աստված. «*Այսպիսիները ինչո՞ւ են ապրում, ինչո՞ւ Աստված անպետք, անպտուղ և չորացած ծառը արմատով չի հանում և ամեն չար գործ չի պատժում»:*

Պատասխանը պարզ է և հասկանալի. ինչպես թզենու ծառը թանկ էր այգեպանի համար և նա ժամանակ է խնդրում Տիրոջից, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրը մեծ արժեք է ներկայացնում Երկնավոր Հոր համար, որը մեղավորի մահը չի ցանկանում, այլ նրա չար ճանապարհից ետ դառնալն ու ապաշ-

խարելը: Չենք ուզում ընդունել, որ իբրև բանականություն, խիղճ ու կամք ունեցող մարդիկ, իրավունք չունենք հոռետես լինելու ու կորցնելու մեր հույսը և հավատքը: Քամու մի փոքր ալիքից, այսինքն՝ նեղություններից, դժվարություններից և նույնիսկ մի փոքր դժբախտությունից հետո, մտածում ենք, թե ամեն ինչ կորավ, այլևս չենք կարող շարունակել մեր կյանքը: Մոռանում ենք, որ մեր հույսն ու ապավենը Ամենազոր Տերն է, որը մեզ պիտի հասնի մեր աղոթքի ու հավատքի շնորհիվ:

Ծերունի ուսուցիչներից մեկն ասել է. *«Եթե մեզ թույլատրված է խոսել Աստծու առաքինությունների մասին, յավ իմացեք, որ Նրա ամենամեծ առաքինությունը՝ ներողամտությունն է»:* Եվ իրապես, ինչպե ս պետք է կառավարվեր տիեզերքը, եթե նրա Ստեղծիչ-Արարիչը այդ առաքինությունը չունենար, եթե Նա այգեպանի պես իմաստությամբ, համբերությամբ ու սիրով չխնամեր մեզ մինչև ցանկալի արդյունք տալը:

Մեր այսօրվա կյանքից ճանաչում ենք հայ մարդկանց, *(ես շեշտում եմ մեր ժողովրդի զավակներին, որովհետև մեր նպատակը առաջին հերթին մեր ցավը բուժելն է, առանց անտեսելու այլ ժողովուրդներինը),* որոնք սխալ ու անազնիվ ճանապարհների մեջ ընկնելով, շատ վտանգավոր են դառնում: Նրանք ամեն րոպե կարող են մեծ վնասներ հասցնել թե իրենց ընտանիքի անդամներին ե թե շրջապատի մարդկանց: Բայց ի զարմանս մեզ հանկարծ հանգամանքները փոխվում են և Աստուած անտեսանելի կերպով այնպիսի մի նոր, շրջադարձային ուղղություն է տալիս նրանց կյանքին, որ նրանք դառնում են օրինակելի ու արդար մարդիկ իրենց շրջապատի և հաճելի՝ երկնավոր Տիրոջ համար:

Ավետարանից կարող ենք օրինակ բերել Սողոսի պարագան, որը քրիստոնյաների թունդ հալածողն էր, սակայն Հիսուսի կանչով դարձավ նշանավոր Պողոս Առաքյալը: Ո՞վ կարող է ասել, թե մեզանից ո՞ր մեկի համար ինչ է սահմանված Աստ-

ծու գրքում: Այո, մենք մեզ իրավունք ենք վերապահում ապավինելու Աստծու ներողամտությանը և ողորմածությանը, սակայն երբեք չպետք է մոռանանք, որ այնուամենայնիվ պտղատու ծառն է միայն կյանքի արժանի, իսկ անպտուղ չորացած ծառը՝ կացինով կտրվելու ու այրվելու: Ներողամիտ Դատավորը մի տարի, երկու տարի, տաս-քսան կամ հարյուր տարի կարող է սպասել, բայց միենույնն է մի օր Իր Դատաստանը պիտի անի՞, թե՝ ո՞չ: Այդ ժամանակ վա՛յ մեղավորներին, նրանց վախճանը հայտնի է՝ *«կտրվել և այրվել»:* Ամեն:

ԿՅԱՆՔԸ ԶՈՀԵԼ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հովհաննեսի Ավետարանի 15–րդ գլխի 12-15 համարներում Հիսուս աշակերտներին համարում է Իր բարեկամները, այլ ոչ թե Իր ծառաները:

«Այս է իմ պատվերը, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ որ ես ձեզ պատվիրում եմ: Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտի, թե տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. 15:12-15):

Մեծ փիլիսոփա Սոկրատը հարցնում է մի ծերունու, թե իր կյանքում ինչի՝ համար է բոլորից շատ գոհ ու երախտապարտ: Նա պատասխանում է. *«Երախտապարտ եմ այսօրվա եղածիս և իմ բարեկամների համար, որ ունեմ»:*

Բարեկամ բառը կազմված է *«բարիք» և «կամենալ»* բառերից: Ճշմարիտ բարեկամը միշտ բարին է ցանկանում:

Անգլիայի Վիկտորիա թագուհին հետևյալ վկայությունն է տալիս իր երկու վարչապետների մասին. *«Երբ Վիլյամ Կլատսընի հետ եմ խոսում, կարծում եմ, թե ինձ հետ է աշխարհի կարևորագույն առաջնորդներից մեկը, իսկ երբ Բենիամին Տիզրայելի հետ եմ խոսում, նա ինձ զգացնել է տալիս, թե ես աշխարհի մեծագույն և ամենակարևոր առաջնորդներից մեկն եմ»:*

Քրիստոնյաները կանչվել են բարեկամ լինելու և բարեկամ շահելու, որովհետև նրանք նույն ընտանիքի մաս են կազմում:

Ժողովրդական գեղեցիկ և իմաստուն խոսք է. *«Մինչև քեզ նեղություն չտաս, ուրիշին բարիք չես կարող անել»:*

Իմ այս խոսքերը հաստատելու համար ուզում եմ ձեզ մի հետաքրքիր դեպք պատմել. կյանքից վերցված մի իրողություն, ուր մարդը իր երիտասարդ կյանքը զոհում է ընկերոջ համար: Բոլորիս համար էլ պարզ է, որ ամեն մարդ չի կարող այս զոհողությունը կատարել, եթե իր սիրտն ու հոգին լցված չլինեն քրիստոնեական սիրով և հավատով:

Սա տեղի է ունեցել Ամերիկայի հարավային նահանգներից մեկում:

Մի օր գերեզմանատան մեռելաթաղը տեսնում է օտարական մեկին, որ տարիներ առաջ թաղված մի զինվորի գերեզմանի վրա դառնորեն արտասվում էր և առատորեն թանկարժեք ծաղիկներ դնում նրա գերեզմանին;

Նա հետաքրքրությունից դրդված մոտենում է անծանոթին ու հարցնում.

- *Ձեր զավա՞կն է այս գերեզմանում հանգչողը:*
- *Ո՛չ:*
- *Ձեր եղբա՞յրն է:*
- *Ո՛չ:*
- *Ձեր ազգականներից մե՞կն է:*
- *Երբե՛ք:*
- *Խնդրում եմ, թույլ տվեք հարցնել նորից, թե ո՞վ է այս հանգուցյալը, որի համար այսքան առատ արցունք եք թափում:*
- *Մանկության ժամանակվա մի բարեկամ է,- ասում է անծանոթը,- որը պատերազմի շրջանում նկատի ունենալով իմ բազմանդամ ընտանիքի ապրուստի պատասխանատվությունը, այդ օրերին տիրող օրենքի համաձայն իմ տեղը զինվորագրվեց այն պատճառաբանությամբ, որ ամուսնացած չէր, ծնողներ չուներ, խղճաց ինձ և եղբայրական անկեղծ զգացումներից մղված՝ գնաց պատերազմի դաշտ, ծանր վիրավորվեց և այլևս տեղեկություն չունեցա նրա մասին:*

Ամբողջ հինգ տարի փնտրեցի նրան և վերջապես ինձ հայտնեցին, որ մահացել է և թաղվել այս քաղաքի գերեզմանատան մեջ: Երեք հազար մղոն ճամբորդեցի և հիմա ուրախ եմ,, որ իր մոտ եմ գտնվում ու կարող եմ գոնե արցունքով և աղոթքով իմ երախտագիտությունը հայտնել իմ հերոս բարեկամին…»:

Այս պատմելուց հետո օտարականը հուզված քանդում է իր հետ բերած մեծ կապոցը, որը մի պղնձե գեղեցիկ խաչ էր և դնում գերեզմանի վրա: Խաչի վրա պղնձե տառերով գրված էր հետևյալ նախադասությունը.

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱՎ

Բարի սիրտ ունեցողը չի կարող առանց հուզմունքի կարդալ այս պատմությունը, պատմություն, որը կարող է դաս տալ այն մարդկանց, որոնք մտածում են միմիայն իրենց ես-ի մասին; Հասարակ մի մարդ պարզ մեկի համար իր կյանքն է զոհում ոչ թե հավիտենական կյանք պարգևելու, այլ նրա կյանքը երկարացնելու համար: Անշուշտ սա էլ մեծ զոհողություն է: Մինչդեռ մեր Տերը, որը նույնպես երիտասարդ էր՝ ընդամենը 33 տարեկան, Իր կյանքը զոհեց մարդկության փրկության համար, որպեսզի հավիտենական կյանք ունենանք:

Ճանաչենք մեր ամենամեծ Բարեկամին՝ Հիսուս Քրիստոսին, մոտենանք նրան ու կատարենք Նրա բոլոր պատվիրանները, որոնք սեր և արդարություն են քարոզում ու բարի գործեր կատարենք՝ առանց սպասելու որևէ փոխհատուցման: Ամեն:

ԻՄ ԽՈՍՔԵՐԸ ՃՇՄԱՐԻՏ ԵՆ

«Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն« (Մատթ. 24:35):

Մատթեոսի Ավետարանի 24-րդ գլխի 35 համարից է այս խոսքը, ուր մեր Տերը խոր և ուժեղ արտահայտությամբ հայտարարում է, որ երկինքն ու երկիրը մնայուն չեն, իսկ Իր խոսքը, ճշմարտությունը և Աստծու հայտնությունն են, որ հավիտենական են:

Ինչպես հայտնի է բոլորիս, Հիսուսի խաչափայտը դարեր շարունակ կորած էր: Չորրորդ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մոր՝ Հեղինե թագուհու կողմից այն գտնվել է աղբանոցում: Ըստ ավանդության՝ երեք նույնանման խաչեր են հայտնաբերվում և, որպեսզի հայտնի լինի, թե ո՞ր խաչափայտն է Հիսուսինը, մահացած մի պատանու մարմինը հերթով դնելով նրանց վրա, նրա կենդանությամբ գտնում են Տիրոջ խաչափայտը:

Եկեք մի պահ գնանք երկու հազար տարիներ առաջ և տեսնենք, թե ի՞նչ ունեին առաջին դարի քրիստոնյաները իբրև քարոզության ուժ և միջոց: Գիտությո՞ւն, հարստությո՞ւն, քաղաքական ո՞ւժ, իշխանությո՞ւն: Ոչ մեկը, ինչ որ ունեին, իրենց հավատացած ճշմարտությունն էր, իրական և ճշմարիտ խոսքն էր, որը նիզակից, սրից ու զենքից ավելի ուժեղ էր:

Այդ խոսքն ամփոփվեց նաև գրի մեջ, որը ճանաչվում է իբրև Սուրբ Գիրք՝ Աստվածաշունչ: Սուրբ Գիրքը այն ուժն է, որով քրիստոնյաները

կարո-ղացան աշխարհում Աստծու ճշմարտությունն արտահայտել գրի ու գրականության և արտասանված խոսքի միջից:

Ամեն տարի մեր Եկեղեցին ոգեկոչում է Թարգմանիչ Վարդապետների հիշատակը՝ գլխավորությամբ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի: Մեր այբուբենը ծնվեց Աստծու խոսքի, ուժի նկատմամբ մեր ժողովրդի կարոտով և դրա գերագույն արտահայտությունը եղավ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Գտավ գիրը, որպեսզի Աստծու խոսքը թարգմանի, ժողովրդին տա՝ գրով կենդանացնելու հա- մար: Ահա թե ինչու մեզ համար Աստվածաշունչը ամենանվիրական գիրքն է եղել ու է մինչև այսօր: Մեր հայրերը ամբողջ պատմության ընթացքում հայտարարեցին 5-րդ դարի Եղիշե պատմիչի խոսքերով՝ *«Մենք իբրև Հայր ճանաչում ենք Ավետարանը և իբրև Մայր՝ Եկեղեցին»:*

Հարց տանք մեզ, թե՝ *«Արդյոք մենք որդինե՞ր ենք այս ուխտի և հետևո՞ւմ ենք մեր հայրերի օրինակին»:*

Եթե մեր պատասխանը ոչ է, ապա ո՞ւր է մեր որդիական սերը, ինչո՞ւ դարեր շարունակ հայտարարեցինք այս խոսքերն իբրև Եկեղեցու կյանքի նշանաբան: Եկեք դառնանք իսկական զավակներն այդ սուրբ ծնողների՝ Ավետարանի և այն կենդանի կերպով մեր ժողովրդի մեջ թարգմանող ու տարածող Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Գիրը Սուրբ Գիրքը չէ, այլ ավելին է, քան գիրը: Հոգին է, որ արտահայտվում է գրի միջից: Պողոս առաքյալն ասում է. *«Օրենքը, որ գիր է,*

սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում» (Բ. Կորնթ. 3:6): Ավետարանին մոտենալիս մեր ժողովուրդը համբուրում է ոչ թե արծաթը, մագաղաթը, այլ հաղորդվում է այդ հոգու հետ, որն այդ գրի, մագաղաթի միջից փոխանցվել է մեզ բոլորիս Քրիստոսից, մեր հայրերի զոհողության ու նահատակության ճանապարհով: Սուրբ Գիրքը պետք է կարդալ՝ այդ հոգու հետ հաղորդակցվելու, այլ ոչ թե գիտականորեն քննելու համար, այսինքն՝ այն պետք է կարդալ հավատով: Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր թղթում ասում է. *«Քանզի նման չենք ուրիշների, որ Աստծու խոսքի վաճառքով են զբաղվում, այլ իբրև անկեղծ մարդիկ, իբրև Աստծու կողմից ուղարկվածներ, խոսում ենք Քրիստոսով Աստծու առաջ» (Բ. Կորնթ. 2:17):*

Փառք ենք տալիս Աստծուն, որ մեր ժողովուրդը իմաստությամբ կարողացավ գործնական հողի վրա արժևորել Ավետարանը և նրա ճշմարտությունները գրի միջոցով սփռել մեր երկրում:

Աշխարհում ինչքան երկրներ քանդվեցին ու կործանվեցին, ինչքան եկեղեցիներ, պալատներ, դղյակներ, գրքեր, ձեռագրեր ոչնչացվեցին, սակայն Աստծու խոսքը միշտ կենդանի մնաց:

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի այս հրաշալի խոսքերը կարծես ճիշտ այսօրվա համար ասված լինեն. «Հայե՛ր, սի՛րտ առեք, սգի, աղոթքի սուրբ ժամից հետո, դարձե՛ք արևին ու արիացե՛ք: Միացե՛ք սիրովը սեպուհ ազգի, եղե՛ք միաբան, մեկ կամք, մեկ հոգի, ձեռք-ձեռքի՛ տվեք, հաստա՛տ մնացեք հայոց աշխարհի սեգ լեռների պես և ձեր հայացքը Վեհամայր Մասիսներն ի վեր՝ կրկին ուխտեցե՛ք հավատա-

րիմ մնալ հայոց պատմության, հայոց ազգության և հավիտենական Մայր Հայաստանին»:

Եկե'ք Վեհափառ Հայրապետի այս խոսքերը իբրև առաջնորդող ոգի ունենալով՝ մեր ոսկեդարի Հայրերի նման Աստվածաշունչը փոխադրենք մեր կյանքի մեջ և այն համարենք մեր ուղեցույցը, որ-պեսզի նրա շնչով ավելի զորանանք մեր հավատքի մեջ, ուժ առնենք ու լցվենք սիրով մեկս մյուսի նկատ-մամբ: Ամեն:

ՄԻ ՄԱՏՆԻՐ

«Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն» (Ղուկ. 22:48):

Գեթսեմանիի պարտեզում Հիսուսն այս հարցը տվեց Իր աշակերտ Հուդա Իսկարիովտացուն:

Մինչ այդ Հուդան իր հետ եկած զինվորներին ցույց էր տվել իր ուսուցչին և ասել. *«Ում հետ ես համբուրվեմ, նա՛ է, նրան բռնեցեք» (Ղուկ. 22:48):*

Այս խոսքերը կարդալիս բազմաթիվ հարցեր են ծագում յուրաքանչյուրիս մտքում. ո՞րն է տարբերությունը քրիստոնեության և մյուս կրոնների միջև, ինչո՞վ է նա առավել կամ պակաս, ինչո՞ւ մենք՝ հայերս, ուրիշ մի այլ կրոն չդավանեցինք, այլ քրիստոնյա դարձանք: Հայ հավատացյալները կարող են պատասխանել, թե այն հավիտենական կյանք է խոստանում, մեկը կարող է առարկել՝ ասելով, թե նույնը խոստանում են նաև բոլոր մյուս կրոնները, կամ քրիստոնեությունը բարություն ու ազնվություն է քարոզում, այդ դեպքում կարող են պատասխանել, թե կրիշնայականությունը երևի նույնպես բարության նշույլներ ունի: Որոշ կրոններում էլ կան նույն պահքն ու ծեսերը, ապաշխարությունն ու մեղքերի թողությունը, և միակ Աստծու գաղափարը: Ուրեմն վերջապես ո՞րն է քրիստոնեության առավելությունը: Պատասխանը պարզ ու հստակ է: Քրիստոս և Իր ապրած կյանքը: Եթե մյուս կրոններն ու նրանց հիմնադիրներն ավելի գաղափարախոսներ և փիլիսոփաներ էին, Քրիստոս ապրված ու ապրող կյանք է, քանի որ Նա Իր կյանքով մեզ օրինակ հանդիսա-

ցավ: *«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհ. 14:6)»,- ասաց Հիսուս:*

Եթե ընդունում ենք, որ Հիսուս մեզ հետ ու մեր մեջ է, նշանակում է այսօր էլ Բեթղեհեմի աստղը՝ իբրև կյանքում մոլորված հոգիների ուղեցույց, շողում է երկնակամարում, այսօր էլ մենք Մարիամի ու Մարթայի պես ողբում ենք մեր հանգուցյալներին և մտածում, որ եթե Աստված այստեղ լիներ, մեր հարազատը չէր մեռնի, այսօր էլ անառակ որդիների պես շատերս թափառում ենք բախտի նավով՝ մոռացած հայրական տուն ու հայրենիք: Ինչպես միշտ, այսօր էլ մեր շուրջն են փարիսեցին ու մաքսավորը, թերահավատ Թովմասը, կարճահասակ Զաքեոսն ու ձեռքերը լվացող Պիղատոսը, մատնիչ Հուդան ու աստվածասպան ժողովուրդը:

Ամեն բան իր տեղում է, դերերը նույնն են, միայն անցել է երկու հազար տարի, և տարբեր են դերակատարները: Մե'նք ենք դրանք՝ այսօրվա ապրողներս:

Այսօր ես ուզում եմ խոսել դրանցից միայն մեկի՝ Հուդա Իսկարիովտացու մասին, բայց ոչ թե նրա, որը, ապրելով երկու հազար տարի առաջ, համբուրելով մատնեց իր Վարդապետին, այլ այ'ն Հուդայի, որն այսօր էլ կա և ապրում է: Մե'ր միջի Հուդայի, քանի որ, երբ մենք սկսում ենք խոսել Հիսուսի ժամանակներից, այնպես է թվում, թե մենք խոսում ենք անցած-գնացած բաներից: Ո'չ, այսպիսի մոտեցումով մենք սպանում ու կործանման ենք հասցնում քրիստոնեությունը: Հերովդես թագա-

վորն այսօ'ր էլ փնտրում է Նորածին Արքային՝ Մանուկ Հիսուսին, Բարի Սամարացին մի'շտ մեզ հետ ու մեր մեջ է և Հուդան մատնում է երեկ, կմատնի նաև այսօր ու վաղը:

Այստեղից կրկին հարց է ծագում, թե «*Ո՞րն է տարբերությունը Հուդայի և մյուս մեղավոր մարդկանց միջև, ինչո՞ւ Հիսուս ներեց գողին, ավազակին, շնացողին ու անառակին, բայց չներվեց Հուդան, արդյոք սա անարդարություն չէ*»:

Եթե մակերեսորեն մտածենք Հուդայի արարքը մեծ հանցանք չէր: Ինչո՞ւ, որովհետև Հիսուսին բոլորն էին ճանաչում, Նա քարոզում էր երես առ երես Տաճարում ու փողոցներում, ժողովրդի մեջ էլ գիտեին Նրան: Հուդան ուղղակի ցույց տվեց մեկին, ում բոլորը ճանաչում էին, ուրեմն ինչո՞ւ մարդու նկատմամբ այդքան անսիրտ ու դաժան լինենք:

Այդ բոլորը, սակայն մեզ թվում է առաջին հայացքից: Փորձենք գտնել բուն արմատը և ավելի խորը կերպով հասկանանք, թե ի՞նչ է նշանակում մատնիչ: Աստված հանդուրժում է բոլոր մարդկային մեղքերը և պատրաստ է ներելու, բայց Նա չի ներում

մատնիչներին, մանավանդ, երբ նրանք մատնում են սուսիկ-փուսիկ, ժպտերես, կեղծ բարոյականության եւ համբույրի քողի տակ:

«Ո՞վ է մատնիչը»: Հիշենք հայոց պատմությունը, քանի-քանի բերդեր են ընկել մատնիչների պատճառով, քանի-քանի անմեղ կյանքեր ու ճակատագրեր են կործանվել նրանց մատնությամբ: Մատնիչն ունի մարդկային բոլոր մեղքերը՝ հպարտություն, նախանձ, չարություն, ագահություն, ատելություն, վախկոտություն ու խորամանկություն:

Վերջապես *«Ո՞վ է մատնիչը»:* Մատնիչը նա է, որին օգտագործում ու հետո կախաղան են բարձրացնում հենց իրենք՝ նրան վճարողները՝ պատճառաբանելով, թե՝ *«Այսօր նրա՛ն մատնեցիր, վաղն էլ ինձ ես մատնելու»:* Ահա՛ թե որտեղ է թաքնված չարի գլուխը: Այ՛ս է մատնիչի վախճանը:

Ռուս մեծ մանկավարժ Սուխլոմլինսկին իր հուշերում այսպիսի մի դեպք է պատմում.

«Երբ ինձ նշանակեցին բանտի հատուկ ուղղիչ դպրոցի տեսուչ (խոսքը պատանիների բանտի մասին է, ուր գողերին ու ավազակներին դաստիարակում էին), ես մտածում էի՝ ինչպես կառավարել երկու հազար գող ու ավազակ 14-ից 18 տարեկան հանցագործ տղաների: Մի քանի օրից իմ մոտ կանչեցի յոթ աշակերտի, որոնց քիչ թե շատ վստահում էի, ու ասացի, որ պետք է ինձ օգնեն, որպեսզի կառավարենք դպրոցը: Տղաների մեջ նրանք պետք է տեսնեին, թե ինչ էր կատարվում ու ինձ տեղեկացնեին:

Մի քանի ամսից ես ամեն ինչ իմանում էի: Իմ աշակերտները գալիս ու պատմում էին ինձ օրվա լուրերը: Ես հանգստացնում էի սխալ գործողներին,

պատժում ու հեռացնում: Այդ յոթ հոգին բարեխղճորեն կատարում էին իրենց տեսչի հանձնարարու- թյունը, սակայն մի քանի ամսից ես դադարեցրի իմ աշխատանքը: Ինչո՞ւ, որովհետև սարսափեցի: Ես դաստիարակում էի յոթ լրտես ու յոթ մատնիչ: Եվ որոշեցի, որ եթե ես այնպիսին չպետք է լինեմ, որ հավատան, վստահեն ու կիսվեն ինձ հետ, ուրեմն ես լավ մանկավարժ չեմ»:

Մեզ թվում է, որ մատնությամբ, զրպարտությամբ, ուժով ու չարախոսությամբ կարող ենք մեր կյանքում հաղթանակներ տոնել, բայց դա առնվազն չհասունացած մարդու սխալ մտքի արդյունքն է: Գուցե մատնությունն ու զրպարտությունն էլ կարող են հաղթանակներ տոնել, բայց որքան կարճատև են դրանք, վկան առկա է՝ մարդկության պատմությունը: Եվ միայն սիրո հաղթանակն է մնայուն ու հավերժական, վկան Հիսուս Քրիստոսն է:

Աշխարհակալներ, ավաղ, միա'յն իրենց վախճանին զգացին, թե կյանքը սպառել էին նյութական արժեքների ձգտումով: Մարթին Լութեր Քինգը, նրանցից մեկի մասին խոսելով, ասում է. *«Ֆրանսիայի մեծ զորահրամանատար Նապոլյոն Բոնապարտը, մի ակնարկ կատարելով իր ապրած կյանքի վրա, հայտարարեց. «Ալեքսանդր Մեծը, Կեսարը, Շարլըմանը և ես կառուցեցինք հսկա կայսրություններ, սակայն դրանք բիրտ ուժը ունեցան իբրև հենարան: Ժամանակներ առաջ Հիսուս սկսեց մի կայսրություն, որի հենարանը եղավ սերը և մինչև այսօր միլիոնավոր մարդիկ զոհվում են Նրա համար»:*

Բոնապարտը նույնիսկ խոստովանել է*«Բացի ավետարանից՝ ես ոչ մի բանի առաջ ծունկի չեմ գա, որովհետև ես աշխարհը գրավեցի զենքով, բայց Հիսուս առանց զենքի՝ սիրով»:*

Բոլորս էլ ունենք մեր սխալներն ու թերությունները, մեղավոր ենք, ինչպես Հիսուսի աշակերտները: Շատերը լքեցին Հիսուսին, Պետրոսն ուրացավ,

Թովմասը կասկածեց Նրա Հարությանը, մյուս աշակերտները դավաճանեցին ու փախան խաչից ու Խաչյալից, բայց բոլորն էլ Սուրբ Հոգու զորությամբ մեծ քարոզիչներ դարձան, ու նրանց սխալները չհիշվեցին: Միայն Հուդան կրեց մատնիչի անսրբելի կնիքն ու մարդկության հավերժական անեծքը:

«Ովքե՞ր են մատնիչները»: Գերմանացի մեծ մտածող Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգության»՝ մատնիչներն ու հայրենիքի դավաճանները տառապում են ու պիտի տառապեն դժողքի ամենաստորին մասերում:

Մի' մատնեք, որպեսզի ձեզ տեսնելով՝ ձեր ընկերներն իրենց ճանապարհը չշեղեն, և ձեզ մոտենալով՝ ձեր իսկ բարեկամները խոսակցությունը կիսատ չթողեն:

Մի' մատնեք, թող ձեր պատճառով մարդիկ չդատվեն եւ չխաչվեն, լավագույն դեպքում Պիղատոսի պես լվացեք ձեր ձեռքերը և ինչ լինելու է թող լինի, բայց մի' խաբվեք երեսուն արծաթով, որպեսզի չլսեք Տիրոջ ձայնը. *«Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն»:* Մի' վերցրեք կյանքի այդ դերը և մի' փորձեք խաղալ այն:

Ամեն օր աղոթեցե՛ք, որպեսզի հեռու մնաք չար գործերից, մանավանդ մատնությունից, նախանձից, անեծքից, քանի որ աղոթող մարդը չի կարող այս մոլություններն ունենալ, որովհետև բարության և ճշմարտության գլխավոր աղբյուրը հանդիսացող մեր Տերը Հիսուս Քրիստոս, նրա մեջ է: Ամեն:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԸ

21-րդ դարում ենք ապրում և այնպիսի ժամանակներում, ուր բարին և չարը, լավն ու վատը միասնաբար գոյություն ունեն կողք-կողքի: Սակայն հաճախ այն երևույթները, որոնք տեղի են ունենում մեր շուրջը և մենք տեսնում ենք, մեզ զարմացնում են ու ակամա մտածում ենք, թե ինչպե՞ս չար, անօրեն, անհավատ և անխիղճ մարդիկ երբեմն շատ ավելի լավ պայմաններում են ապրում, քան մենք, որ ազնիվ, մաքուր ու արդար ենք, հավատում ենք Աստծուն ու ամեն օր փառաբանում Նրա ճշմարիտ և սուրբ անունը ու հաճախ մեր մտքում այսպիսի հուզումնալից հարցեր են առաջ գալիս. «*Եթե Աստված կա, ապա ինչո՞ւ չարը պիտի լինի ու ինչպե՞ս է, որ դեռ այն գոյություն ունի»:*

Պատասխանը ստանում են, երբ կարդում ենք Մատթեոսի Ավետարանի 13–րդ գլխի 24-30 համարները, որտեղ Հիսուս խոսում է Երկնքի արքայության մասին՝ պատմելով այս առակը:

Հիսուս Երկնքի արքայությունը նմանեցնում է մի մարդու, որն իր արտում բարի սերմ է ցանում: Եվ երբ բոլորը քնած էին, թշնամին որոմ է գցում ցորենի սերմերի վրա (*որոմը այն վնասակար մոլախոտն է, որը խեղդում է պտղաբեր բույսերը, այս դեպքում՝ ցորենը)*: Ժամանակն անցնում է և ցորենը սկսում է աճել ու նրա հետ հայտնվում է որոմը: Ծառաներն առաջարկում են քաղել, բայց տերն ասում է. *«Ո՛չ, միգուցե որոմը քաղելիս ցորենն էլ հետը արմատախիլ անեք: Թողեք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձը, և հնձի ժամանակ ես հնձողներին*

կասեմ՝ նախ այդ որոմը քաղեցե՛ք և դրանից խուրձե՛ր կապեցեք այրելու համար, իսկ ցորենը հավաքեցե՛ք իմ շտեմարանների մեջ» (Մատթ. 13:29-30):

Երկու հազար տարիներ ի վեր խոսվում է այս առակի մասին: Բայց եկեք մտածենք, թե 21-րդ դարում ապրող մարդկանց համար ի՞նչ նշանակություն ունի փոխանցելիք այս առակը: Սերմնացանը, որը ցանեց բարի սերմը, Աստված՝ Ինքն է, իսկ արտը՝ աշխարհն է: Ցորենը բարի մարդիկ են, որոնք Աստծու խոսքը լսում ու գործադրում են, իսկ թշնամին սատանան է, որը գալիս է գիշերը ու իր սև գործն անում:

Աստված մեզ շնորհել է այս գեղեցիկ կյանքը ու պատվիրել աշխատել, ստեղծել, մշակել և բարի գործեր կատարել Իր փառքի համար: Մեզանից յուրաքանչյուրը՝ իբրև քրիստոնյա, հոգևորական թե աշխարհական, մեծ թե փոքր, ինչ պաշտոնի, ի՛նչ աթոռի, ինչ մակարդակի կամ կյանքի ինչ պայմաններում էլ գտնվելիս լինի, պիտի ապրի Տիրոջ պատվիրաններով և հաջորդաբար փոխանցի դրանք մեր ապագա սերունդներին: Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետի բացատրության համաձայն՝ իբրև հավատացյալներ *«ոչ թե լինենք մի խողովակ, որի միջից հոսի Աստծու խոսքը, այլ պետք է լինենք մի սպունգ»,* որով նախ մենք մեր կյանքով ցույց տանք, որ ապրում ենք Քրիստոսի լույսով ու Նրա ճշմարիտ ուսմունքի համաձայն, որպեսզի օրինակ ծառայենք ուրիշներին:

Որոմները այն չար խորհուրդներն են, որոնք արմատ են գցում մեր կյանքում, երբ մեր սրտից

բացակայում է Քրիստոսի ներկայությունը: Այն կարող ենք զգալ այն ժամանակ, երբ սեր, հարգանք ու հասկացողություն ունենանք իրար նկատմամբ և ձեռք ձեռքի տված աշխատենք Աստծու փառքի համար: Հետևաբար, չար խորհուրդներ երբեք մի' մտածեք և մի' քննադատեք բոլոր նրանց, որոնք անիրավ ու անարդար կյանքով են ապրում և կարծեցյալ հաջողություն են ունենում այս աշխարհում, որովհետև Հիսուս ասում է. *«Այդ է նրանց վարձքը»:*

Ձեզանից շատերը լավ ծանոթ են հայրենի նշանավոր և անմահ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ, հեքիաթներ, կյանքից վերցված զանազան պատմություններ, ինչպիսիք են մեզ բոլորիս ծանոթ «*Անուշը», «Թմբկաբերդի առումը», Լոռեցի Սաքոն», Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները», «Լուսավորչի կանթեղը», «Մի կաթիլ մեղրը», Չարի վերջը»* և այլն:

Այստեղ հարմար է մեջբերել *«Չարի վերջը»* հեքիաթը, որը կապ ունի այսօրվա առակի հետ: Սա մի պատմություն է կկվի և աղվեսի մասին, ուր Հովհաննես Թումանյանը հրաշալի կերպով ընդգծում է բարու և չարի հակասությունը, վախճանն ու գնահատանքը:

«Ըստ այս պատմության, կկուն ապրում էր անտառում՝ ծառի վրա, իր երեք ձագերով: Աղվեսը մի օր գալիս է ու նրան սպառնում, թե կացինով ծառը կկտրի, եթե նա իր ձագերից մեկին չտա իրեն: «Կկուն երկու անգամ լալով տալիս է իր ձագերին: Երրորդի պարագային նրան հանդիպում է ագռավը, որը նրա

լացը տեսնելով խղճում է նրան ու ասում, որ աղվեսի սպառնալիքը սուտ է, քանի որ անտառը բոլորին է պատկանում: Կկուն աղվեսին հանդիմանում է և չի տալիս իր վերջին ձագին, բայց ասում է, որ ագռավն է խրատել իրեն: Աղվեսը սուտ քուն ձևանալով, բռնում է ագռավին ու ուզում է ուտել, սակայն ագռավը նրան խորհուրդ է տալիս տիրանալ ուտելիքներով լի մի պահեստի: Աղվեսը, ագահությամբ լցված, լսում է նրան ու գնում նրա ցույց տված տեղը: Մինչ այդ ագռավը թռչելիս տեսել էր, որ մի թփի տակ շուն կար: Երբ ագահությունից կուրացած աղվեսը թռչում է կարծեցյալ ուտելիքներով լի պահեստի վրա, դրա փոխարեն շունն է դուրս գալիս բռնում նրան ու սկսում խեղդել: Աղվեսի վերջին խոսքերն են լինում.

- Ա՜խ, ե՜ս,… ա՜խ, ե՜ս…

Զգույշ աղվես,

Փորձանքի մեջ ընկնեմ էսպե՜ս…

Ա՜խ անիրավ,

Դու սև ագռավ...

Իսկ ագռավը թռչելով պատասխանում է.

-Ինչքան էլ որ լինես զգույշ,

Չարի համար վաղ թե ուշ,

Էդ է պահված,

Աղվես աղա,

Ղա՜, դա՜, դա՜, դա…»:

Չարի կործանման հրաշալի մի օրինակ է տալիս մեզ բանաստեղծը, որի մեջ կյանքի մեծ խորհուրդ կա:

Մեզանից յուրաքանչյուրը թող փորձի ցանել այն, ինչ որ Աստված տվել է մեզ. Նրա խոսքը, սերը և

այն կատարելը ոչ միայն պարզ գործողություն համարի, այլ, ինչպես Հիսուս է ասում. *«Դու ինքդ՝ իբրև քրիստոնյա, պետք է այդ հողում մեռնես»:*

Հնարավոր է, որ ձեզանից շատերը զարմացած ակամա այսպիսի հարց ունենան. *«Ո՞վ է լսել այսպիսի բան, մի՞թե կարելի է չարին պահել: Ինչպե՞ս կարող է Աստված, որ այնքան բարի, ողորմած, գթած, սիրով լի է, պահի չարին, տեղ տա անիրավին ու ավազակին»:* Պատասխանը ավելի քան հստակ է: Աստվածային նախախնամության մեջ գաղտնիքներից մեկը չարիքների հանդեպ ցույց տրված Աստծու ներողամտության խորհուրդն է բացատրում:

Աստված չարին պահում է երկու պատճառով. Նախ՝ երբ որոմը քաղվի, ցորենն էլ հետը չկորչի, խնայվի ցորենը, չփչանա, և երկրորդ՝ Աստված՝ իբրև գթառատ, սիրող ու ներողամիտ Հայր, որոմն էլ է թողնում ցորենի կողքին, որպեսզի մի օր էլ այն դարձի գա և իսկական, պտղաբեր ցորեն դառնա ու փրկվի, այսինքն՝ Աստված հնարավորություն է տալիս մեղավորին, այս դեպքում չարին զղջալու, դարձի գալու և հասկանալու իր սխալը ու այս ձևով ներում ստանալու: Ամեն:

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»
Մատթ.7:12):

Ավետարանից մեջբերված այս ոսկե օրենքն իր մեջ մեծ իմաստ ունի, որովհետև, երբ մարդ միայն իր անձի մասին է մտածում և սպասում, որ բոլորն իրեն գովաբանեն ու փառաբանեն, այդպիսին հիվանդ է:

Դժբախտաբար այսօր աշխարհում աճող երևույթներից մեկը ինքն իր մասին մտածելու հոգեվիճակն է:

Միշտ ես, ուրիշն ինձ համար կարևոր չէ:

Ահա մի մտածելակերպ, որը պարզ բառով կոչվում է անձնասիրություն: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,... ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավի- տենական կյանքի համար» (Հովհ. 12:24-25):*

Շատերն այն կարծիքին են, որ բարձր դիրքի վրա գտնվող մարդիկ բոլորն էլ կրթված են լինում: Սխալ մտածում է: Ռուս ակադեմիկոս Դիմիտրի Լիխաչովը, որը բացառիկ գիտելիքներով օժտված գիտնական էր, ռուսական հեռուստա-տեսությամբ իր ելույթներից մեկում ասում է. *«Ժլատը կարող է ձևանալ առատաձեռն, տգեղը՝ գեղեցիկ և այլն: Բայց ներքին կուլտուրայից զուրկ մարդը երբեք չի կարող ձևանալ կուլտուրական: Դա Աստվածատուր է»:*

Ձեզանից մեծ մասը, չասեմ բոլորդ, կարդացել եք բազմաթիվ հեքիաթներ անմիտ թագավորների մասին, որոնք, ժառանգական հաջորդականությամբ գահը գրաված լինելով, տիրացել են թագավորական իշխանության: Այդպիսի թագավորներից մեկի կատարած անհեթեթ մի կարգադրության մասին հյուսված հեքիաթը՝ իբրև բարոյական դաստիարակության նյութ, ուզում եմ ձեզ պատմել:

«Ժամանակներ առաջ լինում է չի լինում, ինչպես սովորաբար սկսվում են հեքիաթները մի թագավոր, որը, ձանձրացած լինելով իր պալատի շուրջ գտնվող պարտեզներից, անտառներից ու լճերից, ուզում է ծով գնալ՝ լողալու: Թագավորական պահակագնդի հսկողության տակ նրա ծառաները ծովափին ընտրում են մի այնպիսի տեղ, որտեղ բնակչություն չկա և ուր ընդհանրապես ժողովուրդ չի գնում զբոսնելու: Այդ առանձնացված վայրի հարմարություններն ունեցող ծովափը, սակայն, ուներ մեկ անհարմարություն՝ քարքարոտ էր: Ծովեզրը ավազի փոխարեն ծածկված էջ ծովային քարերով, որոնց վրայից թագավորը քայլելու դժվարություն է ունենում: Ծով մտնելու և այնտեղից դուրս գալու պահին այս դժվարությունը հարթելու նպատակով իր հետ լողացող երկու իշխաններին հրամայում է, որ իր երկրում գտնվող ամբողջ կովերը մորթեն ու նրանց մորթին փռեն ծովեզրի քարերի վրա: Թագավորական հրաման էր. պետք էր գործադրել:

Սա բարոյալից պատմվածքի ճանապարհով փոխանցվող մի օրինակ է անմիտ թագավորների տված հրամաններից, որոնք դարեր շարունակ ստրկացրել են պարզ ժողովուրդներին ու իրենց քմահաճույքին ենթարկել նրանց:

Թագավորի օգնական իշխանները, պալատ վերադառնալով, կանչում են պալատական խորհրդականներին ու հաղորդում նրանց արքայական հրամանը: Իմաստուն մարդիկ, իմանալով թագավորի սահմանափակ մտածելակերպը, անմիջապես գնում են նրա մոտ, որպեսզի նրան հետ կանգնեցնեն իր վտանգավոր որոշումից, մի որոշում, որը, հակառակ իր համար բարիք բերելուն, պիտի վնասեր ամբողջ երկրի տնտեսությանը: Պալատի արքայական խորհրդականներից մեկը թագավորին առաջարկում է մորթել մի փոքրիկ ուլ և նրա մորթուց պատրաստել մուճակներ հողաթափեր, որպեսզի քարերի վրա քայլած ժամանակ թագավորը նեղություն չկրի: Նա, զարմանալով այսքան պարզ լուծումի վրա, խելքին մոտ է գտնում եղած առաջարկը, և լսելով իր խորհրդականի խրատը՝ հրաժարվում է իր ծրագրից:

Ահա ձեզ եսասիրության հրաշալի մի օրինակ:

Կյանքում շատ մարդիկ կան, որոնք սպասում են, որ ամեն ինչ իրենց ուզած ժամանակ ու իրենց մտածածի պես լինի: Այդպիսիներն իրապես անմիտ թագավորին խրատող մի անձնավորության կարիք ունեն, որը պարզապես իրենց հիշեցնի, որ պետք է մի քիչ էլ երբեմն ուրիշների մասին մտածել: Մտածո՞ւմ ես արդյոք ուրիշների մասին, այն ժամանակ Աստված քեզ համար կստեղծի լավագույն պայմանները: Միշտ պետք է հիշել և գործադրել կյանքում Ավետարանի այս ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց»:* Ամեն:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու աղոթքներում գեղեցիկ գոհաբանական մի խոսք կա, որը բազմաթիվ անգամներ կրկնվում է. *«Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:* Գիտության և իմաստասիրության աշխարհում նման խոսք գոյություն չունի: Դպրոցական աշակերտներն այսպիսի երգեր չեն սովորում: Աշխատանքի ու առևտրի աշխարհում նույնպես նման բան չեք կարող լսել: *«Փառք Հօր»-ը և «Այժմ եւ միշտ»-ը* զուտ կրոնական, եկեղեցական, քրիստոնեական և աստվածային օրհներգության տողեր են:

Իբրև հայ քրիստոնյաներ լավ գիտենք, որ Աստված հավիտենական է, սակայն աշխարհը, բնությունը, տիեզերքն ու Նրա բոլոր ստեղծագործությունները ժամանակավոր են: Մարդն էլ հավիտենական չէ: Մենք բոլորս ծնվում ենք մանուկ, պատանի և չափահաս ենք դառնում, ծերանում ու մի օր էլ մահանում ենք: Այս է Աստծու օրենքը մարդու համար: Առաջին մարդը՝ Ադամը, չկատարելով Աստծու կամքն ու անհնազանդ գտնվելով Նրա հրամանին, անմահության փոխարեն մահը ժառանգեց. *«Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող պիտի դառնաս» (Ծննդոց 3:19):*

Ամեն մարդ ժամանակի մասին նույն հասկացողությունը չունի և նույն ձևով չի հասկանում ժամանակի գինը, նույնիսկ կառչում են բոպեներից. «*Ժամանակը թանկ է», «Ժամանակը ոսկի է»,*

«Ժամանակ չունեմ»,- ասում են նրանք: Մյուս կողմից ուրիշ մարդիկ էլ կան, որոնք ճիշտ հակառակ ձևով են մտածում: Ժամերը գալիս ու գնում են, նրանց պետքն էլ չի. *«Ժամանակ շատ ունեմ»,*- ասում ենք նրանք և ժամադրությունն էլ չեն հարգում, միշտ ուշանում են ու խլում մարդկանց թանկագին ժամանակը, ոչ միայն այդ, ուրիշներին էլ խորհուրդ են տալիս, որ նրանց էլ չշտապեն

«Ժամանակ չունեմ» հաճախ կրկնվող այս խոսքը մի տեսակ սովորություն դարձած ձև է, որը շատ անգամներ գործածվում է ոչ իր իրական իմաստով, այլ դժբախտաբար, այն օգտագործվում է իբրև առիթ պատասխանատվությունից խուսափելու կամ թերացման պարագային՝ ինքնարդարացման համար:

Մեր Եկեղեցու նշանավոր հայրերից Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. *«Ավելի պատվական բան, քան ժամանակը, չկա... դրա համար կյանքի ժամանակը պետք է լցնել բարի գործերով, որովհետև անցնող ժամանակը ոչ մեկն այլևս ետ չի կարող վերադարձնել»:*

Ամենայն Հայոց Վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը իր «*Կտակ և բարի հիշատակ»* անվան տակ աշխատության մեջ գեղեցիկ խրատներ է տալիս մեզ՝ կյանքի ու մահվան մասին.

«Մարդ՝ թե՛ այր և թե՛ կին, երբ հիշե յուր օրհաս վախճանը և մտաբերե, թե՝ ինքն մահկանացու է և պիտի մեռնի ու թողու այս աշխարհը, ընտանիք, սիրելիք, գանձ, հարստություն և շատ կալվածները, իմաստուն և արդար տնտես է այն մարդը, եթե ցանկա յուր մահվան և գերեզմանին

մեջ ևս ապրիլ: Եվ ի՞նչպես, կտակավ և բարի հիշատակով, այսինքն յուր սեպհական հարստութենեն մի բաժին հանե ազգին, բաժին հանե աղքատ ընտանյաց առանց երբեք զրկելու յուր ընտանիքը: Երջանիկ կլիներ ազգը, երջանիկ կլիներ մեր հայրենիքը, եթե ազգին մեջ գտնված յուրաքանչյուր գանձատեր անձինքը առանց կտակի և հիշատակի չմեռնեին»:

Աշխատենք, որ ժամանակի երեք սահմանումները՝ անցյալը, ներկան ու ապագան, լինեն մեր տրամադրության տակ, այսինքն՝ ներկան օգտագործենք լավագույն ձևով՝ դասեր քաղելով մեր անցյալից, և լավատեսությամբ դիմավորենք ապագան: Անցյալը այլևս ետ չի վերադառնալու, իսկ ապագան կարող է մերը չլինել: Որևէ ընկերություն և կազմակերպություն, որը զուրկ է նորոգվելու ընդունակությունից, չի կարող առաջադիմել, շատ-շատ իր տեղում կմնա, բայց անպայման մի օր կքայքայվի:

«Անցյալը մի հզոր ուժ է այն ժամանակ միայն, երբ դու ես տիրապետում նրան, բայց կդառնա ծանր մի բեռ, երբ նա կտիրապետի քեզ»,- ասում է 20–րդ դարի հույն մտածող, գրող և հասարակական գործիչ՝ Կոստանդին Բեցիսը:

Աստված անփոփոխ է: Նույնն էր երեկ, նույնն է այսօր և նույնը պիտի լինի մշտապես: Հավիտենական և անսահման են Աստծու բոլոր երկնային շնորհները՝ Նրա ողորմությունը, բարությունը, զորությունը, սերը, ներողամտությունն ու նախախնամությունը, որոնք չափ ու սահման չունեն:

Ժամանակի մեջ ապրելը մեր մարդկային բնության մի տեսակ *«պարտադրանքն»* է: Մեր հայրապետներից երջանկահիշատակ Գարեգին Ա-ն ասել է. *«Ժամանակը սահում է ջրի պես: Եթե կարողանաս մի կաթիլ բռնել, փրկած կլինես և քեզ, և կաթիլը հողի ու ծովի մեջ անհայտանալու ճակատագրից»:* Այս տողերը կարդալիս մեզանից ամեն մեկը կարող է ինքն իրեն հարց տալ. *«Քանի՞ կաթիլ բռնեցի իմ ամբողջ կյանքի ընթացքում, որոնք կարող էին ուրիշների հոգու ծարավը հագեցնել»:* Դժվար է հաշվել:

Մեր Տերն Իր կյանքով ու Իր հաղթական Հարությամբ մարդուն դարձրեց հավիտենա-կանության ժառանգորդը: Նա եկավ ու հաստատեց մի Թագավորություն, որտեղ վերջ են գտնում արցունքը, ցավն ու տրտմությունը: Եկեք այս կարճ կյանքի ընթացքում մեր բարի գործերով արժանի՝ լինենք այդ Երկնային թագավորությանը: Ամեն:

ՊԻՂԾ ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ
(ՄԱՏԹ. 12:43-45):

Ավետարանում կան պատմություններ, որոնք, չգիտես ինչո՞ւ, ուշադրության չեն արժանանում, օրինակ՝ Մատթեոսի Ավետարանի 12-րդ գլխի 43-45 համարներում նշված *«Պիղծ ոգու վերադարձի»*բացատրությունը:

«Սակայն պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի վայրերում, հանգիստ է որոնում և չի գտնում: Այն ժամանակ ասում է՝ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկա. և գալիս է ու այն գտնում դատարկ՝ մաքրված ու կարգի բերված: Այն ժամանակ գնում և վերցնում է իր հետ իրենից ավելի չար յոթը այլ ոգիներ և մտնում բնակվում է այնտեղ. և այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան առաջ էր...» (Մատթ. 12:43-45):

Սուրբ Գրքից գիտենք, որ մարդը ծնվում է Ադամական մեղքով, այսինքն մեր ծնված օրից չարը բնակվում է մեր մեջ, միևնույն ժամանակ մենք մեր ծնողներից, առաջին ուսուցիչներից ու հոգևոր պատգամներից սովորում ենք, որ այս երկրային կյանքում պարտավոր ենք բարի գործեր կատարել, որպեսզի չարից հեռու մնանք: Չարը կա մեր մեջ, մի ձևով կծկվում է ու իրեն հարմար մի անկյուն գտնելով՝ սպասում է մեր հոգիներում... Բարին, իշխանությունը իր ձեռքը վերցնելով, փորձում է մարդկանց սիրով ու գեղեցկությամբ լավ կյանք պարգևել:

Սակայն, վստահ եմ, որ մեզանից ամեն մեկը, իր փորձառությունից ելնելով, կարող է ասել, որ երբեմն հակառակն է պատահում, երբ բարին իր դիրքերը զիջում է և չարը, առիթն օգտագործելով մի

րոպե իսկ չի կորցնում, անմիջապես անցնում է գործի: Ատելություն, նախանձ, բամբասանք, բարկություն, անբարյացակամություն, ագահություն, ո՞րն ասեմ, ինչո՞ւ չէ, նաև անտարբերություն: Մեզանից ո՞վ ծանոթ չի սրանց:

Դժբախտաբար տեսնում ենք, որ մեր մեջ բարին ու չարը փոխն ի փոխ են աշխատում: Եթե այդպես է, ապա դա շատ վտանգավոր ու ոչ աստվածահաճո մի կյանք է, որը մենք ապրում ենք: Հիսուս ասում է, որ մարդը չի կարող երկու տիրոջ ծառայել, մեկին պիտի ատի, մյուսին՝ սիրի, չի կարող միաժամանակ և' առողջ լինել և' հիվանդ: Կա'մ մեկը, կա'մ մյուսը:

Բոլորիս էլ քաջ հայտնի է, որ բնության մեջ ջերմություն պարունակող միջավայրում մանրեներն իրենց շատ լավ են զգում, արագ բազմանում են ու տարածվում: Պիղծ ոգու համար էլ հոգին իդեալական հանգստի մի վայր է, որի մասին է զգուշացնում մեզ Տերը: Սակայն մեղքի պատճառը միայն չարի գոյությունը չէ, այլ մանավանդ մեր հավատքի պակասությունն է: Այո', մի' զարմացեք, հավատքի պակասությունն ու թուլությունն է: Բժիշկները զանազան վարակիչ հիվանդությունների դեմ տարբեր դեղեր են մեզ սրսկում, որպեսզի մեր մարմինը կարողանա դիմադրել: Չարի դեմ պայքարելու համար մեր միտքը, սիրտն ու հոգին կարիք ունեն Աստծու ճանաչման, Նրա պատգամների ներարկման ու զորացման: Որքան Աստծու հանդեպ հավատքը խոր արմատներ թողնի մեր մեջ, այնքան մենք չարից պաշտպանված կլինենք:

Ինչո՞ւ ենք սակայն մենք այսքան վախենում չարից ու փորձում հեռու մնալ նրանից, որովհետև չարը հոգու խավարն է, նա մեզ դեպի մահ է առաջնորդում: Չարը մարդուն անճանաչելիորեն կարող է այնպես կերպարանափոխել, որ տարիներ հետո նրան կարող ենք չճանաչել: Չարը չի կարող մարդուն կերպարանափոխել, եթե իրապես նրա մեջ Աստված է բնակվում, սակայն ավելի հստակեցնելու համար մեր ասածը բերենք մարդու կերպարանափոխության մի օրինակ.

«Վերածննդյան շրջանում ապրող (խոսքը 15-16-րդ դարերի մասին է) մի երիտասարդ՝ դեռևս աշխարհում անհայտ, բայց խոստումնալից մի նկարիչ, ավետարանական ընթերցումներից հիացած ու ներշնչված, որոշում է Հիսուս Քրիստոսի պատկերը հավերժացնել կտավի վրա: Այս նպատակով փողոցներում, հյուրանոցներում, պալատներում շրջելով՝ հարմար մի մարդ է փնտրում, որի դեմքը ազնվություն, խոնարհություն, իմաստություն և սեր արտահայտի: Երկար որոնումներից հետո մի հյուրանոցում նա գտնում է մի հարուստ երիտասարդի, որն իր փնտրածն էր: Հիսուսի նկարը պատրաստ էր… Անցնում են տարիներ, նկարիչը, արդեն աշխարհում մեծ հեղինակություն ձեռք բերած, ուզում է մատնիչ Հուդային նկարել ու փնտրում է մեկին, որի դեմքը հոգնած լինի, տանջանք, դժգոհություն և ատելություն արտահայտի, մի խոսքով՝ Հիսուսի ճիշտ հակառակ դեմքը: Փողոցների անկյուններում նստած մուրացկանների դեմքերն ուսումնասիրելուց հետո վերջապես գտնում է իրեն հարմար մեկին:

Խեղճ աղքատ ծերուկին իր արվեստանոցն է տանում, կերակրում ու ապա անցնում է աշխատանքի: Նկարելու ժամանակ ծերունին խորամանկորեն ժպտում է: Մեծ Վարպետը հարցնում է նրան ժպտալու պատճառը: Ծերունին հիշեցնում է նրան, որ ինքն այս նույն արվեստանոցում եղել է արդեն մի անգամ՝ քառասուն տարիներ առաջ, երբ երիտասարդ նկարիչը իրեն այստեղ էր բերել՝ Հիսուս Քրիստոսի պատկերը նկարելու համար:

Մի՞թե մարդ կարող է այսքան փոխվել, որ Հիսուսի անմեղությունը արտահայտող դեմքի նմանությունն ունենալով՝ քառասուն տարիներ անց մատնիչ Հուդային նմանվի, ուղղակի անհավատալի է, բայց իրականություն է:

Այս իրական և հուզիչ դեպքը մի լավ օրինակ է տեսնելու համար, որ մարդ, հեռանալով բարուց, գեղեցիկից ու մանավանդ Աստծուց, ժամանակի ընթացքում ինչքան կարող է փոխվել:

Փորձենք մեր միջից հանել չարը ոչ թե գեղեցիկ խոսքերով, այլ հավատքով ու, մանավանդ գործով, և ոչ թե վաղը, այլ հիմա՝ հենց այս պահին: Դուք կարող եք հարցնել՝ ինչպե՞ս: Շատ պարզ կերպով: Օրինակ՝ ամեն մեկս, իմանալով թե չիմանալով, կարող է նեղացրած լինենք մեր բարեկամներից, ընկերներից կամ ծանոթներից ոմանց կամ նրանք նեղացած կլինեն մեզանից, այս պահին փորձենք ներել նրանց և ոչ միայն ներենք, այլ նաև ներողություն խնդրենք: Մեր Տերը սքանչելի մի օրինակ է, քանի որ Նա խաչի վրա Հորից խնդրեց, որ ների Իրեն տանջողներին, չարչարողներին ու, վերջապես՝ խաչողներին; Աստված բնակվում է այնտեղ, որտեղ կա ներողամտության ոգի, որովհետև ներելը մեծ առաքինություն է:

Եթե սիրենք ու ներենք, հեռու կմնանք չարիքից: Ամեն:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի»
(Մատթ. 10:22):

Մատթեոսի Ավետարանից վերցված այս խոսքերը Հիսուս կարծես այսօրվա համար ասած լինի:

Ով պատրաստ է համբերելու ու դիմանալու զանազան նեղությունների, դժվարությունների և մինչև վերջ հաստատ մնալու իր հավատքի մեջ, նա՝ միայն պիտի ապրի: Հավատացյալը եթե համբերություն չունենա, կնմանվի այն ցորենի հատիկին, որն ընկնում է ժայռի վրա և աճելու փոխարեն չորանում է հող չունենալու պատճառով: Մեր Տիրոջ տված մեկնաբանությունը սերմնացանի առակին պարզ է ու հասկանալի: *«Եվ որոնք որ ապառաժի վրա են, այդ նրանք են, որ երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում, սրանք միառժամանակ հավատում են, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում» (Ղուկաս 8:13):*

Ապրում ենք այնպիսի մի դարում, որտեղ քրիստոնությունը սկզբնական դարերի պես այլևս հալածված կրոն չէ, ընդհակառակը, այն համարվում է տիեզերական կրոններից մեկը. ուրեմն ինչպե՞ս պիտի հասկանանք մեր Տիրոջ խոսքերը: Դրանք պետք է հասկանալ արտաքնապես և ներքնապես: Արտաքնապես կարող ենք թշնամիներ ունենալ: Սատանան՝ փորձիչը, չպիտի դադարի մեզ իր թակարդների մեջ գցելուց ու մեզ հաճախ պիտի երևա ոչ թե որպես չար ոգի, այլ իբրև բարի

հրեշտակ կամ արդար մարդ, շփոթի մատնելու մեր միտքն ու շեղելու մեզ ճշմարիտ ճանապարհից: Համբերել նշանակում է ներել մեզ հալածողներին ու հակառակորդներին, որոնք չարի ազդեցության տակ կուրացել են:

Մեր ասածը հաստատում է 21-րդ դարում ապրող երիտասարդի՝ շուտ տեղ հասնելու ցանկությունը: Աշխարհը մեծ քայլերով առաջ է գնում, նա ինչպե՞ս կարող է սպասել վաղվան, այդքան համբերություն իրեն ո՞վ է տվել: Շուտ հարստանալու ցանկությունը նրա մոտ անհամբերության նշան է: Ընդհանուր մի երևույթ է սա, որ աշխարհի բոլոր երկրների ու ժողովուրդների երիտասարդների մոտ նույն ձևով է արտահայտվում. Նրանք մտածում են, թե ինչպե՞ս անեն, որ շուտ հարստանան, և այս ճանապարհին, ցավոք, շատերն իրենց մարմինները փչացնում են բանտերի մութ խուցերում՝ առանց հասնելու *«երազային բարձունքներին»:*

Պողոս Առաքյալը հրաշալի ձևով է ներկայացնում երիտասարդների այս անհամբեր կյանքի երևույթը. *«Չգիտե՞ք, թե նրանցից, որ ասպարեզում վազում են, թեև բոլորն են վազում, բայց միայն մեկն է առնում հաղթության մրցանակը: Այնպես վազեցեք, որ հասնեք դրան» (Ա. Կորնթ. 9:24-25):*

Հետաքրքիր է իմանալ այս պատմության մասին.

«Մի մարդ բացառիկ ձևով խնամում էր իր աղավնիներին; Աղավնիների բույնը կարող էր մաքրության մրցանակ շահել: Այս մարդու ամենամեծ հաճույքն իր տան շուրջ աղավնիների թռիչքը դիտելն էր: Թռչունները, նրա ձայնը լսելով, մոտն էին հավաքվում, ոմանք ուտելիքը ստանում էին նույնիսկ ուղղա-

կի նրա ձեռքից: Սակայն ամեն տարի սեպտեմբերի առաջին կիրակիից սկսած ուղիղ երկու ամիս նա աղավնիներին բանտարկում էր վանդակում: Խեղճ թռչունները չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր իրենց բարեգութ տերն այդքան անխիղճ դառնալ և իրենց ազատությունից զրկել»:

Ի՞նչն էր սրա պատճառը: Պարզ էր, սեպտեմբեր ամսից սկսվում էր որսորդության շրջանը: Աղավնիների համար շատ վտանգավոր էր, կարող էին պատահական գնդակի զոհ դառնալ: Եվ Տերը շատ սիրելու պատճառով նախընտրում էր կարճ ժամանակով բանտարկել, քան թե կորցնել նրանց:

Ահա ճիշտ այդպես է վարվում նաև Աստված: Նա երբեմն թողնում է, որ չարը մեզ փորձության ենթարկի՝ ստուգելու համար մեր հավատքն ու նվիրվածությունն Իրեն: Սրա լավագույն օրինակը Հին Կտակարանից Հոբ Երանելու կյանքն է *(Հոբ 1:10-12),* երբ սատանան ուզեց փորձել նրա հավատքը և համբերությունը: *«Հոբը ձրի՞ է պաշտում Տիրոջը, չէ՞ որ դու ես պաշտպանել նրան արտաքուստ ու նրա տունը՝ ներքուստ և ամեն ինչ, որ կա նրա շուրջը: Բայց դե փորձիր մեկնել ու զցել քո ձեռքը նրա ամբողջ ունեցվածքին ու կտեսնես, որ նա դեմառդեմ կանիծի քեզ»,*- ասում է սատանան Աստծուն: Տերը պատասխանում է· *«Ահա նրա ամբողջ ունեցվածքը քո ձեռքն եմ տալիս, պայմանով, որ նրա անձին ձեռք չտաս» (Հոբ, 1:10-12):* Եվ ինչպես ծանոթ է սատանան նրա ամբողջ ունեցվածքը ոչնչացնում է ու նրա ամբողջ ընտանիքի անդամներին մեռցնում, սակայն ամեն անգամ Հոբը, երբ լսում էր իրեն հասած հերթական ողբերգության մասին, ձեռքերը երկինք էր բարձրացնում ու ասում. «*Իմ մոր որո-*

վայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ հետ առավ» (Հոբ. 1:20-22): Հակառակ իրեն հասած դժբախտություններին, նա միշտ փառք էր տալիս Աստծուն: Չարը պարտվում է, իսկ Աստված հպարտ է զգում Հոբի ծով համբերության համար և տասնապատիկ վարձատրում նրան: Հոբի նման մենք էլ պետք է, համբերող լինենք ու Աստծուն հավատարիմ մնանք և փառք տանք Նրան թե՛ ուրախության, թե՛ տխրության, թե՛ հարստության և թե՛ աղքատության ժամանակ:

Ձեր ուշադրությանն եմ ուզում հանձնել այս ուսանելի պատմությունը.

«Մի թագավոր կռվի է բռնվում իր թշնամիների դեմ: Առջևում մեծ բանակ տեսնելով՝ թողնում է իր զորքն ու փախչում: Վախից կանգնում է մի ժայռի մոտ՝ շունչ առնելու. տեսնում է մրջյուններին և մտածմունքի մեջ ընկած՝ հետաքրքրությամբ դիտում, թե նրանք ինչպես են շարժվում: Տեսնում է, որ մի մրջյուն իրենից մեծ ուտելիք է տանում: Քանի քանի անգամներ մրջյունը վերցնում է ուտելիքը, փորձում տանել, սակայն չի կարողանում, ընկնում է, նորից է բարձրանում և այսպես շարունակ: Թագավորը զարմանում է մրջյունի համբերության ու աշխատասիրության վրա և հետաքրքրությամբ նայում է, թե վերջը ինչ է լինելու: Վերջապես մրջյունը կարողանում է իր ուտելիքը տանել այն բարձր տեղը, ուր նպատակ էր դրել:

Այս տեսնելով՝ թագավորն անմիջապես նստում է ձին ու գնում ետ՝ դեպի պատերազմի դաշտ: Զինվորները, որոնք իրենց թագավորի բացակայության պատճառով արդեն սկսել էին թուլանալ թշնամու զորքերի ճնշման տակ, ուրախանում են, երբ տես-

նում են, որ նա գալիս է: Նրանց հարցին, թե թագավորն ո՛ւր էր գնացել, նա պատասխանում է, թե՝ նոր զորք բերելու, որը քիչ հետո պիտի միանա իրենց; Այս խոսքերով քաջալերելով իր զինվորներին՝ նա նոր թափով անցնում է հարձակման և հասնում հաղթանակի»:

Աստծու ծրագիրը իրականանալու համար ժամանակ ու համբերություն է պետք: Նրա ձեռքերը մաքուր ու ապահով են և երաշխավորում են մեր հանգիստը, խաղաղությունն ու կյանքը: Երբեք չկասկածենք: Մեր վստահությունն ու հավատքը ժայռի նման ամուր ու անխախտ պահենք: Փորձենք փակված ու մութ վանդակում նույնիսկ աղոթքով մեր հոգու հավատքի կանթեղը միշտ վառ պահել:

«Մի երիտասարդ, որը հավատքով էր, այցելում է անապատում ապրող ճգնավորին ու խնդրում, որ իրեն աշակերտ ընդունի:

Երիտասարդը ծերունի ճգնավորին դուր է գալիս, բայց ընդունելու համար մի քանի պայմաններ է դնում: Նա առաջարկում է, որ իր խրճիթի մուտքին դրված պղնձե արձանը գետին գլորի: Երբ հրամանը կատարվում է, ծերունի հարցնում է, թե այդ արձանը ցած ընկնելիս որևէ բողոք հայտնե՞ց կամ դիմադրե՞ց: Երիտասարդը ասում է՝ ո՛չ: Այս անգամ սուրբը նրան մի մուրճ է տալիս ու ասում.

Ուժեղ խփիր այս արձանին և գոռա նրա վրա:

Երիտասարդը կատարում է նրա հրամանը; Ճգնավորը հարցնում է, թե արձանը անհամբերության կամ բարկության նշաններ ցույց տվե՞ց, թե՝ ոչ:

Ո՛չ,- պատասխանում է երիտասարդը:

Զավա՛կս, եթե կարողանաս այս արձանի պես

համբերություն ունենալ, ինձ աշակերտ կդարձնեմ: Եթե չես կարող քո մեջ սպանել զգացմունքներդ, ուրեմն հարմար մեկը չես այսպիսի կյանքի համար, որն անտրտունջ աշխատանք, զոհաբերություն, սեր և համբերություն է պահանջում»:

Աշխարհը պատկանում է համբերողին:

Լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, թե կյանքի երջանկությունների աղբյուրը կան նույնիսկ, ինչո՞ւ չէ, բանալին՝ համբերությունն է: *«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով, հասնեք նրա խոստմանը, քանի որ մի փոքր, շատ փոքր ժամանակ ևս, և գալու է նա, ով պիտի գա և չպիտի ուշանա»,- ասում է Պողոս Առաքյալը (Եբր. 10:36-37):*

Հեթանոսների Առաքյալի այս խրատը մեզ ուղղություն է տալիս, որ իրապես մեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարվի, այսինքն՝ մեր ամենադժվար պահին հիշենք աշխատասեր ու համբերությամբ լի մրջյունին՝ Աստծու կողմից ստեղծված այդ փոքրիկ միջատին, և օրինակ վերցնենք նրանից, ինչպես թագավորը, որը հասավ հաղթանակի: Վստահ եղեք, որ մենք էլ կհասնենք մեր նպատակին: Ամեն:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

«Ով որ բարձրացնում էիր անձը՝ կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի»
(Ղուկ. 18:14):

Ճաշու Ավետարանից վերցված այս խոսքերը Ղուկասի Ավետարանի 14-րդ գլխի 11-14 համարներից է:

Հիսուսի այս արտահայտությունը կարծես ոչ թե երկու հազար տարիներ առաջվա, այլ այսօրվա համար ասված լինի, որովհետեւ ամեն մարդ՝ փոքր թե մեծ, հարուստ թե աղքատ, կին թե տղամարդ, փորձում են իրենք իրենց բարձրացնել, իրենց ես-ը առաջ քաշել՝ առանց հաշվի առնելու արժանավո՞ր են, թե՞ ոչ: Այս առակով Հիսուս փորձում է խոնարհ լինելու դաս տալ փարիսեցիներին: Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ մի օր, երբ Հիսուս ճաշի էր հրավիրված փարիսեցու տանը, նկատում է, որ ժամանող հյուրերը փորձում էին սեղանի պատվավոր, վերևի աթոռները գրավել: Նա պատկերավոր մի առակով սովորեցնում է նրանց, որ երբ խնջույքի են հրավիրվում, գլխավոր աթոռները չգրավեն, որովհետև, երբ իրենցից ավելի պատվավոր հյուրեր ժամանեն, տանտերը ստիպված պիտի կլինի նրանց սեղանի ներքևի աթոռների նստեցնել, այն ժամանակ ամոթով պիտի մնան:

Ընդհակառակը, եթե սկզբից նրանք ներքևի աթոռների վրա նստեն և ապա տանտիրոջ կողմից հրավիրվեն սեղանի վերևի աթոռներին նստելու,

իրենց խոնարհությամբ ներկաների մեջ հարգված անձեր պիտի հանդիսանան *(հմմտ. Ղուկաս 14:8-11):*

Հետաքրքիր է՝ թե ինչո՞ւ Հիսուս խոսեց այս մասին, ի՞նչ ցանկացավ ասել այս առակով և յատկապես ինչի՞ վրա ուզեց հրավիրել հրավիրյալների ուշադրությունը:

Հիսուս ներկաների ուշադրությունը հրավիրեց երկու առաքինությունների վրա:

Առաջինը՝ խոնարհության:

Երկրորդը՝ անշահախնդիր հյուրասիրության, ուրիշներին հարգելու ու պատվի արժանացնելու վրա՝ նրանց ուրախացնելու նպատակով:

«Խոնարհվիր, որպեսզի բարձրանաս». սքանչելի նշանաբան է: Երբ մի ուրիշը քեզ բարձրացնում է, դու ավելի մեծ պատվի ես արժանանում, քան, երբ դու ինքդ քեզ ես փորձում բարձրացնել: Մեծության արժանի է այն մարդը, որը գիտի խոնարհ լի. . . Եկեք կարդանք այսօր հրատարակվող նոր գրքերը, թերթենք հայախոս և այլ լեզուներով տպվող անթիվ ու անհամար թերթերը, ի՞նչ կտեսնենք: Դժբախտաբար, ուսումնասիրելով դրանք՝ կհասկանանք, թե ինչքան հեռու ենք գնացել այն պատմական ու փառավոր օրերից, երբ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի նման մի համեստ վարդապետ, Սուրբ Սահակ Կաթողիկոսի պես մի ժրաջան առաջնորդ, Վռամշապուհ թագավորի պես հավատքով ու ազնիվ հայորդի, Թարգմանիչ վարդապետների նման խոնարհ սպասավորներ հոգևոր հեղափոխություն կատարեցին մեր ժողովրդի ու Եկեղեցու կյանքում: Նրանք գիտեին, թե Աստված ինչպիսի շնորհներ էր պարգևել իրենց և ճաշկերույթին կանչվող մարդկանց պես ցանկու-

թյուն չունեին բարձր տեղ նստելու, այլ խոնարհաբար, լուռ, անաղմուկ, առանց սպասելու որևէ գնահատանքի և պատվի, նույնիսկ ավելիով կատարեցին իրենց հրաշալի գործերը: Փառք ու պատիվ նրանց հիշատակին:

Արդեն երկու հազար տարի է, որ մարդիկ խոսում են Աստծու անչափելի խոնարհության մասին: ավետարանի հեղինակներից սկսած՝ բոլոր նրանք, որոնք Քրիստոսի խոսքն են քարոզում, հիշում են Աստծու ցուցաբերած մեծագույն խոնարհությունը մարդկության պատմության ընթացքում:

Ով որ խոնարհվում է Աստծու առաջ, կբարձրանա և հաջողություններ կյասնի: Արդյոք չկա՞ն մարդիկ, որոնք կյանքի մեջ որոշ հաջողությունների հասնելուց հետո Աստծու զորությունն իսկ մոռանում են, մարդիկ, որոնք նվազագույն հեղինակություն և շքանշաններ ստանալուց հետո սուր են ճոճում իրենց նմանների դեմ՝ մոռանալով, որ բոլորս էլ համահավասար արժեք ունենք Աստծու աչքում: Պողոս առաքյալը իր հորդորը կարդալով այսպիսիներին, հրավիրում է նրանց ընթանալ ճշմարիտ կյանքի ճանապահով. *«Հագե՛ք ուրեմն, գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց» (Կող.3:12-13):*

Հետաքրքիր է իմանալ *«Մեծամիտ Տասնապետի»* պատմությունը.

«Տարիներ առաջ Միացյալ Նահանգների մի նավահանգստում խարիսխ նետած բեռնատար նավի վրայից զինվորները հսկայական գերաններ էին դուրս բերում: Տասնապետը, ձեռքերը կանթած, աջ ու

ձախ հրամաններ էր արձակում, երբեմն զայրացած հայհոյում էր զինվորներին: Բեռնակիր զինվորները, մի մեծ գերան երկու ծայրերից բռնած, փորձում էին ցամաք իջեցնել, բայց չէր հաջողվում: Իսկ տասնապետը շարունակում էր գոռալ ու հայհոյել: Այդ ժամանակ մի անցորդ, նկատելով ծանր վիճակը, մոտենում է նրան ու հարցնում.

- Ըստ երևույթին գերանը շատ ծանր է, դուք ինչո՞ւ չեք օգնում այն իջեցնելու համար:

Տասնապետը արհամարհանքով նայում է մարդուն ու ասում.

- Պարոն, ես տասնապետ եմ, իսկ եթե շատ ես մտահոգված զինվորների կացությամբ, համեցե՛ք ինքնե՛րդ օգնեցեք նրանց:

Անցորդը, առանց որևէ պատասխանի, մոտենում է զինվորներին, բռնում է գերանի մի ծայրից ու դժվարությամբ դուրս բերում նավից: Ապա քրտնած մոտենում է տասնապետին ու ասում.

- Պարո՛ն տասնապետ, ահա՛ իմ հասցեն: Խնդրում եմ նման դեպքերում ինձ կանչեք, ես ամենայն սիրով կգամ ձեզ և ձեր զինվորներին օգնության:

Անցորդը հասցեն տալիս է տասնապետին ու լուռ հեռանում:

Տասնապետը հետաքրքրությունից դրդված կարդում է թղթի վրայի գրված հասցեն և ապշում: Նա Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնն էր…»:

Ահա ձեզ խոնարհության մի գեղեցիկ օրինակ:

Սակայն այս ժամանակավոր կյանքում խոնարհությունը իբրև զգեստ հագնելուց ավելի, պետք է դրանով ապրել: Կյանքի այս ձևը մարդու առաջ

բացվող մարտահրավերներից մեծագույնն է: Իզուր չի ասված. *«Խոնարհությունը աստվածային է»:* Այս խոսքը երկու իմաստ ունի. Նախ՝ *խոնարհվելը սովորական մի գործ չէ ու ամեն մարդու բան էլ չէ, այլ առանձնահատուկ ներքին ուժ է պահանջում և երկրորդ՝ խոնարհությունը մարդուն նմանեցնում է Իր իսկ Ստեղծողին՝ Արարիչ Աստծուն:*

Հրավիրյալների այս առակում նոթ մահացու մեղքերից մեկի՝ հպարտության քանդիչ ուժին հակադրված է խոնարհությունը: եթե հետադարձ հայացք նետենք մեր պատմությանը, կտեսնենք, որ մեր հայրապետները, առաջնորդները, գիտնականները, հրամանատարները, զորավարները և հերոսները, բոլորն էլ խոնարհ սիրտ են ունեցել: Իբրև ապացույց իմ այս խոսքերի՝ ուզում եմ հիշել 7-րդ դարի մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսներից Հովհան Օձնեցի հայրապետի դեպքը, որը, կարծում եմ խոնարհության լավագույն դասն է բոլորիս:

7-րդ դարում Հայաստանը գտնվում էր Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Հարկերը շատ ծանր էին ու ժողովուրդը դժվարանում էր վճարել: Հովհան Օձնեցի Կաթողիկոսն իր ժողովրդին այս վիճակից ազատելու համար, տեսակցություն է խնդրում ամիրապետից: Արաբ խալիֆը, որը լսել էր Վեհափառի իմաստության, մանավանդ արտաքին գեղեցկության մասին, սիրով համաձայնվում է ընդունել նրան: Վեհափառը գնում է նրա մոտ մեծ շքախմբով՝ Սուրբ Պատարագի շքեղ հագուստներով, մորուքի վրա ոսկու փոշի ցանած: Տեսակցության ընթացքում արաբ խալիֆը, որ քիչ թե շատ ծանոթ էր Հիսուս Քրիստոսին ու գիտեր Նրա

հեզ և խոնարհ լինելու մասին, Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրում է այս պարագայի վրա: Վեհափառի խնդրանքով բոլոր ներկաները դուրս են գալիս վրանից ու Կաթողիկոսը մերկանում է իր փառահեղ զգեստներից; Խալիֆը ապշած տեսնում է, որ Վեհափառն իր մերկ մարմնի վրայից հագել է մազից հյուսված կոշտ մի զգեստ, որի պատճառով նրա մարմնից արյուն էր հոսում: Արաբ խալիֆը, ի պատիվ Հայոց Հայրապետի հեզության, խոնարհվում է նրա առաջ և պատիվներով ճանապարհում նրան: Թեպետ նա արտաքինով հպարտ էր երևում, բայց ներքնապես Հիսուսի նման խոնարհ սիրտ ուներ:

Խոնարհ սիրտ ունեցող մարդը միշտ մտածում է առաջ գնալու մասին Նա չի գոհանում իր իմացածով ու չի պարծենում իր հավաքած իմաստությամբ, այլ հին մեծ իմաստասերի նման ասում է. *«Մի բան գիտեմ ու դա էլ ոչ մի բան չիմանալս է»:*

Ուրեմն եթե մենք էլ ուզում ենք մեր կյանքում բարձրանալ ու մեծ լինել մեր ընտրած ասպարեզում, պարտավոր ենք մեր անձն ազատել հպարտության մեղքից և մեր Փրկչի՝ Աստվածորդու նման խոնարհ լինել. *«Խոնարհվեցե՛ք ուրեմն Աստծու հզոր ձեռքի տակ, որպեսզի Նա ձեզ բարձրացնի ժամանակին» (Ա. Պետրոս 5:6):* Ամեն:

ՄԻ ՀԱՅՀՈՅԻՐ

«Մարդու համար փառք է հեռու մնալ հայհոյանքներից, բայց ամեն մի անզգամ խառնվում է այդպիսի բաների» (*Առակ.*20:3):

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց Գրքի 20-րդ գլխի 3-րդ համարից:

Բազում դարեր առաջ Սողոմոն իմաստունը պատգամում և խորհուրդ է տալիս մեզ ամենքիս հեռու մնալ հայհոյանքներից, որովհետև ըստ իմաստունի միայն անպարկեշտ մարդիկ են ընդունակ այդպիսի բաների: Չնայած այս խոսքերն արտասանվել են իմաստունի բերանից շատ վաղուց, բայց այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը, որովհետև մեր առօրյա կյանքում առանց անդրադառնալու մեզանից շատերն ընկնում են հենց այս մեղքի մեջ, բայց ցավալին այն է, որ մեր գիտակցության մեջ շատ հաճախ հայհոյելը մեղք չի համարվում, ավելին' նույնիսկ չենք էլ ցանկանում ուշադրություն դարձնել քրիստոնեական ոգուն խորթ այս երևույթին' կամ էլ լավագույն դեպքում, եթե անդրադառնում էլ ենք, ապա ամեն կերպ աշխատում ենք արդարացնել ինքներս մեզ ասելով, թե դիտավորյալ չեղավ: *«Խոսք էր, ասացինք անցավ-գնաց, էյ ինչ կարիք կա անընդհատ հիշեցնելու»:*

Գաղտնիք չի, եթե ասենք, որ շատեր իրենց ամենօրյա խոսքում հայհոյում են, իսկ դժբախտաբար ոմանց համար էլ այդպիսի խոսելաձևը դարձել է կարելի է ասել կյանքի մի մասնիկը: Այդպիսի մարդիկ չեն կարողանում իրենց կյանքը պատկերացնել առանց այդ *«գեղեցիկ խոսքերի»:* Ոմանք էլ սխալ-

մամբ կարծում են, թե հայհոյելով իրենց քաջությունն ու առավելությունն են ցույց տալիս մյուսների նկատմամբ:

Անկասկած, հայհոյելը կամ չհայհոյելը նախ և առաջ խոսում է տվյալ անձի բարեկրթության և դաստիարակության մասին: Իր հոգին ու միտքը կրթած մարդը, անկախ իր հավատացյալ կամ անհավատ լինելուց, իր պաշտոնից, սեռից ու տարիքից, երբեք չի հայհոյում, անվայել խոսքեր չի ասում, ընդհանրապես նրա բերանից արտաբերված յուրաքանչյուր խոսքն ու արտահայտությունը չափված են:

Հայհոյելուն նպաստում են նաև շրջապատն ու ընկերները, որոնք կարող են և՛ բարերար ազդեցություն ունենալ և՛ հակառակը: Ուստի շատ կարևոր է մարդու կյանքում այն միջավայրը, ուր նա մեծանում և կրթվում է: Անհատի ձևավորման գործում մեծ և կանխորոշիչ դեր ունի անշուշտ նաև ընտանեկան դաստիարակությունը: Որով մարդիկ շատ անգամ լավ կամ վատ սովորությունները ձեռք են բերում հենց այս միջավայրում: Իսկ ընտանեկան ճիշտ դաստիարակություն ստացած մարդը երբեք չի հայհոյում' անկախ իր դավանած հայացքներից: Ուստի շատերի մոտ կարող է այսպիսի հարց ծագել. *«Հայհոյելը մեղ՞ք է, թե՞ պարզապես անգիտակցորեն ասված խոսք կամ վատ սովորություն, որից դժվար է ձերբազատվել»:*

Սուրբ Գրքի համաձայն Հիսուս Քրիստոս Իր երկրային կյանքի ընթացքում բազմիցս անտեղի հանդիմանվում էր փարիսեցիների կողմից նախնիների ավանդությունը չպահելու և օրենքը խախտելու համար: Վերջիններս այնքան էին գերի դարձել օրեն-

քի տառին, որ մոռացել էին դրա բուն էությունը: Փարիսեցիներն այդպիսի քայլերով ամեն կերպ ցանկանում էին ժողովրդին հրահրել Տիրոջ դեմ ու վարկաբեկել նրան: Եվ ահա նմանատիպ դեպքերից մեկի ժամանակ, երբ Աստվածորդուն մեղադրում են, թե ինչու են Նրա աշակերտներն անլվա ձեռքերով հաց ուտում, Հիսուս հանդիմանում է նրանց՝ ասելով, թե նրանք Աստծու խոսքը վերածում են սովորության և ավելացնում է. *«Լսեցեք և իմացեք, ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում, այն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. 15:10-11),* այսինքն՝ ուտելիքը կամ անլվա ձեռքերով ուտելը չէ, որ պղծում են մարդուն, այլ՝ այն ամենը, ինչ որ դուրս է գալիս մարդու բերանից, այլ կերպ՝ սրտից: Ուստի Տերը շարունակում է Իր միտքն ավելի սուր կերպով և ասում. *«Քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ» (Մատթ. 15:19):* Ավետարանական այս դրվագից պարզ է դառնում, որ Տերն ի շարս այլ մեղքերի հայհոյանքն էլ է համարում մեծ մեղք, որը պղծում և ապականում է մարդուն՝ հեռացնելով իր Արարչից:

Պողոս Առաքյալն էլ իր թղթերում պատվիրում է, որ թոթափենք մեր բերաններից *բարկությունը, զայրույթը, չարությունը, հայհոյությունը,* որով այս ամենը հատուկ են միայն հին մարդուն և որպես Աստծու ընտրյալներ՝ հագնենք նորը զինվելով քրիստոնեական ճշմարիտ ու ազնիվ առաքինություններով, որոնք մարդուն կատարելության են տանում. *«Դուք ևս թոթափեցեք այդ բոլորը՝ բարկության, զայրույթ,*

չարություն, հայհոյություն և խեղկատակություն ձեր բերաններից:... Որպես Աստծու ընտրյալներ, սրբեր և սիրելիներ, հագեք, ուրեմն, գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց... Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կապն է կատարելության: Եվ ձեր սրտերում թող հաստատվի Քրիստոսի խաղաղությունը, որին և կոչվեցիք մեկ մարմնով. և գոհություն մատուցեցեք» (Կող. 3:8-15): Իսկ Հակոբոս առաքյալն իր ընդհանրական թղթում բազմապիսի դատողություններ է կատարում լեզվի մասին՝ հորդորելով հնազանդեցնել այն. *«Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության, մեր անդամների մեջ է հաստատված լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը և կրակով վառում մեր ամբողջ կյանքը, բորբոքված գեհենի կրակով» (Հակոբոս առաքյալ 3:6):* Եկեղեցու սուրբ հայրերը ևս իրենց գրվածքներում դատապարտում են հայհոյության երևույթը և խորհուրդ տալիս հեռու մնալ այս մեղքից, որովհետև այն կուտակումն է այլ մեղքերի: Հայհոյանքի պատճառ կարող են լինել *ոխակալությունը, ատելությունը, չարախոսությունը, նախանձը, բամբասանքը, հեշտասիրությունը, բարկությունը* և այլն:

Սիրտը խորհուրդների բնակավայրն է, ուստի բոլորիս պարտքն է մաքուր և անարատ պահել այն: Չէ՞ որ ըստ Ավետարանի *սրտով մաքուրներն են, որ պիտի տեսնեն Աստծուն (Մատթ. 5:8):* Բացառություն չեն նաև մեր լեզուն և բերանը: Իսկ այն ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծուն օրհնաբանելն ու փառաբանելը, Նրան որպես Տեր և Փրկիչ խոստովանելն ու Նրա ամենասուրբ կամքին հնազանդվելը: Չպետք է մոռանալ, որ մենք այդ նույն բերանով ենք ճաշակում

Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը, այսինքն՝ հաղորդություն ենք ստանում և այդ նույն բերանով հայհոյում ենք ու այլ մեղքեր գործում: *«Արդյոք համատեղելի՞ են այս երկուսը»:* Ահա հարց, որը ամեն մեկիս մտածելու առիթ պիտի տա:

Պողոս Ադրիանապոլսեցին ասում է. *«Արդարն հույժ բարի ու պիտանի են սրանք, երբ պատշաճն են խոսում, այսինքն՝ ընկերոջը խրատում են, տգետին ուսուցանում, տրտմածին մխիթարում կամ Աստծուն աղոթում: Նրան օրհնում ու Նրանից շնորհակալ լինում: Իսկ եթե անվայելն ու անպատեհն են խոսում, ապա* խիստ վնասակար ու չար են դառնում», այսինքն եթե մեր բերանն ու լեզուն իրենց բնականոն վիճակից դուրս են գալիս, ապա ոչ աստվածահաճո բաներ են խոսում և այդպիսով մեզ մեղքի մեջ են գցում: Իսկ քանի որ ըստ Առաքյալի, *«մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանքը՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ. 6:2,),* ուրեմն պետք է աշխատենք հեռու մնալ մեղքից:

Յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունն է սրբության և կատարելության ձգտումը, այսինքն մաքուր լինելը թե մտքով, թե սրտով, թե խօսքով և թե գործով: Ամեն մեկիս կյանքում գալիս է մի պահ, երբ մենք ուխտ ենք անում մեր Արարչի հետ՝ խոստանալով փոխել մեր նախկին ընթացքն ու Քրիստոսով նոր մարդ դառնալ: Այդ ուխտի պահը Մկրտութեան սրբազան խորհուրդն է, որով սրբվում ենք մեր մեղքերից եւ զինվորագրվում Քրիստոսի անպարտելի բանակին: Երբ քահանան մկրտում է երեխային, դրանից հետո կատարում է նաև Դրոշմի խորհուրդը, այսինքն՝ սրբալոյս մյու-

ոնով նա օծում է մկրտվողի բոլոր զգայարանները,' յուրաքանչյուր օծման ժամանակ արտասանելով համապատասխան բացատրական խոսքը: Քահանան ի թիվս այլ զգայարանների, անուշաբույր մյուռոնով դրոշմում է նաև մեր բերանը ասելով. *«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ պահպանություն բերանի և ամուր դուռ քո շուրթերին»,* այսինքն' մենք խնդրում ենք Ամենակալ Տիրոջից, որ հետայսու մարդն իր բերանն այլևս չպղծի, այլ ամեն ժամ օրհնություն դուրս գա այնտեղից:

Գիտենք, որ Մկրտության և Դրոշմի խորհուրդներով մենք կենդանի Աստծու տաճար ենք դառնում և զարդարվում Սուրբ Հոգու շնորհների լույսով: Մենք մեր ողջ գիտակցական կյանքում պարտավորվում ենք արթուն պահել և երբեք մեր մէջ չթմրեցնել սրբազան խորհուրդների միջոցով ստացած այդ լույսը, որի աղբյուրը Ինքը Սուրբ Հոգին է: Բայց երբ հայհոյում ենք, մեր մեջ հանգչում է Ս. Հոգու վառած այդ կենդանարար լույսը, իսկ մեր հոգին խավարում է:

Անտարակույս, ամեն մի չարախոսություն կամ հայհոյանք իր մեջ կործանարար վտանգ է պարունակում և առաջին հերթին վնասում հենց մեզ: Բերանից արտաբերված խոսքը պարզ խոսք չէ, այլ այն իր մէջ զորություն և ուժ ունի: Եվ ինչ որ դուրս է գալիս մեր բերանից, այն այլևս հնարավոր չէ ետ առնել: Իսկ այդ խոսքը շատ անգամ կարող է նաև ճակատագրական լինել: Երբ մենք հայհոյում ենք մեր դիմացինին, որը մեզ նման Աստծու պատկերով ու նմանությամբ է ստեղծվել, մենք մեր Արարչին ենք անպատվում և անարգում: Հայհոյանքը մեր թոյլ և

տկար լինելու մասին է խոսում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ մեկ այլ խորթ երևույթի, որը բարեբախտաբար շատ քիչ տարածում ունի հայկական ընտանիքներում, բայց կա: Խոսքս մանուկներին հայհոյանք սովորեցնելու տգեղ սովորության և այն խրախուսելու մասին է: Որոշ ընտանիքներում ազգականներին, մտերիմներին կամ պարզապես ինչ-որ հյուրի ընդունելիս սովորաբար կանչում են երեխային և ասում, որ նա հայհոյի, կարծես թե դա պարծանք լինի իրենց համար: Ինչ լավ կլիներ, եթե այդ երեխայի բերանից աղոթք և օրհնություն դուրս գար, կամ գեղեցիկ ու իմաստալից մի բանաստեղծություն և երգ: Ահա այս դեպքում արժեր ուրախանալ և հպարտանալ: Եկեք ազատագրենք ինքներս մեզ այս ահավոր սովորությունից և բռնենք սրբության ճանապարհը՝ միշտ մեր մտքում ունենալով Հիսուսի հետևյալ խոսքը. *«Քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. 12:37):* Ամեն:

Ս. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Ո՞ՒՐ ԵՍ ԳՆՈՒՄ ՏԵՐ»…

Ըստ ավանդության՝ Պետրոս Առաքյալը, որն իր քարոզությունների կենտրոնը դարձրել էր Հռոմ քաղաքը, մի օր փորձում էր հեռանալ այնտեղից ու տեսիլքի նման տեսնում է Յիսուսին, որն իր առջևից գնում էր խաչը ուսին և հուզված հարցնում է. *«Ո՞ւր ես գնում, Տէր»:* Հիսուս կարծես թե ուզում էր երկրորդ անգամ խաչվել: Ինձ թվում է, թե այժմ էլ այս փոթորկահույզ աշխարհում, երբ ամեն կողմ պատերազմներ, ցեղասպանություններ և կոտորածներ են տեղի ունենում, Հիսուս խաչն ուսին քայլում է երկնակամարով, պատրաստ նորից խաչվելու մարդկության փրկության համար, որովհետև այդպես էլ նրանք չհասկացան, թե ո՞րն էր Տիրոջ մարդանալու, չարչարվելու, խաչվելու և վերստին հարություն առնելու իրական իմաստը:

Մեր Տերը ցանեց Իր սիրո սերմերը, սակայն եկեք տեսնենք, թե երկու հազար տարիներ հետո դրանք ի՞նչ արդյունք են տվել: Այն ուղին, որ Հիսուս մեզ ցույց տվեց, արդյոք մենք քայլո՞ւմ ենք այդ ճանապարհով, թե պտտվելով նորից եկել ենք նույն տեղին և այժմ կարիքն ունենք, որ նորից *«Նա Իր վրա վերցնի աշխարհի մեղքերը»:* Ցավոք, այդպես է, որ կա: Մարդկությունը այդպես էլ չհասկացավ, որ Հիսուս մեզ ազատեց օրենքի գերությունից և տվեց սիրո օրհնությունը:

Հիսուս վերացրեց քարացած հոգևոր օրենքները և մեզ բերեց Իր կյանքի օրինակը ու կրոնը

դարձրեց ապրած, ապրող և կենդանի մի կյանք: *«Մի կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. 5:10),- ասաց Նա:*

Նա պաշտպանեց ու մեծ սիրով գուրգուրեց մոլորյալ և արհամարհված, շեղված ու խավարում քայլող հոգիներին: Հիշենք դրանցից մի քանիսին. անառակ որդուն, խաչված ավազակին, շնացող կնոջը, արհամարհված սամարացիներին, խուլին, համրին, կույրին, դիվահարին, բորոտին ու անդամալույծին: Ահա թե որոնցով շրջապատեց Իրեն: Իսկ մենք ի՞նչ ենք անում. Անառակ որդի ենք փնտրում, որպեսզի փակենք մեր տան դռները նրա առջև, ավազակ ենք փնտրում, որպեսզի դատապարտենք, խուլ, համր ու հիվանդ ենք փնտրում, որպեսզի ծաղրենք ու ծիծաղենք նրանց վրա:

Այսօր բոլորս էլ հիվանդ ենք ու մեղավոր: Հիսուս եկավ հիվանդների և մեղավորների համար, բայց դժբախտաբար, մենք չենք ուզում ընդունել մեր հիվանդությունն ու մեղավոր լինելը: Արդեն դա էր տարբերությունը փարիսեցու և Հիսուսի ոտքերը արցունքներով լվացող մեղավոր կնոջ միջև: Այդ կինը գիտեր, որ ինքը հիվանդ է, շատ հիվանդ և պետք ուներ Հիսուս-բժշկին, որովհետև ինքը միայնակ չէր կարող բուժվել: Իսկ փարիսեցին ինքն իրենից գոհ էր և իրեն բարձր էր դասում մարդկանցից, նա իրենց առողջ էր համարում և բժշկի կարիք չուներ:

Հավատացեք, որ այսօր էլ ոչինչ չի փոխվել և Հիսուս Իր Երկրորդ Գալստյան ժամանակ նույն հարցերն է տալու մեզ, ինչ որ առաջին անգամ:

Հիշենք Նրա մի քանի մեղադրական խոսքերը ուղղված մարդկության որոշ խավերին.

«Երուսաղեմ, Երուսաղեմ, որ կոտորում էիր մարգարեներին ու քարկոծում քեզ մոտ ուղարկվածներին: Քանի անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևի տակ, բայց չկամեցաք» (Մատթ. 23:37):

«Աստված մեռելների Աստված չէ, այլ՝ ողջերի, ուստի դուք խիստ մոլորված եք»:

«Կեղծավոր, նախ քո աչքի գերանը հանիր...»: «Ինչո՞ւ ինձ Տեր, Տեր եք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չեք անում»... (Ղուկ. 6:46):

«...Այլ, երբ ընդունելություն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին. կաղերին ու կույրերին և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարենը քեզ կհատուցվի արդարների հարության օրը» (Ղուկ. 14:12-14); (Իսկ ովքե՞ր են մեր ընթրիքների մասնակիցները և արդյոք երանելի՞ ենք մենք) և այլն:

Չլինենք հոռետես և վատ տրամադրվենք կյանքի նկատմամբ: Ավելի քան գեղեցիկ է Աստծու կողմից մեզ շնորհված այս կյանքը: Ընդհակառակը, եկեք փորձենք գտնել ետդարձի ճանապարհներ ու հասկանալ մեր Տիրոջը, թե՝ *«Ի՞նչ էր ուզում Նա իրականում»:* Նրա ուզածը մեր սրտերն ու հոգիներն էին, լցված աստվածային լույսով, ջերմ սիրով, անսահման ներողամտությամբ և անկեղծությամբ: Հայ ժողովուրդը երկու հազար տարիներ առաջ իմաստությամբ կարողացավ հասկանալ մեր Տիրոջ այս Վարդապետությունը և ընդունեց այն իր սրտի ու հոգու մեջ: Չնայած շատ անգամներ հավատի ու

հայրենիքի համար նահատակվեց, սակայն առանց տատանվելու շարունակեց, շարունակում է այսօր ու պիտի շարունակի իր աստվածահաճո ընթացքը դեպի ավելի լուսավոր ապագան: Դժվար ու ծանր ժամանակների սերունդ ենք մենք այսօր, քանի որ ամեն ինչ ունենալով՝ շքեղ տներ, թանկ մեքենաներ ու թանկարժեք զարդեղեններ, ոչնչով չենք կարող մեկս մյուսին զարմացնել, մանավանդ Ամերիկյան այս հզոր երկրում, ուր բախտի անիվը մեզ նետել է շարունակելու մեր նախնիների գործը: Կարող ենք մեկս մյուսին զարմացնել մի բանով միայն – մեր բարությամբ, մաքրությամբ ու ազնվությամբ: Մեզ բաժին է ընկել խելահեղ 21-րդ դարը, սակայն ամեն ինչ կորած չէ: Այստեղ տեղին է հիշել սրբերից մեկի՝ Սբ. Ֆրանչիսկոսի խոսքերը. *«Ահավոր և բարձրագույն սարսափների ժամանակաշրջանը, դա նաև ժամանակն է մեծագույն հույսերի ու սպասումների»:*

Հույսներս չկորցնենք և իբրև հավատարիմ զավակները Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, աղօթքով զօրացած մեր բարի ու արդար գործերով, մեր սրտում և հոգում ունենալով Տիրոջ Լույսն ու Սերը, շարունակենք քայլել դեպի հավիտենական կյանք: Ամեն:

ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ

«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են…» (Ղուկ. 12:20):

Ղուկասի Ավետարանի 12-րդ գլխի 13-21 համարներում Հիսուս պատմում է մի ագահ մեծահարուստի մասին, որի շտեմարանները լիքն էին ցորենով: Այդ տարի նրա բախտից արտերը շատ բերք են տալիս ու նա, փոխանակ եղածը բաժանելու աղքատներին, մտածում է իր ունեցած հին շտեմարանները քանդելու և նորերը՝ ավելի մեծերը, կառուցելու մասին: Հարուստը ինքն իրենից գոհ ասում է. *«…Ով մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղիր» (Ղուկ. 12:19):* Աստված տեսնելով նրա ագահությունը, ասում է. *«Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա» (Ղուկ. 12:20-21):*

Այս առակով Հիսուս դատապարտում է անմիտ հարուստի անձնասիրությունը, որովհետև որևէ մեկը չի ստեղծվել ապրելու միա՛յն իր և հարստությանը գերի դառնալու համար: Հարուստի պես չպետք է մոռանանք ամենակարևոր պատվիրանը՝ սիրել և խոնարհվել Գերագույն Աստծու առաջ, որպեսզի ուժ ստացած կարողաննք օգնել մեր եղբայրներին:

Այս առակը ցույց է տալիս, թե ագահությունն ինչպես կարող է նվաստացնել մարդուն: Երբեմն

մարդիկ կարծում են, թե երկրային կյանքի հարստությունները մեր անձնական աշխատանքի արդյունքն են միայն, մինչդեռ Աստված է, որ պարգևում է մեզ դրանք: Առաջին Թագավորաց գրքում ասվում է. *«Տերն է աղքատացնում ու հարստացնում, ստորացնում ու բարձրացնում» (Ա. Թագ. 2:7):*

Ագահությունը նյութական վախկոտություն է, որովհետև ագահ մարդն ամեն անգամ դրամ ծախսելիս մտածում է, որ այդ ձևով իր հարստությունը կցամաքի:

Դրամ հավաքողների գումարները շատ անգամ ուրիշներն են կերել, իսկ Ազգին ու եկեղեցուն իրենց գանձերը նվիրողներն անմահացրել են պատմության մեջ և ստացել հազարավորների օրհնությունը:

«Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից, ոչ էլ հարստություն սիրողը՝ իր եկամուտներից, ուստի դա ևս ունայնություն է» (Ժող. 5:9):

Աստծու համար դրամն ամեն ինչ չէ: Երբ փարիսեցիները մեր Տիրոջ մոտեցան և դրամի գործածության մասին հարցեր տվեցին, Նա պատասխանեց. *«Տվե՛ք կայսրինը՝ կայսեր, իսկ Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22:21):*

Այսօր եկեղեցական և համայնքային կյանքում դրամը մեծ տեղ ունի: Երբեմն Եկեղեցին էլ դրամի կարիք ունի իր ծախսերը հոգալու համար: Սա չի նշանակում, թե Եկեղեցին վաճառատեղի է: Կրոնը, հավատքը և աստվածային զորությունը դրամով չեն կարող վաճառվել: Վայ նրանց, որոնք փորձում են Եկեղեցին դրամական անսուրբ գործարքների վայրի վերածել: *«Գրված է՝ «Իմ տունը աղոթքի տուն պիտի*

կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ»,- ասաց Հիսուս և վաճառականներին ու դրամ փոխողներին դուրս վռնդեց Տաճարից *(Մատթ. 21:13):*

Մեր մեծ բանաստեղծ. Հեքիաթասաց Հովհաննես Թումանյանն ագահության մասին մի գեղեցիկ հեքիաթ ունի, որը կոչվում է *«Ոսկու կարասը»*: Ամեն հեքիաթ կյանքից վերցված ճշմարտություն է, սա՝ նույնպես:

«Պատմությունը երկու աղքատ գյուղացիների մասին է, որոնցից մեկը եզներ չունենալու պատճառով իր հողը վարձով է տալիս հարևանին: Այս հողագործը վար ու ցանք անելիս արտում կարաս է գտնում՝ մեջը լիքը ոսկի, ու վազելով մյուս գյուղացու մոտ՝ նրան ասում է, թե այդ ոսկին իր բաժինն է, քանի որ ինքն է այն գտել, իսկ հարևանը առարկում է՝ ասելով, որ ոսկին իրենն է, քանի որ իր հողում է գտնվել: Վիճում են իրար հետ, երկար են վիճում, թե ում պիտի պատկանի ոսկին. շատ կռվելուց հետո որոշում են գնալ թագավորի մոտ, որպեսզի նա որոշի, թե ոսկին ումն է: Թագավորը, լսելով ոսկու մասին, ագահությունից աչքերը խոշոր բացում է ու հանդիմանում նրանց խիստ հրամայական տոնով. «Ո՛չ քոնն է, ո՛չ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է» ու իր մարդկանցով գնում է, որպեսզի այն վերցնի, բայց երբ բացում են կարասի բերանը, տեսնում են, որ նրա մեջ լիքը օձեր են. գյուղացիները գնում են, ոսկի է դուրս գալիս, թագավորն է գնում՝ մեջը լիքը օձեր են հայտնվում:

Թագավորն իր երկրի իմաստուններին հրամայում է բացատրել այս երևույթը: Նրանք ասում են. «Աստված կարասով լիքը ոսկին աղքատ հողագործ-

ներին պարգև է ուղարկել իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում»:

Որպեսզի հողագործները նորից չվիճեն իրար հետ, թե ո՞ւմ է պատկանում ոսկին. նրանց երկու երեխաներին ամուսնացնում են իրար հետ ու յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում և իրենց արդար ու ազնիվ աշխատանքի դիմաց Աստծու կողմից պարգև ուղարկված ոսկին էլ տալիս են նրանց:

Հեքիաթը այսպես է վերջանում. «Բարին էստեղ, չարը էն ագահ թագավորի մոտ»:

Աստված Իր պարգևներն է տալիս, որ մենք բոլորս էլ երջանիկ ապրենք: Մեզ տրված է խելք, իմաստություն, ինչպես նաև Ավետարանի ճշմարտությունները, որ ճանաչենք երկրավոր բարիքները գործածելու լավագույն միջոցները՝ թշվառներին, հիվանդներին, ծերերին ու անօգնական մարդկանց օգնության հասնելու համար:

Եթե մեր բարիքները ճիշտ ձևով օգտագործենք, չենք մտածի, թե որտեղ պահենք դրանք, այլ լավագույն նպատակի համար գործածելով՝ կվարձատրվենք թե' Աստծու և թե' մարդկանց կողմից;

Իզուր չէ, որ մեր հայրապետներն ագահությունը դրել են ոչ թե սովորական մեղքերի մեջ, այլ համարել են յոթը մահացու մեղքերից մեկը՝ *հպարտության, նախանձի, բարկության, ծուլության, շատակերության և ցանկասիրության հետ միասին:*

Մեր ունեցած նյութական հարստությունը եկեք օգտագործենք այն հավատավոր հոգիների համար, որոնք մեր սիրո և օգնության կարիքն ունեն: Աշխատենք նյութական հարստության միջոցով ձեռք բերել ամենակարևորը՝ հոգևոր հարստությունը, որը մեզ կուղեկցի Երկնքի արքայություն ու դեպի անմահություն տանող գաղտնի ճանապարհը: Ամեն:

ԲԱՐԵԿԱՄ

«Հավատարիմ բարեկամը հզոր պատվար է,
իսկ ով գտնի նրան, գանձ է գտել» (Սիրաք 6:14)

Բարեկամ բառը նշանակում է բարին կամեցող: Ամեն մարդ փորձում է գտնել իր նմանին: Ավետարանն ասում է· *«Նմանը իր նմանին է գտնում»:* Ինչո՞ւ է այդպես: Որովհետև ամեն մարդ իր դիմացինի մեջ փորձում է գտնել այն լավ հատկությունները, որոնք ինքն ունի: Հայհոյող մարդը չի կարող բարեկամություն կան ընկերություն անել այնպիսի մեկի հետ, որը չի հայհոյում ու չի կարողանում տանել հայհոյանքը, գիտենալով Աստծու պատվիրանը, *«Մի հայհոյիր»:* Կամ ստախոսը՝ ճիշտ խոսողի, հավատարիմը՝ անհավատարիմի, գողը՝ իր քրտինքով ապրողի հետ և այլն:

Լինելով երկար տարիների հոգևորական և շատ ու շատ ընտանիքներին այցելող, տեսել եմ իրապես հրաշալի ընտանիքներ, որոնք անշահախնդիր կերպով երկար տարիներ մտերմություն են հաստատել իրար հետ զավակներով ու նույնիսկ թոռներով միասին: Այս փաստը իրապես ուրախալի է:

Սակայն կա և սրա հակառակ կողմը: Մարդիկ, որոնք սիրում են ճանապարհից շեղվել, օրենքները շրջանցել, մարդկանց խաբել, կողոպտել, վիրավորել, արհամարհել, նախանձել: Մի խոսքով այսպիսիների հետ բարեկամություն կամ ընկերություն

հաստատել, կնշանակի ընտանիքը քայքայել կամ ժամանակը անցկացնել բանտում:

Հիսուս մեզ ցույց է տալիս իսկական բարեկամության ճանապարհը, խրատելով Իր աշակերտներին.

«Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ: Ոչ թե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի և ձեզ կարգեցի, որ դուք գնաք և պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա, և ինչ էլ որ իմ անունով Հորից խնդրեք, ձեզ տա» (Հովհ· 15:17):

Մեկը կարող է հարց տալ, թե՝ «*Արդյո՞ք մարդը կարիք ունի բարեկամության կամ ընկերության»:* Իհարկե ունի: Մարդը ընկերային լինելով բարեկամության կարիքն ունի թե ուրախության և թե տրտմության մեջ: Իսկ ով մեկի հետ բարեկամական սեր չունի, մարդու բնության սահմանից դուրս է գալիս, որովհետև բարեկամների ընկերակցությամբ ուրախությունը մեծանում է, իսկ տրտմությունը՝ նվազում: Եվ ով չգիտի, թե ի՞նչ է բարեկամությունը, կամ ընկերությունը, նա չգիտի, թէ ի՞նչ է մարդը:

Ճշմարիտ բարեկամությունը կամ ընկերությունը հիմնականում գտնվում է իմաստունների, մարդասերների և առաքինիների մեջ: Ուստի ով մեկի հետ հավատարիմ բարեկամություն ունի, նշանակում է, թե ունի նաև իմաստություն կամ մարդասեր է: Ավելի շատ այդպիսիների հետ են մարդիկ փորձում բարեկամություն կամ ընկերություն անել: Իսկ նա, ով ոչ մի բարեկամ կամ ընկեր չունի, նշա-

նակում է, տվյալ անձը կամ մարդ չի սիրում կամ ինչ որ մի բանի մոլի է:

Ավելի լավ է իմաստուն բարեկամներ ունենալ, քան բազում գանձեր, որովհետև իմաստուն բարեկամը նեղ օրն օգտակար խրատներով օգնում է, իսկ գանձերն ու հարստությունը՝ երբեք: Կեղծ բարեկամը կամ ընկերը անձրևային բարակ առու է, և ինչպես որ առուն անձրևի պակասելու դեպքում ցամաքում է, այդպես և կեղծ բարեկամն է հաջողության սառելու դեպքում՝ անհետանում:

Ձախորդությունը բարեկամության կամ ընկերության փորձաքարն է, և ով որևէ ձախորդության մեջ չի ընկել, չի կարող կեղծ բարեկամին կամ ընկերոջը ճշմարիտից տարբերել: Կեղծ բարեկամը կամ ընկերը հայտնի թշնամուց առավել չար է, որովհետև իմացած թշնամիներից մարդ սովոր է զգուշանալ, իսկ գաղտնի կամ աներևույթ թշնամիներից կասկած չունենալով կարող է չարաչար վնասվել: Եթե կամենում ես, որ մեկը քեզ բարեկամ ու հավատարիմ ընկեր լինի, նախ դու նրա հետ անկեղծ եղիր, որովհետև եթե դու ուրիշների բարին չես ցանկանում, հույս մի ունեցիր, թե ուրիշները քեզ բարիք կկամենան: Հիշեք Ավետարանի ոսկե օրենքը· *«Ինչ որ ուզում եք ուրիշը ձեզ անի, նույնը դուք արեք նրան»:*

Իմաստուն բարեկամների կամ ընկերների խրատն ավելի լավ է պահպանվում, քան բազմահազարանոց զորքը:, Ովքեր իմաստուն բարեկամների խրատն արհամարհում են՝ վտանգների ու փորձանքների մէջ են ընկնում:

«Բարեկամ լինելու փոխարեն մի եղիր թշնամի. քանզի չար անունը իր հետ կբերի ամոթ և նախատինք մեղավորին ու երկերեսանուն: Քաղցր բերանը շատացնում է իր բարեկամներին, քաղցրախոս լեզուն մեծացնում է մտերմությունը: Եթե բարեկամ ես ձեռք բերում, փորձով ձեռք բեր նրան և իսկույն մի վստահիր նրան, քանզի բարեկամ կա, որ բարեկամ է իրեն պետք եղած ժամանակ միայն և քեզ հետ ընկեր չի մնա քո նեղության օրը: Հավատարիմ բարեկամը կյանքի դեղ է, և Տիրոջից երկնչողները միայն կգտնեն նրան: Ով երկնչի Տիրոջից, կհաջողվի բարեկամության մեջ, որովհետև ինչպիսին ինքն է, այնպիսին էլ՝ իր մերձավոր կլինի» (Սիրաք (6:1:17),-ասում է Սիրաքը:

Եթե ուզում ես կյանքում միշտ երջանիկ, ուրախ ու հաջողություններ ունեցող մեկը լինել, բարեկամ կամ ընկեր դարձիր մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որը երբեք քեզ չի վնասի, չի լքի ու քո նեղության ժամանակ մենակ չի թողնի քեզ; Նա քո համար կլինի ամենահավատարիմ բարեկամը կամ ընկերը, ինչպես եղավ Իր աշակերտների համար: Անձանձրույթ աղոթքով փորձիր գտնել այն ճանապարհը, որը քեզ կարող է մոտեցնել Նրան ու ընկեր դարձնել: Ամեն:

Ի՞ՆՉ Է ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ապաշխարությունը Աստծու դիմաց մարդու խղճի հաշվետվությունն է»
Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց

Ապաշխարությունը յոթը խորհուրդներից մեկն *է (Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն, Պսակ, Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում, Կարգ Հեռնադրության):* Կազմված է *«ապա» և «աշխարել»* բառերից« որ նշանակում է՝ ՏՐՏՄԵԼ, ՑԱՎԵԼ, ԶՂՋԱԼ ՀԱՆՑԱՆՔԻ, ՍԽԱԼԻ ԿԱՄ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ:

Ապաշխարությունը խորհուրդ է կոչվում, քանի որ մարդկանց մեղքերից սրբվելը ոչ ոք չի տեսնում, բայց հավատում ենք, որ ապաշխարելով ու զղջալով նրանց մեղքերին թողություն է շնորհվում;

Հովհաննես Մկրտիչը, որ Հիսուսին մկրտեց Հորդանան գետում, քարոզում էր. *«Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»… Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները» նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով…» (Մատթ. 3:2,11):*

Ապաշխարող անհատի առաջին մտահոգությունը իր անձի փրկությունն է:

Մի նշանավոր քարոզիչ հետևյալ միտքն է արտահայտում. *«Եթե Աստված ինձ երևար և ասեր. ցանկանո՞ւմ ես փոխեմ մարդկային բնությունդ և դարձնեմ քեզ հրեշտակի նման անմեղ», կպատասխանեի. «Ոչ, Տեր, թող ինձ մարդկային հատկություններով, միայն թե մեջս չմեռնի սայթաքումներից ու*

անկումներից գիտակցության գալու զգացումը, բարձրանալու ձգտումն ու տենչը»:

Սուրբ Սարգիս Շնորհալին ասում է, «*…Ապաշխարությունը ընկած հոգիները բարձրացնում է և մոտեցնում Աստծուն. մեղքերով կեղտոտված մարմինը լվանում է և ձյունից ավելի սպիտակեցնում: Ապաշխարությունը մեղքերից մեռած հոգին կենդանացնում է և նրան պարգևում հավիտենական անմահություն… Խոստովանությունը և ապաշխարությունը մեզ մոտեցնում են Սուրբ սեղանին և հոգևոր հացին հաղորդակից դարձնելով կատարյալ սրբություն են մեզ պարգևում»:*

Հարց կարող է ծագել, թե՝ *«Մեղանչողը ի՞նչ պիտի անի ապաշխարելու համար».*

ա. Սրտանց զղջա իր գործած մեղքերի համար և վճռի այլևս չմեղանչել.

բ. Ջերմեռանդությամբ և երկյուղածությամբ աղոթի, խոստովանի Աստծու առջև իր մեղքերը և թողություն խնդրի, որովհետև Աստծու գթությունն ու ներողամտությունը մեղավորին առիթ են ընձեռում ապաշխարելու և արդարանալու.

«Եթե արհամարհում ես նրա բարության առատությունը և ներողամտությունն ու համբերությունը չգիտե՞ս. որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում: Եվ քո խստասրտությամբ ու անզիջող սրտով քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա և Աստծու դատաստանի հայտնության օրվա համար. Աստծու, որ հատուցում է յուրաքանչյուրին ըստ իր գործերի»- ասում է Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում (Հռոմ. 2:4-6):

գ. Միշտ հիշի, որ ինքը փրկվել է Հիսուս Քրիստոսի Արյունով և պարտավոր է հետևել Նրա անմեղ կյանքին:

Աղոթքը չմեղանչելու ամենագործնական միջոցն է: Խոստովանությունն ամե-նից առաջ կատարվում է մարդու խղճի մեջ՝ դառնալով ապաշխարության հիմքը, այլ խոսքով հնարավոր չի ապաշխարել առանց խոստովանվելու:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Արքեպս. Հովսեփյանցը հրաշալի կերպով է բացատրում ապաշխարության խորհրդի իմաստը.

«Ապաշխարությունը հոգևոր հաշվետվություն է մեր խղճի և Աստծու առաջ: Հաշվապահության կանոններից մեկն է՝ տարեվերջին մատյանները քննության և ստուգության ենթարկել. այդպիսի ստուգության պիտի ենթարկենք այս ապաշխարության օրերում ոչ միայն մեր արտաքին գործողությունները, այլև նրանց ներքին, ծածուկ շարժառիթներն ու պատճառները … Զորեղ է թշնամին և ներքին, ուստի և նորա դեմ պիտի զինենք և մեր բարոյական բոլոր ուժերը…»:

«Ապաշխարությունը հոգևոր բժշկության առաջին պայմանն է:… Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղավոր միտքը, հոգին նորոգել ներքուստ: ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է ԿՅԱՆՔԻ ՃԱՀԻՃՆԵՐԻՑ ՀԱՆԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՆՈՐ ԱՐԱՐԱԾ ՇԻՆԵԼ»:

«Հին ճգնավորներն ու անապատականները փախչում էին աշխարհից՝ նորա ապա-կանություններից և մոլություններից ազատ լինելու համար. Ծեծում էին իրենց մարմինը. քաղցած և ծարավ էին

մնում՝ մարմինը ճնշելու, և դորա հետ նորա մեղավոր հակումները խեղդելու նպատակով, բայց՝ իզուր: ՊԱՏԵՐԱԶՄԸ ՆԵՐՔԻՆ Է, ԵՎ ՄԻԱՅՆ ՆԵՐՔԻՆ ԶԵՆՔԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԱՔԱՌԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԵՄ: ԱՅԴ ՆԵՐՔԻՆ ԶԵՆՔԸ ԱՊԱՇԽԱՐՈՒ-ԹՅՈՒՆՆ Է, ԶՂՋՄԱՆ ԵՎ ԴԱՐՁԻ ԶԳԱՅՈՒՄԸ...»,

«Անառակ որդին իր բոլոր ունեցածները վատնելուց հետո միայն անդրադարձավ իր գործած մեծ մեղքին և քաջությունը ունեցավ վերադառնալու իր երկիրն ու սրտանց ներում խնդրելու իր հորից: Նա ապաշխարությամբ տիրացավ իր նախկին փառքին, որովհետև կորած էր և գտնվեց, մեռած էր և կենդանացավ: Ապաշխարել նշանակում է անդրադառնալ գործած սխալի և կամ մեղքի, անկեղծությամբ զղջալ, տառապել, ողբալ, խոստովանվել. Հաղորդվել Սբ. Մարմնով ու Արյունով և որոշել մի անգամ էլ չկրկնել նույն ու նմանօրինակ մեղքեր» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք» «Ապաշխարություն»)

Երբ ապաշխարում ենք և փորձում սրբվել մեր հին մեղքերից, պիտի աշխատենք այլևս մեղքեր չգործել և մանավանդ հինը չկրկնել: Հիշենք Ավետարանից Շնացող կնոջ օրինակը. *«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. 8:7): Երբ նրանք այս խոսքերը լսեցին, մեկ առ մեկ սկսեցին դուրս գալ, մնացին միայն Հիսուսն ու կինը: Տերը նրան ասաց. «Ո՛վ կին, ո՞ւր են. Քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Եվ նա ասաց. «Ո՛չ, Տեր»: Հիսուս նայեց նրան ու ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. Գնա, այսուհետև մի մեղանչիր» (Հովհ. 8:10-11):*

Աստված մարդու մեջ ներարկեց Իր խիղճը, որն Աստվածային է: Կյանքում շարժվենք Աստծու տված այս կարևոր շնորհքով մեր նմանների՝ մարդկանց նկատմամբ ու հանգիստ կլինենք և հոգեպես և մտքով: Ամեն:

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանաշնորհ Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ. Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր՝ անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդա-

պետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օրհնության խոսք ……..... 5

Շնորհակալության խոսք ……... 7

Սուրբ Էջմիածնի Խորհուրդը ……... 8

Կենդանի հացը ……... 18

Հիսուսի «Եղբայրներ»-ը ……..... 22

Պահապան հրեշտակներ ……..... 28

Հավատքի ուժը ……..... 32

Կատարելություն …… 37

Սրտանց աղոթքի մասին ……..... 40

Իրական մարգարիտը ……..... 44

Հավատքով բուժվիր ……..... 49

Հոգու աչքերը ……..... 52

Մահացու մեղքերից մեկը՝
ագահությունը ……..... 56

Ճշմարտախոս քրիստոնյան ……..... 60

Ես եմ աշխարհի լույսը ……..... 65

Առաջին հրաշքը ……..... 69

Ծածուկ ողորմությունը ……..... 73

Ո՞վ է մարդը ……..... 78

Ես ձեզ պիտի հանգստացնեմ ……..... 84

Աստծու տված շնորհքը ……..... 88

Հոգու խաղաղությունը ……..... 94
Մեղքի հետևանքները ……..... 97
Աստծու ողորմածությունը ……..... 102
Կյանքը զոհել բարեկամներ
համար ……..... 108
Իմ խոսքերը ճշմարիտ են ……..... 111
Մի մատնիր ……..... 115
Որոմների առակը ……..... 121
Անձնասիրություն ……..... 126
Հավիտյանս հավիտենից …..... 129
Պիղծ ոգին ……..... 133
Համբերություն ……..... 137
Խոնարհության դաս ……..... 143
Մի հայհոյիր ……..... 143
Ս. Պետրոս Առաքյալի
վերադարձը ……..... 156
Ագահության վնասները …..... 160
Բարեկամ ……..... 165
Ի՞նչ է Ապաշխարություն 169
Հեղինակի կենսագրությունը 173
Բովանդակություն ……..... 175